# ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

33ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 10 (1610) ՇԱԲԱԹ, ՄԱՐՏ 23, 2013
VOLUME 33, NO. 10 (1610) SATURDAY, MARCH 23, 2013

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

## ՀՌՈՄԻ 266-րդ ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՊԸ ԵՒ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

***ՏՕՔԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ***

Կաթոլիկ Աշխարհը ընտրեց իր 266-րդ Քահանայապետը, որ շատ սիրելուն չքաւորները, ինչպէս քնորոշեցին լրատուական կայանները, ինքզինք անուանակոչեց Ֆրանսիսքօ Ա. Ֆրանսիսկէն Միաբանութեան հիմնադիր Ֆրանսիս Ասիսի անունով:

115-րդ ընտրեալ կարտինալներ Մարտ 12ին Վատիկանի Սիսթինեան մատրան մէջ մէկտեղուեցան, ընտրելու համար ամբողջ աշխարհի մէջ ապրող աւելի քան մէկ միլիառ 200 միլիոն հաշուող կաթոլիկ հաւատացեալներու նոր քահանայապետը:

76 տարեկան կարտինալ Խոզէ Մարիօ Պէրկոլիոնն էր ան, որուն ընտրութեան ուրախալի լուրը կայծակի արագութեամբ տարածուեցաւ շնորհիւ ընտրական երկրորդ փուլի վերջաւորութեան, ծխնելոյզէն բարձրացող սպիտակ ծուխի ուրախանալի ազդանշանի եւ ամբողջ Հռոմով ղօղանջող զանգակներու ներքոյ:

Նորընտիր Պապին անունը՝ Ֆրանսիսքօ Ա. յայտարարեց կաթողիկէ եկեղեցւոյ երիցագոյն կարտինալ Ժան Լուի Թիւրոն, որուն յաջորդեցին Պապական պահակազունդի տողանցքը, ապա՝ իտալական փողերախումբի հնչեցուցած Վատիկանի պետութեան քայլերգը, որոնք տօնական մթնոլորտ ստեղծեցին Սրբ. Աթոռի շուրջ:

Նորընտիր Պապը 76 տարեկան, Արժանթինցի մըն է, որ կը պատկանի Ժէզուիթ միաբանութեան: Իր մասին յայտնուած կարծիքները կուգան յստակ կերպով քնորոշելու իր մտաւոր, հոգեւոր եւ մարդկային տիպար անձնաւորութիւնը: Իր հայրը իտալացի գաղթական մըն է:

1992ին, Մարիօ Պէրկոլիոն ձեռնադրուած է եպիսկոպոս, իսկ 1998ին՝ ձեռամբ Յովհաննէս – Պօղոս Բ. Պապին, կ'օծուի Պուէնոս Այրէսի Արքեպիսկոպոս, շուտով, 2001-ին, դառնալու համար Արժանթինի կարտինալ: Ընդգծենք, որ Նորընտիր Պապը հրաժարեալ Բենեդիկոս 16-րդ Քահանայապետի մտերիմ կարտինալներէն մէկը եղած է եւ վերջին մօտ 1000 տարիներու ընթացքին լատին Ամերիկայէն ընտրուած առաջին պապը:

Ֆրանսիսքօ Ա պապը, արդարեւ ճանչցուած է իր օրինակելի համեստութեամբ, մարդասիրութեամբ, աղքատասիրութեամբ եւ բարոյական արտակարգ արժանիքներով: Ան, իր ընտրութենէն առաջ

Շար.ը էջ 18

## ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ ԵՒ ՐԱՖՖԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ՓՈԽԱԴԱՐՁ ԱՄԲԱՍՏԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԸ ԿԱՏԱՐԵՆ ԻՐԱՐ ՀԱՍՑԷԻՆ

*Մարտ 18-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեան խումբ մը լրագրողներու հետ հանդիպման ժամանակ ներկայացուց նախագահական ընտրութիւններէն յետոյ իր եւ Րաֆֆի Յովհաննիսեանի հանդիպման մանրամասնութիւնները:*

*Նախագահական նոր ընտրութիւններու, երկրորդ փուլի եւ խորհրդարանը լուծարելու առաջարկներու մերժումը ստանալէ ետք, Րաֆֆի Յովհաննիսեան, ըստ Սերժ Սարգսեանի, հարցուցած է իրեն՝ ի՞նչ պէտք է ընէ այս իրավիճակին մէջ:*

*Սերժ Սարգսեանն առաջարկած է երեք ճանապարհ: Առաջինը՝ Րաֆֆի Յովհաննիսեան կը մնայ Ազատութեան հրապարակի վրայ, կը շարունակէ պնդել, որ ստացած է քուէներու 80 տոկոսը, ինքզինք կը հռչակէ նախագահ եւ կը փորձէ ստեղծել իշխանութեան այլընտրանքային կառոյցներ: Այդ պարագային իրաւապահ կառոյցները պիտի կատարեն իրենց վերապահուած պարտականութիւնները:*

*Երկրորդ՝ Րաֆֆի Յովհաննիսեան, շարունակելով պնդել, որ ընտրութիւնները արդար չեն եղած, որ ինք իսկականին մէջ հաւաքած է պաշտօնականէն աւելի բարձր տոկոսներ, կ'ուժեղացնէ իր կառոյցները, կը մասնակցի Երեւանի աւագանիի ընտրութիւններուն, կը ստանայ մեծամասնութիւն, կը դառնայ Երեւանի քաղաքապետ եւ կը ղեկավարէ հանրապետութեան մէկ երրորդը:*

*Երրորդ ճանապարհը՝ կը դադարի ընդդիմութիւն ըլլալէ՝ ներգրաւուելով իշխանական կառոյցներու մէջ եւ կը պայքարի կոռուպցիայի ու արտագաղթի դէմ, ինչպէս որ խոստացած էր ընտրարշաւի ժամանակ:*

*ՀՀ Նախագահը յայտնեց, որ այս երրորդ առաջարկի վերաբերեալ Րաֆֆի Յովհաննիսեան ճշդեց՝ արդեօք խօսքը կոալիցիայի՞ մասին է: Որուն Սերժ Սարգսեան պատասխանած է, որ բոլոր քննարկումները տեղի կ'ունենան Րաֆֆի Յովհաննիսեան իր սկզբունքային դիրքորոշումը յայտնելէն յետոյ:*

Շար.ը էջ 4

## ՍԴՀԿ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԿԻԼԻԿԻՈՅ ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄՕՏ



*ՍԴ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւնը ներկայացնող պատուիրակութիւնը Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսին հետ*

*Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւնը ներկայացնող պատուիրակութիւն մը, գլխաւորութեամբ վարչութեան ատենապետ Ընկ. Սեդրակ Աճեմեանի Մարտ 15-ին այցելեց Անթիլիասի մայրավանք, ուր հանդիպում ունեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսին հետ:*

*Պատուիրակութեան մաս կը կազմէին կեդրոնական վարչութեան փոխատենապետ, Լիբանանի Խորհրդարանի անդամ Ընկ. Սեպուհ Գալփաքեան, Ընկ. Տոքթ. Եղիկ Ճէրէճեան, Ընկ. Վազգէն Գալթաքճեան եւ Ընկ. Յակոբ Տիգրանեան:*

*Մօտ երկու ժամ տեւած խորհրդակցական հանդիպումի ընթացքին լայնօրէն քննարկուեցան յատկապէս Ցեղասպանութեան 100 ամեակի ոգեկոչման առնչուող աշխատանքները, սուրիահայութեան առջեւ ցցուած դժուարութիւնները եւ օժանդակութիւններու փոխանցումը շարունակելու հրամայականը, ինչպէս նաեւ Հայաստան-Սփիւռք յարաբերութեան հետ առնչուած խնդիրները:*

*Վեհափառ Հայրապետը եւ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւնը կարեւորութեամբ շեշտեցին ազգային պահանջատիրութիւնը աւելի ամրապնդելու եւ միասնական ոգիով հանդէս գալու անհրաժեշտութիւնը, առաջնահերթութիւն նկատելով սուրիահայութեան օժանդակելու աշխատանքը:*

## ՀԱԽ-Ի ԶՕՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՎԱՅԵԼՈՂ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ՝ ԿԼԵՆՏԵԼԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

*Ապրիլ 2-ին, Կլէնտէլ քաղաքի ընտրութիւններուն առթիւ ՍԴՀԿ Հայ Ամերիկեան Խորհուրդը (ՀԱԽ) հրապարակեց իր զօրակցութիւնը վայելող թեկնածուներու ցանկը:*

*Իւրաքանչիւր թեկնածուի հետ առանձին հանդիպումներ ունենալով եւ ուսումնասիրելով անոնց դիրքորոշումները՝ քաղաքի բնակչութիւնը յուզող բազմաթիւ հարցերու շուրջ, ՀԱԽ որոշած է զօրակցիլ, Քաղաքապետական Խորհուրդի երկու անդամներուն՝ Արա Նաճարեանին եւ Լորա Ֆրիտմընին, ինչպէս նաեւ հասարակական գործիչ Շահէ Քորողլեանին:*

*Նաճարեան եւ Ֆրիտմըն վարած են քաղաքապետի պաշտօնը, իսկ Քորողլեան մաս կը կազմէ*



*քաղաքի յանձնաժողովներէն մէկուն:*

*Նոյն օրը տեղի պիտի ունենան նաեւ Կլէնտէլի Ուսումնական Խորհուրդի ընտրութիւնները:*

*Այս առթիւ ՀԱԽ իր զօրակցութիւնը կը յայտնէ թեկնածու՝ Դոկտ. Արմինէ Կարապետեանին, ինչպէս նաեւ Ուսումնական Խորհուրդի ներկայիս անդամներ՝ Կրէկ Գրիգորեանի եւ Ճոյլին Ուակնըրի վերընտրութեան:*

# ՀԱՅԿԱԿԱՆ ԴԻՒԱՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԼՌՈՒԹԵԱՆ ԳԻՆԸ

*ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ*

*Օրերս Հայաստանում առաջին անգամ նշուեց դիւանագէտի միջազգային օրը: Այդ առիթով Հայաստանի արտգործնախարարը նոյնիսկ հանդիսաւոր հարցազրոյց տուեց Հանրային Հեռուստաընկերութեանը, փորձելով ներկայացնել դիւանագիտական աշխատանքի դժուարին ու յաճախ անտեսանելի նրբերանգները:*

*Անկախ Հայաստանի դիւանագիտութիւնը յարաբերական հասակցութիւն է: Բանն այն է, որ դա զգալիօրէն կառուցուել է Խորհրդային Հայաստանի կադրային պոտենցիալի վրայ: Թէեւ անկախ դիւանագիտութեան քսան տարիների ընթացքում Հայաստանն ունեցել է արեւմտեան սփիւռքից եկած երկու պաշտօնական եւ մէկ ոչ պաշտօնական արտգործնախարար՝ Րաֆֆի Յովհաննիսեան, Վարդան Օսկանեան, Ժիրայր Լիպարիտեան, այդուհանդերձ Հայաստանի ԱԳՆ-ն, մեծ հաշուով, ամբողջութեան մէջ շարունակել է մնալ խորհրդային ԿԳԲ-ի երկրորդական ճիւղերից մէկը:*

*Նաեւ դա է կարեւոր պատճառներից մէկը, որ Հայաստանն իր քսանամեայ արտաքին քաղաքական ուղեգծում այդպէս էլ չի կարողացել դրսեւորել ինքնուրոյնութեան սկզբունքային մի աստիճան, երբ յստակ կը լինէր, որ գործ ունենք պետական շահին միտուած ռազմավարութեան, ոչ թէ իշխանութիւնը իւրացրած սեփականատէրերի խաւի անձնական շահերի սպասարկման գործընթացի հետ:*

*Բոլորովին վերջերս, օրինակ, հրապարակուեց բաւական հետաքրքիր մի վիճակագրութիւն, որտեղ պատկերուած էր Ատրպէյճանին զէնքի վաճառքի վերջին տասնամեակի պատկերը: Ուշագրաւ է, որ Ատրպէյճանին զէնք վաճառող առաջատար երկրների շարքում էին պետութիւններ, որոնցից երեքը ԱՊՀ-ում Հայաստանի գործընկերներն են, իսկ նրանցից երկուսը՝ ՀԱՊԿ-ում Հայաստանի դաշնակիցը:*

*Խօսքը Ռուսաստանի, Պելառուսի եւ Ուքրանիայի մասին է: Նրանք վերջին տասնամեակում Ատրպէյճանին զէնքի եւ սպառազինութիւնների մատակարարման առաջատարներն են: Հայկական դիւանագիտութիւնը ներկայացուցիչներ ունի այդ բոլոր երկրներում: Որեւէ անգամ այդ ներկայացուցիչները մտահոգութիւն արտայայտե՞լ են Ատրպէյճանին սպառազինութիւնների տրամադրման կապակցութեամբ:*

*Օրինակ, Ուքրանիայում Հայաստանի դեսպան Անդրանիկ Մանուկեանը բոլորովին վերջերս կոչ էր անում հայ գործարարներին հետաքրքրուել Ուքրանիայի բիզնես միջավայրով եւ ներդրումներ անել, քանի որ դաշտը զգալիօրէն ազատ է: Մանուկեանն ինքն անկասկած իր բիզնեսներով օրինակ ծառայած կը լինի հայաստանցի գործարարներին: Բայց չի յիշւում որեւէ դէպք, որ դեսպան Մանուկեանը Ուքրանիայի իշխանութեան առաջ բարձրացրած լինէր Ատրպէյճանին զէնքի եւ սպառազինութեան վաճառքի խնդիրը, այն դէպքում, երբ այդ զէնքն ու սպառազինութիւնն ուղղւում է դէպի Հայաստան: Իսկ Անդրանիկ Մանուկեանը այդ հարցը բարձրացնելու յանձնարարութիւն երբեւէ ստացե՞լ է Երեւանից, թէ Երեւանից նա ստանում է միայն սեփական բիզնեսների եկամտաբերութեան եռամսեակային տուեալները:*

*Ի՞նչ են անում Բելոռուսում եւ Ռուսաստանում Հայաստանի դեսպանները: Օրինակ, ներկայում Ռուսաստանում Հայաստանի դեսպան Օլեգ Եսայեանը մինչ այդ Բելոռուսում էր դեսպան: Այնտեղ նա միանգամայն բարեյաջող լռում էր: Ըստ երեւոյթին, այդ վարպետ լռութեան համար նրա «ռանգը» բարձրացրեցին եւ տեղափոխեցին Մոսկուա, որտեղ նա փոխարինեց կոմպոզիտոր դեսպան՝ վիրտուոզ լռող Արմէն Սմբատեանին:*

*Հայաստանը կարծես թէ լռութիւնը խախտեց 2012 թուականի Դեկտեմբերին, երբ Մոսկուայում տեղի ունեցաւ ՀԱՊԿ վեհաժողովը: Սերժ Սարգսեանն աննախադէպ համարձակութեամբ յայտարարեց, որ ՀԱՊԿ երկրները չպէտք է անեն քայլեր, որոնք հակասում են դաշնակից Հայաստանի շահին:*

*Մանրամասն եւ յստակ չէր իհարկէ, բայց բաւական թափանցիկ ու պարզ էր: Բայց այդ յայտարարութիւնը կարծես թէ ընդամէնը մի փոքր աղմուկ էր, որպէսզի առաւել ընդգծուի լռութեան քաղաքականութիւնը: Ցամենայն դէպս, դրանից բացի, չի նկատւում որեւէ ռազմավարական ուղեգիծ, որը վկայի Ատրպէյճանին զէնքի մատակարարումների խնդիրը քաղաքական օրակարգի հարց դարձնելու Հայաստանի որեւէ նպատակադրման մասին:*

*Եթէ Հայաստանը որեւէ բան չի պահանջում Ատրպէյճանին զինող իր դաշնակիցներից, բնական է, որ որեւէ բան չի կարող պահանջել նաեւ Իսրայէլից, որն Ատրպէյճանին զէնքի եւ սպառազինութեան հիմնական մատակարար երկրներից է: Ինչպէս նաեւ այլ երկրներից, որոնք «լիցքաւորում» են Պաքուի ռազմական հռետորաբանութեան «խօսակցական հաշիւը»:*

*Ընդ որում, յատկանշական է, որ այդ կապակցութեամբ հայկական դիւանագիտութիւնը չի ենթարկւում նաեւ ներքին քաղաքական ճնշման: Հայաստանի քաղաքական դասի համար կարծես թէ այդ խնդիրը եւս գոյութիւն չունի, եւ այդ դասը հանգիստ թոյլ է տալիս, որ շարունակուի պաշտօնական լռութիւնն ու այն խախտուի ընդամէնը լոկալ աղմուկով՝ լռութեան գինը բարձրացնելու համար:*

*«ԼՐԱԳԻՐ«*

# ԿՈՆԿՐԵՏ ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆՆԵՐ

*ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ*

*Մենք՝ հայերս, սիրում ենք քննարկել գլոբալ հարցեր՝ «սրա վերջն ի՞նչ է լինելու» շարքից: Այդ վերացական քննարկումներում պարտադիր պէտք է լինեն «ռեժիմ» եւ «ժողովուրդ» հասկացութիւնները, որոնք, Աստուած գիտէ, թէ ինչ են իրականում նշանակում: Ես, ցաւօք, չեմ կարողանում բարձրանալ աբստրակցիայի այդ մակարդակի վրայ եւ այդ պատճառով մտահոգուած եմ կոնկրետ մարդկանցով եւ կոնկրետ խնդիրներով:*

*Ես չեմ ուզում, որ դասախօսներին ազատեն աշխատանքից՝ իրենց քաղաքական դիրքորոշումը յայտնելու համար: Ես չեմ ուզում, որ Սեւանի քաղաքապետի մասին իր կարծիքը յայտնած կնոջը քարշ տան ոստիկանութիւն: Ես չեմ ուզում, որ իշխանական թիմում լինեն «ընտրութիւնների ժամանակ ձայներ բերող» տղերք կամ խմբեր, որովհետեւ յետագայ 5 տարիների ընթացքում այն «տղերքն» ու խմբերը շատ թանկ են նստում պետութեան եւ հենց իշխանութեան վրայ: Ես չեմ ուզում, որ Սերժ Սարգսեանի անունազգանունը գրուի փոքրատառով, որովհետեւ նախ՝ դրա մէջ որեւէ հերոսականութիւն չեմ տեսնում, դա այսօր միանգամայն անվտանգ զբաղմունք է, երկրորդ՝ դրանից ո՛չ երկրից գնացող մարդկանց թիւն է պակասում, ո՛չ էլ կոռուպցիան: Ես չեմ ուզում, որ Թոխմախի Մհերը կամ Շմայսը լինեն պատգամաւորներ՝ զբաղեցնելով աւելի գրագէտ եւ աւելի բանիմաց մարդկանց տեղը: Ես չեմ ուզում, որ Սուրիկ Խաչատրեանը լինի մարզպետ, որովհետեւ հենց նման մարդկանց պատճառով են դատարկւում մեր քաղաքներն ու գիւղերը: Ես չեմ ուզում, որ մի թեկնածուի կողմնակիցները միւս թեկնածուի կողմնակիցներին համարեն թշնամի, սադրիչ, ծախուած եւ այլն: Ես չեմ ուզում, որ հրապարակներում կազմուեն «պրոսկրիպցիոն» ցուցակներ՝ այն մարդկանց, ովքեր «ժողովրդի» հետ չէին եւ «ռեժիմի» դէմ չէին պայքարում: Ես չեմ ուզում, որ «ստուերային», իսկ այնուհետեւ՝ ընդդիմութեան յաղթանակի դէպքում «լուսաւոր» կառավարութեան կազմի մէջ լինեն մարդիկ, որոնք առաւել բարձր են գոռում հանրահաւաքներում. դրա փորձը մենք մասամբ ունենք՝ 1988-ի Շարժումից յետոյ: Ես ուզում եմ, որ Տիգրան Առաքելեանը դուրս գայ բանտից: Վերջապէս, ես շատ եմ ուզում, որ մեր բոլոր քաղաքական գործիչները գոնէ մի քիչ նման լինեն տիկին Անահիտ Բախշեանին:*

*Այդ ամենին քաղաքականացուած եւ վերացական մտածողութեան բարձունքները նուաճած իմ հայրենակիցները կը պատասխանեն. «Ամէն ինչ լաւ կը լինի, երբ ժողովուրդը տապալի ռեժիմը»: Շատ հնարաւոր է: Հրաշալի կը լինէր, որ «ժողովրդի» եւ «ռեժիմի» այդ (յուսով եմ՝ խաղաղ) մրցամարտից յետոյ Հայաստանում բարեկեցիկ եւ երջանիկ կեանք սկսուէր: Բայց չեմ կարծում, որ այն կը լինի կատարելապէս երջանիկ, այնքան երջանիկ, որ դարձեալ պէտք չլինի մտածել կոնկրետ մարդկանց եւ կոնկրետ երեւոյթների մասին:*

*«ԱՌԱՒՕՏ»*

# ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆԻՑ ԴՈՒՐՍ

*Հետաքրքիր ժամանակներ են. հացադուլ ու նստացոյց, ստուերային կառավարութիւն ու հրապարակային քննարկումներ, այլընտրանքային ինաուգուրացիա, գաղտագողի ասուլիս: Կարծես թէ քաղաքակիրթ ու քաղաքական գործընթացներից դուրս ենք մնացել: Ամէն ինչ վերածուել է խեղկատակութեան:*

*Ապաքաղաքական ու անիմաստ պրոցէսները միահիւսուել են, կորցրել տարրական տրամաբանութիւնը: Եւ ամենատարօրինակն այն է, որ բնականոն շաւղից դուրս է ընկել ինչպէս իշխանութիւնը, այնպէս էլ ընդդիմութիւնը: Ասէնք՝ մեծ հաշուով կարո՞ղ էք բացատրել, թէ ինչու է Րաֆֆի Յովհաննիսեանը հացադուլ անում, ի՞նչ ակնկալիքներ ունի այդ հացադուլից եւ ինչպէ՞ս է պատրաստւում դադարեցնել այն՝ առանց սեփական վարկը վտանգելու եւ հասարակական ապատիայի հերթական ալիքը բարձրացնելու: Կամ՝ ինչո՞ւ է երկրի նախագահը հասարակութեան կողմից իրեն առաջադրուած հարցերին պատասխան տալու փոխարէն իր կողմից կառավարելի լրատուամիջոցների ներկայացուցիչների հարցերին պատասխանում: Եւ այդ ասուլիսից ժամեր անց ոչ մի տեսանիւթ չի հեռարձակւում՝ հաւանաբար նախագահականում նիւթը մշակելը ժամանակ է պահանջում:*

*Հնարաւոր չէ հարց չտալ նաեւ Ազատութեան հրապարակում անուններ հնչեցնող, առաջարկներ անող անձանց եւ Սերժ Սարգսեանի ձեւակերպումով չասել՝ դա անում էք, որ ի՞նչ լինի: Մեր հասարակութիւնն առանց այն էլ շատ է բեւեռացած՝ ինչ-որ անձանց առանձնացնելը, միւսներին չյիշատակելն աւելի է խորացնելու մարդկանց միջեւ եղած անջրպետը, նոր թիրախներ է նշմարելու, նեղացողներ, մերժողների նոր բանակ է ձեւաւորելու: Եւ վերջապէս, Ապրիլի 9-ի արարողութիւնը, որի հետ այնքան յոյսեր է կապում ընդդիմութիւնը: Իսկ եթէ ձեր ծրագրած սցենարը տապալուի, ի՞նչ էք անելու, ի՞նչ պատասխան էք տալու րոպէական արդիւնք ակնկալող ժողովրդին:*

*«ՀՐԱՊԱՐԱԿ»*

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

**MASSIS Weekly**
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $80.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $225.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

**ՀԱՅԱՍՏԱՆ**

## ԱՆԴՐԻԱՍ ՂՈՒԿԱՍԵԱՆԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՆՀՆԱԶԱՆԴՈՒԹԵԱՆ ԿՈՉ Է ԱՆՈՒՄ

*Նախագահի նախկին թեկնածու Անդրիաս Ղուկասեանը, ով քուէարկութեան արդիւնքները վիճարկում էր Սահմանադրական դատարանում, կարծում է՝ դատարանի որոշումից յետոյ, յետընտրական այս փուլում է իրական ընտրութիւնը տեղի ունենալու:*

*«Աւարտուեցին Սերժ Սարգսեանի կողմից կազմակերպուած շինծու ընտրութիւնները: Սահմանադրական դատարանի որոշումը այդ շինծու ընտրութիւնների գործընթացում դրեց վերջակէտ: Այդ օրուանից Հայաստանում սկսուեց իսկական ընտրութիւնների գործընթացը, որովհետեւ Ապրիլի 9-ին մեր հանրութիւնը պիտի որոշի՝ ինքը ենթարկւում է այս ոչ թափանցիկ եւ կասկածի ճանապարհով ձեւաւորուած պետական մարմնին, թէ՝ ոչ», - Մարտի 18-ին լրագրողների հետ հանդիպմանը յայտարարեց Ղուկասեանը:*

*Խօսքը, մասնաւորապէս, քաղաքացիական անհնազանդութեան մասին է, որը, ըստ Ղուկասեանի, Հայաստանի սահմանադրութիւնը թոյլ է տալիս:*

*«Ամենապարզ միջոցը հարկեր չվճարելն է, եւ եթէ առաջին եռամսեակի արդիւնքով հարկերը չվճարուեն ռեժիմին, ռեժիմի ապագան կը լինի շատ կարճ.*



**Նախագահի նախկին թեկնածու Անդրիաս Ղուկասեան**

*հասկանալի է, որ ռեժիմը կարողանում է պահպանել իրեն ի հաշիւ նրան, որ տնօրինում է մեր պետութեան բիւջէն», - ասաց նախագահի նախկին թեկնածուն:*

*Եթէ անգամ նախագահ Սերժ Սարգսեանը այցելի հացադուլի մէջ գտնուող Րաֆֆի Յովհաննիսեանին, ըստ Ղուկասեանի, կոմպրոմիս այլեւս չի կարող լինել:*

*«Էապէս շատ տարբեր են կողմերի պատկերացումը երկրի անհրաժեշտութիւնների մասին: Իշխող կուսակցութիւնը ամէն ինչ անում է իր ձեռքի տակ գտնուող ռեսուրսի տեսակէտից. այդ ռեսուրսը իշխանութիւնն է՝ «այսպէս բաժանենք, թէ այնպէս բաժանենք», - ասաց նա:*

## ԶՈՀՐԱԲԵԱՆԸ «ՍԱՏԱՆԻՍՏԱԿԱՆ» Է ՀԱՄԱՐՈՒՄ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԵՐԴՄՆԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ

*Իշխող Հանրապետական կուսակցութեան փոխնախագահ Ռազմիկ Զոհրաբեանը «սատանիստական երեւոյթներ» է տեսնում Ապրիլի 9-ին Ազատութեան հրապարակում «այլընտրանքային ինաուգուրացիա» անցկացնելու մտադրութեան մէջ:*

*«Ազատութիւն» ռադիոկայանի հետ հարցազրոյցում «Զոհրաբեանը համոզմունք յայտնեց, որ Րաֆֆի Յովհաննիսեանի գլխաւորած շարժման հետեւում «կանգնած է աղանդաւորական կազմակերպութիւն»:*

*«Նրանց թիկունքում, ես արդէն սկսում եմ համոզուել, որ կայ ինչ-որ աղանդաւոր[ական] կազմակերպութիւնը, որը հրահրում է եւ կառավարում է իրենց», - ասաց Զոհրաբեանը՝ յաւելելով, որ դա կարող է լինել «է՛ւ դրսից, է՛ւ ներսից». - «Կարծում եմ, որ նման մի կազմակերպութիւն կայ, որ այս մարդկանց չի թողնում, որ սրանք հանգստանան»:*

*ՀՀԿ-ի փոխնախագահը շարունակեց. - «Ի՞նչ է նշանակում, ասենք, Ազատութեան հրապարակում ինաուգուրացիա անել, Րաֆֆիին ընտրել նախագահ: Սա ինչ-որ սատանայական ծիսական կարգեր են, որոնք հենց աղանդաւորութեան հետ են կապուած: Հաւասարութեան, արդարութեան, ազատութիւնների լօզունգների տակ տեղի են ունենում քաղաքակրօնական ինչ-որ ծիսակարգեր, որը ես կ՛անուանէի սատանիստական»:*

*Ազատութեան հրապարակում վերջին օրերին տեղի ունեցող իրադարձութիւնների մասին Զոհրաբեանն ասաց. - «Առ այս պահը մեր երկրում, լինենք օբիեկտիւ, լինենք անկեղծ՝ հանրահաւաքներով իշխանութիւն չի փոխուել: Բայց դա չի նշանակում, որ եթէ քաղաքական տուեալ ուժը գտնում է, որ այս կերպ պիտի իր բողոքը արտայայտի»:*

*«Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան ղեկավար անդամ Նաիրա Զոհրաբեանը, մինչդեռ, տուեբային կառավարութեան ձեւաւորման մէջ դատապարտելի ոչինչ չի տեսնում. - «Հիմա անընդհատ զուգահեռներ են անցկացնում, որ Րաֆֆին փորձում է նմանակել Մահաթմա Գանդիի շարժման էլեմենտները, այո, Գանդին կառավարութիւն ձեւաւորեց փողոցում: Նաեւ արեւմտեան քաղաքական մշակոյթում դա ընդունուած ձեւ է, նորմ է»:*

## ԱԱԾ-Ն ԵՒ ՊԵԿ-Ը «ՍԻՎԻԼԻԹԱՍՈՒՄ» ՆՈՐ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ ԿԸ ՍԿՍԵՆ

*Հայաստանի Հանրապետութեան կառավարութեանն առընթեր ազգային անվտանգութեան ծառայութիւնը (ԱԱԾ), որը «փողերի լուացման» յատկանիշներով «Սիվիլիթաս» հիմնադրամին եւ նրա հիմնադիր Վարդան Օսկանեանին առնչուող քրէական գործ էր յարուցել 2012թ. Մայիսի 25-ին, որոշել է «Սիվիլիթաս» հիմնադրամից պահանջել տուեալներ եւ փաստաթղթեր 2012 եւ 2013 թուականների ֆինանսաւորման աղբիւրների, ինչպէս նաեւ դրանց տնօրինման վերաբերեալ: Այս մասին նշւում է «Սիվիլիթաս» հիմնադրամի տարածած յայտարարութեան մէջ:*

*Ըստ հաղորդագրութեան՝ ԱԱԾ-ն Հիմնադրամից պահանջում է նաեւ յայտնել, թէ 2009- 2011 թուականներին անձերի եւ կառավարութիւնների կողմից 41 մեծ եւ փոքր նուիրատուութիւնների եւ դրամաշնորհների գումարները ինչպէս են ծախսուել կամ տնօրինուել:*

## ԿԱՐԱՊԵՏ ՌՈՒԲԻՆԵԱՆ.- «ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԸ ՇԱՏ Կ'ՈՒԶԵՆԱՅ, ՈՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՄՏՑՈՒԻ»

*Սերժ Սարգսեանը շատ կ՛ուզենայ, որ սահմանադրական բարեփոխում արուի եւ խորհրդարանական կառավարում մտցուի: Այդ մասին Մարտի 19-ին, Ազատութեան հրապարակում ընթացող քաղաքացիական խորհրդի շրջանակներում յայտարարել է ԱԺ նախկին փոխնախագահ Կարապետ Ռուբինեանը:*

*Վերջինիս խօսքով, սա Սերժ Սարգսեանի երկրորդ պաշտօնավարումն է, եւ նա, ըստ Սահմանադրութեան, չի կարող երրորդ անգամ կառավարել: «Շատ կ՛ուզենայ, որ մի ռեֆորմ արուի, որ հնարաւորութիւն ունենայ պաշտօնավարել այս երկրում: Բայց դա չի նշանակում, որ պիտի հակառակուենք այդ առումով: Կարծում ենք, որ այդ ռեֆորմը պէտք է լինի, իսկ ճիշդ անելու դէպքում կը բացառենք նման մարդկանց յայտնուելը իշխանութեան մէջ»,- նշել է Ռուբինեանը:*

*Նա յիշեցրել է Հայաստանի նորագոյն շրջանի պատմութիւնը, երբ Գերագոյն խորհուրդը դարձաւ իրապէս գործուն մարմին՝ դնելով Հայաստանի պետականութեան հիմքերը:*

*«Ունեցել ենք երեք նախագահ, եւ, ցաւօք սրտի, պէտք է արձանագրենք, որ նախագահական կառավարման փորձը անյաջող է: Ունեցել ենք յաջող խորհրդարանական կարճ կառավարման փորձ: Լեւոն Տէր-Պետրոսեանի դէպքում, իհարկէ նշելով բոլոր ձեռքբերումները, նշեմ նաեւ մի ցաւալի կոպիտ սխալ, որը ինքն ընդունեց հինգ տարի առաջ, երբ ներողութիւն խնդրեց Սերժ Սարգսեանին եւ Ռոբերդ Քոչարեանին Հայաստան բերելու համար: Խնդիրը ոչ թէ անձերի մէջ էր, այն ժամանակ ով կը մտածէր, որ նման որակներ կը դրսեւորեն»,-*



**ԱԺ նախկին փոխնախագահ Կարապետ Ռուբինեան**

*նշել է Ռուբինեանն ու յաւելել. «Մինչ այդ մենք վարում էինք քաղաքականութիւն, որ Ղարաբաղն անկախացել է, եւ բոլոր ատեաններում խօսում էին, որ պատերազմում է Ղարաբաղը: Ռոբերդ Քոչարեանը, լինելուց Ղարաբաղի նախագահ, համաձայնուեց գալ եւ դառնալ վարչապետ: Դրանով լուրջ հարուած հասցուեց բանակցային գործընթացին »: Ըստ Ռուբինեանի, այդ նշանակումը երկրի նախագահը ոեւէ մէկի հետ չի քննարկել, բացի նեղ շրջապատի անձանցից:*

*«Հինգ տարի է անցել նրա կառավարումից յետոյ, եւ Forbes-ի տուեալներով՝ մեր երկրի ամենահարուստ մարդն է: Ինչի՞ հաշուին, եթէ ոչ թալանի: Նոյնը Սերժ Սարգսեանն հիմա մէկ օլիգարխ է: Խորհրդարանը դարձել է անատամ կառոյց, որը դակում է կառավարութեան որոշումները»,- արձանագրել է Ռուբինեանը՝ ամփոփելով, որ միանձնեայ ղեկավարման սկզբունքը, որին գումարւում են խորհրդային կաղապարները, Հայաստանի համար արդիւնաւէտ լինել չի կարող:*

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՉԵՆ ՎԱԽԵՆԱՅ ԽԱՂԱՂ ԸՆԴԴԻՄՈՒԹԻՒՆԻՑ»

*Հայաստանի իշխանութիւնները խաղաղ ընդդիմութեան մէջ վտանգ չեն տեսնում, Մարտի 19-ին, լրագրողներին յայտնել է քաղաքագէտ Երուանդ Բոզոեանը:*

*Ըստ նրա՝ պէտք չէ նախկին եւ ներկայ նախագահներին դասակարգել «չարի» եւ «բարու», ինչպէս որ արւում է յաճախ: «Շատերը բերում են 2008թ. Մարտի 1-ի օրինակը՝ պնդելով. Ռոբերդ Քոչարեանը կոտորեց ցուցարարներին, իսկ Սերժ Սարգսեանը նրանց ձեռք չի տալիս, նշանակում է՝ նա աւելի բարի է: Եւ այդ մարդկանցից ոչ ոք չի ընդունում այն, որ այդ երկու մարդը նոյն թիմն են: Եւ ինչ որ արել է մէկը, կարող է անել եւ միւսը, եթէ իր համար այնպիսի վտանգ զգայ, ինչպիսին 2008թ. էր: Սակայն հարցն էլ հենց այն է, որ այժմ նման վտանգ չկայ», - ասել է Բոզոեանը:*

*Նա նշել է, որ անհրաժեշտ է յստակ հասկանալ. ներկայիս իշխանութիւնը զիջումների չի գնայ, եթէ իր առաջ խաղաղ ընդդիմադիրների տեսնի: «Իսկ եթէ այդ իշխանութիւնն իր համար վտանգաւոր ընդդիմութիւն տեսնի, վստահ եղէք, որ կ՛անի նոյնը, ինչ որ Քոչարեանը», - ընդգծել է Բոզոեանը: Նա յաւելել է, որ այժմ իշխանութիւնն այն քաղաքական իրավիճակը չի տեսնում, ինչը կար 2008թ. ընտրութիւններից յետոյ:*

*Իր հերթին քաղաքագէտ Ստեփան Գրիգորեանը ներկայիս ընդդիմութեան պայքարի տեսանելի արդիւնք է անուանել բացայայտ քաղաքական ցինիզմի կրճատումը: «Հեշտ յաղթանակի մասին նախկինում բացայայտ ցինիկ յայտարարութիւններ անող իշխանութեան պատգամաւորներն այժմ չգիտեն՝ ինչպէս արդարացնել նախկին արտայայտութիւնները, եւ աւելի հաւասարակշռուած են իրենց պահում»: Նա յաւելել է, որ Րաֆֆի Յովհաննիսեանը կրկին ստիպել է հաշուի նստել իր վարկանիշի հետ նաեւ մարզերում հանրահաւաքներից յետոյ: «Նա ցոյց տուեց, որ իր հետեւորդներն իր շուրջն են հաւաքւում ոչ միայն Երեւանում: Յիշէք Կապանի հանրահաւաքը: Նոյնիսկ իշխող կուսակցութեան համար այնտեղ հանրահաւաք անցկացնելը հեշտ չէ: Իսկ ընդդիմութիւնը եկաւ եւ հաւաքեց երեք հազար մարդ», - ասել է Գրիգորեանը:*



**Քաղաքագէտ Երուանդ Բոզոեան**

# ԼՈՒՐԵՐ

## «ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿՆ ԱՒԵԼԻ ՄԱՐՏՈՒՆԱԿ Է, ՔԱՆ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆԸ»

Ռազմավարական հետազօտութիւնների միջազգային ինստիտուտը (The International Institute for Strategic Studies, IISS, կենտրոնակայանը՝ Լոնդոն, Մեծ Բրիտանիա) հրապարակել է «Ռազմական հաւասարակշռութիւն» խորագրով ամենամեայ զեկոյցը, որում անդրադարձ կայ նաեւ Հայաստանի եւ Ադրբեջանի Զինուած ուժերի ներուժին ու հնարաւորութիւններին:

Ինչպէս տեղեկանում ենք ռուսական Mediarupor.ru կայքից, զեկոյցում նշւում է, որ հարաւկովկասեան երկու երկրներ էլ իւրաքանչիւր տարի զգալի ֆինանսական միջոցներ են յատկացնում ռազմական ոլորտին: «Եթէ Հայաստանում այդ նպատակներով (ռազմական ոլորտը ֆինանսաւորելու) տարեկան մօտ 400 մլն դոլար է ծախսւում (2012թ-ին՝ 394 միլիոն), ապա Ադրբեջանում անհամեմատ աւելի շատ. միայն 2012թ. Բաքուի ռազմական ծախսերը գնահատուել են 1 միլիարդ 770 միլիոն դոլար»,-ասուած է փաստաթղթում:

Ընդ որում, նշւում է, որ Բաքուն 2012թ., 2011թ-ի համեմատութեամբ, ռազմական ոլորտի յատկացումների ծաւալն աւելացրել է 90 միլիոն դոլարով: «Ընդհանուր առմամբ, Ադրբեջանի ռազմական ծախսերը կազմում են երկրի ՀՆԱ-ի (Համախառն ներքին արդիւնք) մօտ 2,5 տոկոսը, իսկ Հայաստանի ռազմական ծախսերը՝ ՀՆԱ-ի մօտ 4 տոկոսը»,-ընդգծում են զեկոյցի հեղինակները:

Բրիտանացի փորձագէտները «գնահատել են» նաեւ Հայաստանի եւ Ադրբեջանի բանակների մարտունակութեան աստիճանը ու պարզել, որ Հայաստանի ԶՈւ-ն աւելի մարտունակ է: «Հայաստանի զինուած ուժերը բաւականին հմուտ են եւ յստակ պատկերացնում են իրենց առջեւ դրուած նպատակներն ու առաջադրանքները: Դրան զուգահեռ՝ Հայաստանի Զինուած ուժերում գնալով աճում է պայմանագրային հիմունքներով ծառայութեան անցնող զինուորականների թիւը, թէեւ պահպանւում է նաեւ պարտադիր զօրակոչը»,-նշւում է փաստաթղթում:

Փորձագէտներն անդրադարձել են նաեւ հայկական բանակում իրականացւող բարեփոխումներին: Զեկոյցի համաձայն՝ Հայաստանի ԶՈՒ-ում բարեփոխումները հիմնականում ուղղուած են պայմանագրային զինծառայողների թիւի աւելացմանն ու աւելի որակեալ սպառազինութեան ձեռք բերմանը:

«Չնայած, որ Հայաստանը լուրջ միջոցներ է յատկացնում իր զինանոցում առկայ սպառազինութիւնն արդիականացնելու ու նորացնելու համար, այդուհանդերձ, Հայաստանի ԶՈւ-ը դեռեւս շատ հեռու են նորագոյն տեխնիկայով յագեցուած լինելուց: Դա, մասնաւորապէս, պայմանաւորուած է կոռուպցիոն դրսեւորումներով եւ Հայաստանի պաշտպանութեան նախարարութիւնում ֆինանսները ոչ արդիւնաւէտ ղեկավարելով»,-նշւում է զեկոյցում:

IISS-ն, անդրադառնալով հայկական ու ադրբեջանական զինուած ուժերի շփման գծում առկայ իրավիճակին, նշում է, որ 2012թ. առնուազն երկու անգամ (ամռանն ու գարնանը) հակամարտութեան գօտում իրադրութիւնը խիստ լարուել է, ինչը, սակայն, «չի յանգեցրել տարածաշրջանում ռազմական գործողութիւնների վերսկսմանը»:

Ադրբեջանին վերաբերող հատուածում IISS-ի փորձագէտները նշում են, որ չնայած որ Ադրբեջանի ռազմական բիւջէն մի քանի անգամ գերազանցում է Հայաստանի ռազմական ծախսերը, այդուհանդերձ, այդ հանգամանքն ադրբեջանական բանակն աւելի մարտունակ չի դարձնում: «Նաւթի վաճառքից ստացուած շահոյթի շնորհիւ Ադրբեջանը կարողացել է զգալի քանակութեամբ սպառազինութիւն ձեռք բերել, սակայն Ադրբեջանի զինուած ուժերն օդային տարածքում չեն կարողանում հասնել միանշանակ առաւելութեան: Նոյն նաւթն Ադրբեջանին հնարաւորութիւն է տուել գնել SS-300 տեսակի նորագոյն համակարգեր (զենիթահրթիռային), սակայն, դեռեւս յստակ չէ, թէ դա մարտունակութեան բարձրացման տեսանկիւնից ինչ է տալիս Բաքուին»,-նշւում է փաստաթղթում:

## ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԸ ՇՆՈՐՀԱՒՈՐԵԼ Է ՖՐԱՆՑԻՍԿՈՍ ՊԱՊԻՆ




Սերժ Սարգսեան կը շնորհաւորէ Հռոմի նորընտիր Պապ Ֆրանցիսկոսին

Մարտի 20-ին Վատիկանում տեղի ունեցաւ Հռոմի նորընտիր Պապ Ֆրանցիսկոսի գահակալութեան արարողութիւնը:

Գահակալութեան հանդիսաւոր արարողութեանը ներկայ են եղել աշխարհի 163 երկրների քաղաքական ու կրօնական առաջնորդներ, ովքեր մօտեցել եւ շնորհաւորել են Հռոմի նոր պապին: Նրան շնորհաւորել է նաեւ ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանը:

Ինչպէս յայտնում են ՀՀ նախագահի մամուլի գրասենեակից, Սերժ Սարգսեանը նշել է, որ աշխարհում առաջինը պետականօրէն քրիստոնէութիւնն ընդունած հայ ժողովրդի համար այս իրադարձութիւնն առանձնայատուկ խորհուրդ եւ իմաստ է պարունակում: Նախագահն ուրախութեամբ փաստել է, որ Սուրբ Պետրոսի նուիրապետական աթոռն զբաղեցնում է հայ ժողովրդի բարեկամը, ով քաջատեղեակ է մեր մշակոյթին ու պատմութեանը, ինչը նա բազմիցս փաստել է Արգենտինայում իր գործունէութեան ընթացքում:

## ՎԻՐԱՀԱՅԵՐԸ ՊԱՀԱՆՋ ԵՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ ԹԲԻԼԻՍԻԻՆ



Տեսարան Ջավախքի Ախալքալաքի Ծաղաքից

Վիրահայերը Վրաստանի իշխանութիւններից պահանջել են անյապաղ վաւերացնել Տարածաշրջանային լեզուների եւրոպական խարտիան: Ռուսաստանեան «Կոմերսանտ»-ի փոխանցմամբ՝ դա երկրի նախագահ Միխէիլ Սաակաշվիլիի եւ վարչապետ Բիձինա Իվանիշվիլիի միջեւ հակամարտութեան սրման նոր առիթ է դարձել:

Եւրոպական խարտիան վաւերացնելու կոչը հնչել է հայաբնակ Ջաւախքի Ախալքալաքի շրջանում: «Մենք պնդում ենք, որպէսզի խորհրդարանը վերջապէս վաւերացնի Եւրոպական խարտիան, որին Վրաստանը միացել է 1999 թուականին», - յայտարարել է տեղական խորհրդարանի ղեկավար Համլետ Մովսիսեանը՝ նշելով, որ այդ նախաձեռնութիւնը «Վրացական Երազանք» իշխող կոալիցիայի պատգամաւորներինն է:

Վրաստանի նախագահը յայտարարել է, թէ խարտիայի վաւերացումը սպառնում է ազգային անվտանգութեանը եւ իր ընդդիմախօսներին մեղադրել է «հայկական ազգայնականութեանը» տուրք տալու մէջ:

Կառավարութիւնում, մինչդեռ, յիշեցնում են, որ խարտիային միանալու նախաձեռնողը հենց ներկայիս նախագահն էր: «1999 թուականին Միխէիլ Սաակաշվիլին, լինելով իրաւական հարցերով խորհրդարանական կոմիտէի ղեկավարը, անպատասխանատու կերպով լոբբինգով էր զբաղուած Վրաստանի կողմից այդ փաստաթղթի վաւերացման պարտաւորութիւնը ստանձնելու օգտին», - յայտարարել է վերաինտեգրման հարցերով պետնախարար Պաատա Զաքարեիշվիլին՝ յաւելելով, որ Սաակաշվիլին այն ժամանակ իր գործողութիւնները պայմանաւորում էր Եւրոպայի խորհրդին Վրաստանի անդամակցութեան գործընթացը արագացնելու ցանկութեամբ:

Զաքարեիշվիլին համոզուած է, որ այժմ երկիրը այլ ճանապարհ չունի, քան՝ վաւերացնել խարտիան: «Հակառակ դէպքում մենք եւրաինտեգրացում չենք տեսնի», - զգուշացրել է վրաց պետնախարարը:

## ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ ԵՒ ՐԱՖՖԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Շարունակուած էջ 1-էն

Երկու գործիչները պայմանաւորուած են՝ իրար փոխանցել գրաւոր առաջարկներ: Ըստ Սերժ Սարգսեանի, ինքը յարգած է համաձայնութիւնը եւ ուղարկած է իր առաջարկները՝ սահմանադրական փոփոխութիւններու հանրաքուէ կազմակերպելու մասին: Այդ նախագիծը, ըստ նախագահի առաջարկին, պէտք է պատրաստէ Րաֆֆի Յովհաննիսեանի ղեկավարած յանձնաժողովը:

«Ժառանգութեան» առաջնորդը եօ ուղարկած է թուղթը՝ վրան խաչ քաշած:

Սարգսեան լրագրողներուն յայտնեց նաեւ, որ Րաֆֆի Յովհաննիսեան ընդունած է որ ինք չէ յաղթած:

Սերժ Սարգսեանի բացայայտած այս մանրամասնութիւններուն կապակցութեամբ, Րաֆֆի Յովհաննէսեան յայտարարեց, որ անոնք չեն համապատասխաներ իրականութեան:

«Կեղծուած ընտրութիւններից մի քանի օր անց ես իմ ոտքով գնացի եւ հանդիպեցի Սարգսեանին եւ սուտ է այդ նախադասութիւնը, թէ ես ասել եմ, որ չեմ յաղթել: Ես ասել եմ, որ կեղծուած են, համատարած կեղծիք է եղել եւ ամենալաւը դուք գիտէք: Ձեր թուաբանութիւնն իրականութեանը չի համապատասխանում եւ առաջարկում եմ, որ բացէք բոլոր քուէատուփերը եւ տեսնենք լցոնումներով հանդերձ, թէ որն է իրական պատկերը:

«Բայց որպէսզի այս զրոյցը լինի փոխադարձ յարգանքի, այլ ոչ հռետորաբանութեան շրջանակներում, դուք ժամանակից շուտ ընդունեցիք շնորհաւորանքը: Ես էլ ասացի միգուցէ իմն էլ չափազանցութիւն է, որ 80 տոկոսով եմ յաղթել: Բայց ենթադրենք, որ մենք իւրաքանչիւրս ներկայացնում ենք մեր ժողովրդի զգալի հատուածները, ինչպէ՞ս պիտի լուծում տանք այս հարցին»,-ըսաւ Րաֆֆի Յովհաննիսեան:

Ան եւս ներկայացուց Սերժ Սարգսեանի հետ հանդիպման մանրամասնութիւնները, յայտնելով. «Առաջին առաջարկն այն էր, որ նշանակէք երկրորդ տուր: Երկուսով, դէմ առ դէմ, յարգանքով, քաղաքական նոր մշակոյթով բանավիճենք, եւ թող ոչ մէկս իրեն չվերագրի վերջնական ճշմարտութիւնը: Արդէն գիտէք՝ մերժեց: Առաջարկեցի այլ տարբերակ, որը թոյլ կը տար իրեն մնալ որպէս Տէֆակտօ նախագահ, առաջարկեցի, որ համապատասխան օրէնսդրական փոփոխութիւններէն ետք ամբողջովին համամասնական ընտրակարգով գնանք խորհրդարանական ընտրութիւնների, որ հասարակութեան այս վիճակը արտացոլուի համապետական ընտրութեամբ: Եւ մի ասէք, որ անհնար է, բոլորդ գիտէք, որ որ տեղ կայ քաղաքական կամք, բերելու հասարակութեանը համերաշխ ապագայի, կայ նաեւ լուծում: Մերժեց»:

Յովհաննիսեան սխալ սեպեց նաեւ այն նախադասութիւնը, որ իր առաջարկած ճանապարհներուն մէջ երրորդը քննարկուած է: «Ոչ ինքը, ոչ ես երբեք չենք քննարկել իմ մասնակցութիւնը իշխանութեան կազմում որեւէ աշխատանքում: Հենց ինքը համաձայնուեց, որ դա սխալ է»:

## ՍԻՐԻԱՀԱՅ ԵՐԵԽԱՆԵՐԸ ՇԱՏ ԱՒԵԼԻ ԼԱՒ ԵՆ ՃԱՆԱՉՈՒՄ ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆԻՆ, ՔԱՆ ԳՈՒՑԷ ՇԱՏ ՀԱՅԱՍՏԱՆԱԲՆԱԿՆԵՐԵՆ

*Սիրիահայ երեխաների համար Երեւանում ժամանակաւորապէս բացուած Կիլիկեան վարժարանի մասին լրատուամիջոցներից մէկը վերջերս տեսանիւթ էր պատրաստել, որից ակնյայտ երեւում էր, որ նրանց առաջնային նպատակը ոչ թէ դպրոցում սովորող սիրիահայ աշակերտների առօրեան, նրանց ուսումնառութիւնն ու ինչու չէ, նաեւ դպրոցում առկայ խնդիրները լուսաբանելն էր, այլ ինչ-որ լարում, սկանդալ պրպտելը:*

*Տեղեկացնենք, որ դպրոցը բացուել է Հայաստանի Հանրապետութիւնում գտնուող սիրիահայերի ցանկութեամբ, Սոցիալ դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան հովանաւորութեամբ եւ ՀՀ կառավարութեան աջակցութեամբ: Դպրոցում սովորում է աւելի քան 300 աշակերտ՝ 1-ից 9-րդ դասարաններում: Դպրոցում ուսուցանումը կատարւում է սիրիական ծրագրով եւ ՀՀ ԿԳ նախարարութեան իմացութեամբ եւ թոյլտուութեամբ, Սփիւռքի նախարարութեան եւ Երեւանի քաղաքապետարանի անմիջական վերահսկողութեամբ:*

*Վերոյիշեալ տեսանիւթում նշւում է, որ վարժարանում աշակերտները դասը սկսում են սիրիական քայլերգով, մինչդեռ, իրականում, սկսում են տերունական աղօթքով, ինչպէս մինչ այդ ընդունուած էր անել Սիրիայի հայկական դպրոցներում:*

*Ինչ վերաբերում է վարժարանում հայոց պատմութիւն չդասաւանդելուն, տեղեկացնենք եւս մէկ անգամ. Երեւանի Կիլիկեան վարժարանում ներդրուած է Սիրիայում հայկական դպրոցների համար ստեղծուած ծրագիրը, որում ներառուած չէ առանձին դասաժամով հայոց պատմութեան դասաւանդում, մինչդեռ Սիրիայի, յատկապէս Հալէպի հայկական դպրոցներում տասնամեակներ շարունակ կրօնի եւ հայոց լեզուի դասաժամերին հայոց պատմութիւն մատուցուել է աշակերտներին, այնպէս, որ սիրիահայ երեխաները շատ աւելի լաւ գիտեն, թէ Վարդան Մամիկոնեանի, թէ այլ հերոսների արձանները, քան գուցէ շատ հայաստանաբնակ հայեր: Ինչ վերաբերում է տեսանիւթում հնչեցուած մեղադրանքներին, թէ այս դպրոցի աշակերտները միայն սիրական տօներն են նշում, հակադարձենք. անգամ Սիրիայի դպրոցներում նշուել են հայկական տօներն ու անգամ այդ ընթացքում արձակուրդներ են եղել:*

*Նման նիւթեր, տեսանիւթեր, յօդուածներ պատրաստող լրագրողներին կոչ ենք անում Հայաստանի Հանրապետութիւնում ու ոչ միայն այնտեղ բնակուող սիրիահայերի մասին տեղեկատուութիւն հաղորդելիս կամ որեւէ նիւթ պատրաստելիս լինել առաւել զգուշաւոր եւ կոռեկտ ու ընթերցողների թիւ աւելացնելու, ինչ-որ արհեստական աղմուկ բարձրացնելու նպատակով չփորձել սեւացնել Կիլիկեան բարեսիրական միութեան եւ դպրոցի տնօրինութեան բարի համբաւը՝ աղմկոտ տեղեկատուութիւն «հորինել» տարբերակն ընտրելով:*

**Երեւանի Կիլիկեան**
**բարեսիրական-կրթական**
**հասարակական**
**կազմակերպութիւն**

## ԵԿԵՂԵՑԻ՝ ԱՂՔԱՏԻՆ ՀԱՄԱՐ



***ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒ ԴԱՒԻԹԵԱՆ***

*Շնորհաւորելի են աշխարհի քրիստոնեաները Նորընտիր Ֆրանսիսքօ Ա. Պապով:*

*Ան որ մեր մէջ քնացած «քրիստոնէապատկանելիութեան» կու տայ վերազարթնում, ոգեւորուած իր աղքատասէր եւ պարզասէր կերպարի առաջնորդութեամբ:*

*Ան որ եկեղեցականի կեանքին եւ կոչումին կու տայ օրինակելի հմայք ու պատիւ, հեռու մնալով ճոխ ու փարթամ երեւոյթներէ, եւ կիրարկելով ժողովուրդի ծոցէն ծնած ու բխած պարզ կեանք մը:*

*Ան որ կ'ուզէ եկեղեցին քրիստոսավայել համեստութեամբ, հեզութեամբ եւ պարզութեամբ աղքատի խրճիթէն ներս տանիլ, որ հոն իր բնական տեղը գտնէ եւ դերը կատարէ:*

*Կ'ըսուի թէ երբ քուէարկութիւնը ի նպաստ Նորընտիր Պապին կ'ընթանար եւ ան կարծես ապահոված ըլլալ կը թուէր 115 քարտինալներու նուազագոյն երկու-երրորդը (2/3) կամ 77 ձայները, պրազիլցի Քարտինալ Գլոտիօ Հոմէզ գինք կը շնորհաւորէ ու կը համբուրէ, յետոյ կ'ըսէ. «Մի մոռնար աղքատները»:*

*Ճիշդ այդ պահուն է որ արժանթինցի Քարտինալ Խորխէ Մարիօ Պէրկոլիօ կամ Նորընտիր Պապը կ'որոշէ ընտրել Ֆրանսիսքօ անունը, վերյիշելով այն աղքատասիրութիւնը որով հռչակաւոր դարձած էր ատենօք (ԺԲ-ԺԳ դար) «Ասիսիի Ֆրանսիս»ը (San Francisco d'Assisi), որ Վատիկանի պատերուն տակ աղքատներուն հետ մուրացկանի կեանք ապրեցաւ եւ ամէն տեսակի զրկանք ճանչցաւ:*

*Կ'ըսուի նաեւ, թէ լրագրողներու հետ իր առաջին հանդիպումի ընթացքին Ֆրանսիսքօ Ա. Պապը յաճախ կը բարձրացնէր իր առջեւ ծնրադրողները եւ յաճախ կը մերժէր աջահամբոյրը:*

*Անոր մէկ յիշատակելի խօսքը եղած է, թէ ինք ամէն տեսակի գաղափարամիտները կը յարգէ, ըլլան անոնք որեւէ տարբեր կրօնի հաւատացեալներ կամ անհաւատ էակներ, որովհետեւ, ըստ Նորընտիր Պապին, «բոլորն ալ նոյն Աստուծոյ զաւակներն են»:*

*«Ո՜հ, որքա՜ն պիտի ուզէի որ եկեղեցին աղքատ ըլլար եւ աղքատին ծառայէր», ըսած է Նորընտիր Պապը: Այդ ըսելով ան նոր յոյսերով ոգեւորեց եւ խանդավառեց անիրաւուածները այս աշխարհի: Անցեալին, Լատին եւ Կեդրոնական Ամերիկաներու հարիւրաւոր միլիոններ հաշուող աղքատները կը յուսային իրենց խեղճ վիճակի փրկութիւնը գտնել Ձէ Կեվարայով (նաեւ արժանթինցի) սկսած կարմիր յեղափոխութիւններով ... եւ անկէ ասդին շատ բան պատահած է ժողովրդավար եւ խաղաղ միջոցներով տեղի ունեցած պետական բարեփոխուած վարչաձեւերու ծնունդով:*

*«Եկեղեցի՝ աղքատին համար» նշանաբանով յոյսով ենք որ կը գործէ Ֆրանսիս Ա.ի Վատիկանը ասկէ ետք, եւ իր անսահման կարելիութիւնները կը դնէ աղքատին կեանքը բարելաւելու համար՝ Ամերիկաներու եւ տարբեր աշխարհամասերու մէջ:*

*«Եկեղեցի՝ աղքատին համար» նշանաբանը կը փափաքինք տեսնել նաեւ կիրարկուած մեր ազգային եկեղեցւոյ աշխատակազմին կողմէ, ամենաբարձրէն եկած յորդորներով, որպէսզի առատաձեռն նուիրատուութիւնները եւ շահաղբիւրներն ու այլազան կարելիութիւնները հայ եկեղեցւոյ՝ գործածուին ու դրուին հայրենի գիւղերու խղճալի վիճակը բարելաւելու համար:*

*«Եկեղեցի՝ աղքատին համար» նշանաբանը կը յուսանք տեսնել կիրարկուած ոչ թէ եկեղեցաշինութեամբ հաւատացեալներուն հանգիստ ապահովելու կամ բարերարներուն հաճոյք պատճառելու... այլ ազգաշինութեամբ եւ մարդասիրութեամբ անկարին ապրելու յոյս ներշնչելու եւ աղքատին պատուաբեր կեանք ապահովելու:*

*Եւ վերջապէս, «Եկեղեցի՝ աղքատին համար» նշանաբանով կը յուսանք տեսնել աշխարհ մը, որու տաճարներէն դո՛ւրս կը վռնտուին այն վաճառականները, որոնք՝ Քրիստոսի խօսքերով՝ «կը պղծեն Իր Հօր տունը»...:*

## ՄԱՀԱՑԵԼ Է ԱՐԱՄԱՅԻՍ ՍԱՀԱԿԵԱՆԸ

*ԵՐԵՒԱՆ, 14 ՄԱՐՏԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Կեանքի 77 տարեկան հասակում վախճանուել է գրող, երգիծաբան Արամայիս Սահակեանը: Ինչպէս «Արմենպրես»-ին տեղեկացրին Երեւանի 8-րդ կլինիկական հիւանդանոցից, նա մի քանի օր հիւանդանոցում էր: Արամայիս Սահակեանը մահացել է արեան հիւանդութիւնից:*



***Գրող, երգիծաբան***
***Արամայիս Սահակեան***

*Արամայիս Ադամի Սահակեանը ծնուել է 1936 թ. Մայիսի 24-ին, Արծուաշէն գիւղում: Յայտնի բանաստեղծ, հրապարակախօսն աւարտել է Խ. Աբովեանի անուան պետական մանկավարժական ինստիտուտի պատմալեզուական ֆակուլտետը: Նաեւ մասնակցել է Մոսկուայի Մ. Գորկու անուան գրականութեան ինստիտուտի գրական բարձրագոյն դասընթացներին 1967թ.-ին: Աշխատել է «Աւանգարդ» թերթում (1960-1965), «Գարուն» գրական ամսագրում (1967-1970), ՀԼԿԵՄ կենտկոմում (1970-1971), ՀԽՍՀ հեռուստատեսութեան եւ ռադիոհաղորդումների պետական կոմիտէում (1971-1977): 1982-ից «Ոզնի» երգիծական հանդէսի գլխաւոր խմբագիրն է: Նրա գրքերն են «Աստղիկներ» (1958), «Սիրոյ Հասակ» (1959), «Մենք Միասին Ենք» (1964), «Ապրել եւ Սիրել» (1968; այս գրքի համար ստացել է ՀԼԿԵՄ մրցանակ 1970 թուականին), «Երջանիկ Եղէք» (1972), «Ես Սիրում եմ ձեզ» (1975) եւ այլն:*

*Դարձել է համամիութենական երաժշտական մրցոյթի դափնեկիր երգերի տեքստերի համար: Նրա բանաստեղծութիւնները թարգմանուել են ՍՍՀՄ եւ արտասահմանեան բազմաթիւ լեզուներով: ԽՍՀՄ փլուզումից յետոյ Ա. Սահակեանը շարունակել է հրատարակել իր «Ոզնի» հանդէսը, նաեւ աշխատել է Հանրային հեռուստաընկերութիւնում: Ընտրուել է նաեւ ՀՀ ԱԺ պատգամաւոր:*

*Նրա բանաստեղծութիւնները պարբերաբար տպագրուել են հայկական եւ համամիութենական մամուլում: Բազմաթիւ երգերի տեքստերի հեղինակ է, թարգմանուել է աշխարհի 30-ից աւելի լեզուներով: Զբաղւում է նաեւ թարգմանութեամբ: Մօտ երեք տասնեակ երկեր է տպագրել, բազմաթիւ աշխատութիւններ թարգմանել ռուսերէնից:*

*2003թ. «Ծիծաղի Տուն» հաղորդաշարի համար արժանացել է «Մովսէս Խորենացի» մեդալի, 1998թ. Բէյրութում՝ «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» յուշամեդալի, 1986թ. «Ոզնի» երգիծաթերթում տպագրուած բանաստեղծութիւնների համար «Ոսկէ Գրիչ» մրցանակի, 1984թ. քնարական բանաստեղծութիւնների համար՝ Աւետիք Իսահակեանի անուան մրցանակի, 1970թ. «Ապրել եւ Սիրել» գրքի համար արժանացել է Հայաստանի կոմերիտմիութեան դափնեկրի կոչման:*

## «Է ՀԷ՜Յ, ԾԱԽՈՒՄ ԵՆՔ, ԾԱԽԻՈՒՄ ԵՆՔ...»

*ԼԻՒԹՎԻԳ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ*

*Չէ՛, այլեւս լռել չեմ կարող: Օրեր առաջ ինչոր ինտերնետային կայքում պատահաբար աչքս ընկաւ մի զաւեշտական, չէ, ինչո՞ւ, շատ էլ իրական տեղեկութիւն, որ իբր արաբական ինչոր շէյխ, իր շէյխական մտերիմների շրջապատում, կատակով թէ լուրջ, դժգոհել է, թէ՝ «Այս շոգ ու կրակ երկրում խաշուեցինք, մի ցուրտ կամ բարեխառն երկիր գտնենք, յարմար գնով առնենք, հանգիստ-խաղաղ ապրենք»: Եւ ասում են, թէ շէյխական այդ շրջապատի մէջ «խցկուած» մեր երկիրը լքած մի հայ նրա ականջին «Հայաստան» անունն է շշնջացել, հետն էլ ասելով, թէ՝ «այդ երկրի» գեղատեսիլ վայրերից մէկում՝ Գոշավանքում, մի շէյխ արդէն տարածք է գնել ու նորոգել, հիւրանոցային համալիր է կառուցում, այնպէս որ, «աւելի յարմար երկիր հազիւ թէ աշխարհում գտնէք»: Սկզբում զայրացայ, յետոյ զարմացայ, քիչ անց լրջացայ ու Գլխումս մի «յիմար» միտք անցաւ: Ախր այդ տեղեկութիւնն այնքան էլ անհաւանական չէ: Մեղա՛ քեզ, Տէ՛ր: Իսկ եթէ... Մէկ է, մեր հողի երեւի կէսն արդէն մաս-մաս ծախել ենք՝ ներդրումների քողածածկոյթով: «Մարսը» վաղուց ծախել ենք, «Ջուարթնոցը» ծախել ենք, «Արմենիա-Մարիոտը» ծախել ենք, ԱԳՆ շէնքն էլ «յարմար գնով» ծախում ենք... Ծախում ենք ու ծախւում ենք՝ մաս-մաս, առանց խղճի ու ամօթի:*

*Աւելի լաւ չէ՞, մեղա՛ քեզ, Տէ՛ր, միանգամից ծախենք, պրծնենք, էլի՛:*

*Ու այսքանից յետոյ դեռ մեզ կերակրում են «Հաւատանք, որ ապրենք», «ապահով Հայաստան» կարգախօսներով: Հաւատացինք, մի կերպ ապրեցինք՝ «էս օրին» հասանք: Հիմա էլ՝ «ապահով Հայաստան»... Դրսի՞ց ապահով, թէ՞ ներսից: Թէ՞ «ներսից» մեր ներսիններըը պիտի մեզ այսպէս ապահովեն, արդիւնքում՝ նորից ապրե՞նք «խաբուած ժողովրդի» կարգավիճակով:*

*Բայց մինչեւ ե՞րբ... Ու այսքանից յետոյ համարձակւում են ազգային սնապարծութեամբ ձէնըը գլուխները գցել, թէ՝ ի՞նչ էք աւել-պակաս դուրս տալիս, այսինչ ցուցանիշով, տնտեսական ազատութեան ինդեքսում աշխարհի 110 երկրների մէջ 38-րդն ենք, թէ՝ մեր Արոնեանը աշխարհում երկրորդ շախմատիստն է, շախմատի հաւաքականն էլ՝ օլիմպիական չեմպիոն, թէ մեր Հենրիխ Մխիթարեանը աշխարհի լաւագոյն 100 ֆուտբոլիստների ցուցակում է, թէ՝ մեր այս, թէ՝ մեր այն... Այս բոլորը, ի հարկէ, լաւ է, «գլուխ ներս լուսանալու» եւ բերաններս փակելու, սարկական շղթայից մի օղակ էլ պոկելու, մեզ «նուիրելու» յարմար արդարացումներ: Եւ իբրեւ «սրտի մխիթարանք», չուրանանք եւ յաւելենք, որ, այնուամենայնիւ, 21-ամեայ անկախութեան ճանապարհին ինչ-ինչ նկատելի կամ աննշան յաջողութիւններ էլ ենք ունեցել, ինչը դրօշ դարձրած առաջ ենք «սլանում»՝ ետեւում թողնելով ժողովրդի չարդարացուած յոյսերի ծուէնները: Ու ես նորից «յայտնուեցի» արաբական շէյխի ծուղակում: Ու ես նորէն «յանցագործ» մտքի մէջ ինձ բռնեցի. մասնակի ծախծախի փոխարէն մի չեփոր հնչեցնենք (շէյխի ականջը կանչի) աշխարհով մէկ, թէ՝ էհճ՛յ, ի՞նչ էք ներդրումային խաղեր տալիս, եկէք, «բիրիքով» առէք, տարէք, վայելէք... Մենք մեր հողի տէր այլեւս չենք զգում, մեր իսկ ներսի «շէյխերը» երկաթէ օղակը ներսիններիս վիզն են գցել... Եւրադռների աչքին թոզ փչելով, աշխարհի անտարբեր աչքի առջեւ, օրը ցերեկով խեղդում են ու խեղդում: Ո՛վ կարողացաւ, գլուխն ազատեց, ինքնաթիռով, գնացքով, աւտոբուսով, երթուղայինով, տո՛, հենց ոտ-ոտ երկիրը թողեց, փախաւ՝ ուր աչքը կտրեց... Տարեց տարի արտագաղթի ալիքը ահագնանալով՝ նախնիների պահած-պահպանած սրբազան հողն է ամայացնում... Դէ՛հ, միանգամից ծախենք, պրծնենք, էլի...*

*Ցաւ ի սիրտ եմ ասում, ընդդիմադիր երբեք չեմ խաղացել. ամօթից գետինը մտնելով եմ ասում:*

*Թէեւ... գետինը մտնեն նրանք, ովքեր մեր երկիրն ու մեզ էս օրին հասցրին: «Տեսնեմ Անին ու նոր մեռնեմ»,- Շիրազն էր իր ազգի ցաւը մխում... Իսկ մենք մխում ենք, մխում ենք, մխում՝ ծուխը ոչ ոք չի տեսնում, ոչ մէկի պէտքն էլ չէ...*

*Մօտ մէկ դար առաջ Վահան Տէրեանը «Հոգեւոր Հայաստան» կառուցելու, ազգային մնայուն արժէքներով, մշակոյթով, գրականութեամբ, մայրենի լեզուին հաւատարմութեամբ մեր ժողովրդի կեանքը նորոգելու, իմաստաւորելու, առաջ շարժուելու խնդիր էր դնում: Մէկ դար շարունակ հայոց սերունդները փորձում էին՝ «Հոգեւոր Հայաստան» կառուցել, բայց*

*Շար.ը էջ 18*

## ԱՌԱՆՑ ՀԱՒԱՍԱՐՈՒԹԵԱՆ ՆՇԱՆԻ

*ՍԱՄՈՒԷԼ ԿՈՍԵԱՆ*

*Անցած շաբաթուայ ամենայուսահատ յայտարարութիւններից մէկը Սերբիայի վարչապետ Իվիցա Դաչիչի խոստովանութիւնն էր, որ Կոսովոն այլեւս սերբական չէ: «Ես տասը տարի ինքս ինձ խաբում էի, թէ Կոսովոն մերն է, թէեւ այդպէս է գրուած Սերբիայի սահմանադրութեան մէջ: Այսօր չի օգնում նաեւ այդ փաստը: Սերբիայի նախագահը, ինչպէս եւ վարչապետն ու նախարարները, ոստիկանները կամ զինուորները չեն կարող գնալ Կոսովօ: Ահա թէ որքան է Կոսովոն մերը, եւ որքանով են այնտեղ գործում Սերբիայի սահմանադրութիւնը եւ օրէնքները»,- ասել է Դաչիչը, միաժամանակ արձանագրելով, որ Կոսովոյի սերբերին միայն մի բան է մնում անել, այն է՝ լքել ինքնահռչակ հանրապետութեան տարածքը:*

*Արեւմտեան դիտորդները շտապեցին արձանագրել, որ Բելգրադը՝ Եւրամիութիւն մուտք գործելու շուրջ բանակցութիւններին ընդառաջ, Պրիշտինայի հետ յարաբերութիւններում պատրաստ է «պատմական շրջադարձ կատարել»: Ինչո՞ւ, եթէ Սերբիան իր պատմական հայրենիքի այդ հատուածը չկորցնելու համար հազարաւոր կեանքեր է վճարել եւ այժմ ստիպուած պիտի լինի ոչ միայն երկրի սահմանադրութիւնը փոխել, այլեւ իրական նոր սահմանների հարցը որոշել, եթէ, ի հարկէ, նրան թոյլ տան ինքնուրոյն այդ բանն անել:*

*Զուգահեռ անցկացնելով Սերբիայի ողբերգութեան եւ ղարաբաղեան հակամարտութեան միջեւ, դժուար չէ բացայայտել արեւմտեան քաղաքականութեան հակասութիւններն ու անարդարութիւնները, որոնք հիմնականում հետեւանք են երկակի, յաճախ նաեւ եռակի ստանդարտների կիրառման: Կոսովոյի ինքնուրոյնութիւնը արդէն տասնեակ երկրներ են ճանաչել, իսկ Ղարաբաղինը՝ ոչ մէկը:*

*Կոսովոյի անկախութիւնը իրականացնելու համար «ժողովրդավար» Արեւմուտքը տակնուվրայ արեց Սերբիան եւ անվերապահօրէն հաստատեց ալբանացիների՝ ոչ իրենց պատմական հողի վրայ հաստատուելու իրաւունքը, երբ իր պատմական հողի վրայ ինքնորոշուած Ղարաբաղի խնդիրը տարիներով առկախուած է, եւ սա այն դէպքում, երբ Ատրպէյճանը Սումգայիթի, Գանձակի, Պաքուի հայաջինջ գործողութիւններով ապացուցեց իր անհամատեղելիութիւնը ժամանակակից քաղաքակրթութեանը: Եւ ոչ միայն: Այսօր էլ, ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորմանը կոչուած ԵԱՀԿ Մինսկի խումբը, անտեսելով ազերիների վայրագութեան, ցինիզմի ու ռասիզմի ամենատարբեր դրսեւորումները, բացառապէս զերծ է Ատրպէյճանին անգամ բանաւոր քննադատելուց, իսկ եթէ քննադատում էլ է, ապա ընդհանուր ֆրազներով, որոնք հաւասարապէս պիտի վերաբերեն հակամարտող երկու կողմին էլ: Եւ ամենաէականը: Ինտենսիւօրէն զինուող Ատրպէյճանին ոչ մէկը չի զգուշացնում սահմանափակել սպառազինութեան մրցավազքը, երբ մի այլ երկրի պարագայում կոլեկտիւ պատժամիջոցների կիրառումը չէր ուշանայ, մանաւանդ որ այդ մրցավազքը կոնկրետ թիրախ ունի:*

*Ստացւում է, հայերի մահուան եւ ապրելու գինը համաշխարհային շուկայում զիջում է այլ ազգերի եւ ժողովուրդների՝ Արեւմուտքի սահմանած գներին: Ինչո՞ւ այլեւայլ հարցերում եւ տարածաշրջաններում երբեմն գերվճռականութիւն ցուցաբերած Արեւմուտքը այդքան լիբերալ է ղարաբաղեան հակամարտութեան հարցում: Փորձագէտներն ու քաղաքագէտները պատճառների թւում մատնանշում են գերտէրութիւնների տնտեսական ու քաղաքական տարբեր շահերը, ինչը տրամաբանական է, ինչպէս եւ տրամաբանական է, որ փոքր երկրները նոյնպէս իրաւունք ունեն առաջնորդուելու իրենց ազգային շահերով:*

*Հայաստանի արտաքին քաղաքականութեան գերակայ ուղղութիւններից մէկն էլ եւրոպական արժեհամակարգին ինտեգրուելն է, ժողովրդավարական ինստիտուտների գործառոյթների պատուաստումը մեր միջավայրին: Սակայն երբեմն անհանգստացնող է թւում այն ոգեւորութիւնը, որով փորձում ենք եւրոպական արժէքները, առանց ազգային շահի մաղով անցկացնելու, անխտիր ներկրել ու տեղայնացնել: Արեւմուտքը հենց դա էլ ուզում է, եւ ոչ միայն ուզում է, այլեւ ամենատարբեր միջոցներով փորձում է պարտադրել, ինչն էլ կասկածելի է դարձնում նրանց անկեղծութեան որակը: Եւ նոյն կասկածն է, երբ ժողովրդավար ուժերը փորձում են հաւասարութեան նշան դնել վայրենութեան շեմը նոր յաղթահարող եւ հնագոյն մշակութային աւանդութիւններ ու-*

*Շար.ը էջ 18*




# Ս. Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ 125-ԱՄԵԱԿ
# ՍԱՐԳԻՍ ԱՐՄԱՂԱՆԵԱՆ

ՏՈՔԹ. ԵՂԻԿ ՃԵՐԷՃԵԱՆ

Կեանք մը ամբողջ պայքարի փոթորիկներուն մէջ անցուցած հերոսներու շարքին կը պատկանի Սարգիս Արմաղանեան: Ս. Արմաղանեան ծնած է Սեբաստիոյ Խանլու գիւղը, 1890-ին:

Կանուխէն կ՚անդամակցի Հնչակեան Կուսակցութեան: 1906-ին, Կուսակցութեան որոշումով, տեռորի կ՚ենթարկէ մատնիչ Քիւրքճեանը եւ կ՚ապաստանի Բրգնիկ գիւղը: Ահաբեկչութիւնը կը բացայայտուի: Ս. Արմաղանեան կուռի կը բռնուի զինք ձերբակալելու եկողներուն հետ եւ կ՚ապաստանի Մարզուան:

Շուրջ երկու տարի կը մնայ փախստական: Օսմ. Սահմանադրութենէն ետք, Ամասիոյ մէջ, վաղեմի հնչակեան Յովհաննէս Տինկիլեանի հետ կը զբաղի ծխախոտի առեւտուրով:

Այդ ճամբուն վրայ, երկու ընկերները կռուի կը բռնուին ռեժիի ոստիկանախումբի մը հետ: Սա, իր չարաշահութիւններով ծանօթ այն ոստիկանախումբն էր, որուն մասին Փարամազ 1898 Օգոստոսին դատարանին առջեւ արտասանած իր յայտնի ճառին մէջ կ՚ըսէ. «Ծխախոտի ռեժի, նրա պաշտօնեաներ: Սա եւս Համիտիյէի նման մի կազմակերպութիւն է, աւազակների մի խումբ է, որ առանց միջոցների խտրութեան ամէն տեսակ գողութիւն, լրբութիւն կատարում է, ազգաբնակութեան վրայ մեծ բեռ դառնալով: Սրա լրբութիւնից զերծ չի մնում եւ իգական սեռի պատիւը, սա է, որ օրը կէս օրին, հրապարակի վրայ ամօթխած կնոջ, սիրուն աղջկայ ներքնաշորերն է խուզարկում եւ ծխախոտ գտնելու պատրուակով՝ իր լիրբ գազանական կիրքերին յագուրդ տալիս: Գոլջի եւ Համիտիյէ, - տաճկական պետութեան 19-րդ դարու ամենափառաւոր գիւտն է»:

Վերոյիշեալ կռիւին, երկու ընկերներուն կողմէ կը սպաննուին քանի մը ոստիկաններ: Ս. Արմաղանեան կը վերադառնայ փախստական կեանքին ու 1909-ին կը յաջողի ապաստանիլ Ջեռնոգորիա (Ղարատաղ): Հոն եւս, կռիւի մը ընթացքին կը սպաննէ չաւուշ մը ու կ՚ապաստանի Մակեդոնիա: Կը միանայ ապստամբներուն: Ռատովիլտէի մէջ կը մասնակցի Թրքական բանակի սպայական զօրանոցի մը ականահարման, որուն հետեւանքով կը սպաննուին շուրջ 30 զինուորականներ: Մաս կը կազմէ Իսթափէնի եւ Ջաքըր Եօրկիի հայդուկային խումբերուն, որոնք լուրջ հարուածներ կը հասցնէին Թրքական բանակի թիկունքին:

1912, Պալքանեան Ա. Պատերազմին, կը կամաւորագրուի պուլկարական բանակին ու կը միանայ հայկական կամաւորական գունդին: Անդրանիկի հրամանատարութեան տակ կը ստանձնէ «Արարատ» խումբին խմբապետութիւնը: Կիւմիւլճինայի մօտ, Մազաս Թեփէի վրայ մղուած մարտերուն իր ցուցաբերած քաջութեան համար կը պարգեւատրուի զինուորական շքանշանով:

Համաշխարհային Ա. Պատերազմին կը փութայ կովկասեան ռազմաճակատ եւ կը մտնէ հնչակեան կամաւորական 6-րդ գունդին մէջ: 1915 Փետրուարին արդէն, գունդի կազմակերպիչներէն Տիգրան Գազանճեան, ՍԴՀԿ Պաքուի վարչութեան կը գրէ. «Ռումանիայից եկան մեզ հասան 43 կամաւոր ընկերներ, իրենց իբրեւ խմբապետ ունենալով մեր զինուորական ընկեր պուլկարահայ Սարգիսը, որը Պալքանեան Պատերազմում իր ցոյց [տուած] քաջագործութիւնների համար Գէորգեւսկի աստիճանի խաչ ունի ստացած, որ կրում է իւր կրծքին եւ որը խիստ լաւ տպաւորութիւն թողեց մեր հրամանատար Ջանփոլատեանի վրայ» (1): Շատ չանցած, Հայկ Բժշկեան իր հերթին, Պաքու՝ Մելքոնին գրած իր նամակին մէջ կը տեղեկագրէ, թէ Ս. Արմաղանեան նշանակուած է 6-րդ գունդի Բ. հարիւրակի հարիւրապետ (2):

Ս. Արմաղանեան կը մասնակցի 6-րդ գունդի մղած գրեթէ բոլոր կռիւներուն, որոնք առ հասարակ կ՚աւարտին յաղթանակներով (3):

Կամաւորական գունդերու լուծարքէն եւ Ռուսաստանի Փետրուարեան յեղափոխութենէն ետք, երբ ռազմաճակատը կը սկսի քայքայուիլ, արեւմտահայ խումբ մը հայդուկապետերու՝ որոնց շարքին Ս. Արմաղանեան, ուսերուն կ՚իյնայ ռուսական բանակի մնացորդացին հետ կասեցնել Թրքական գերակայ ուժերուն յառաջխաղացքը:

Ս. Արմաղանեանի կովկասեան ռազմաճակատի մարտական գործունէութեան մասին ամբողջական գրարութիւն մը չկայ:

Կան կարգ մը ականատեսներու վկայութիւնները, որոնց համադրումով կարելի է պատկերացում կազմել Ս. Արմաղանեանի խաղցած կարեւոր դերակատարութեան մասին:

Կովկասեան ռազմաբեմի ականատեսներէն Միսաք Թորլաքեան, որ նաեւ շրջան մը կռուած է Ս. Արմաղանեանի յիսնեակին մէջ, իր յուշերուն մէջ կը գրէ. «1917 Հոկտեմբեր 17-ին, Ագ Տաղէն դէպի Տրապիզոն անցնիլ կ՚ուզէ Ալխս խումբը: Երկար չարչարուելէ եւ զոհեր տալէ ետք, գիշեր մը փշաթելով հիւսուած Թուրք սահմանապահ զինուորներու թակարդը կ՚իյնան: Կռիւը ճակատագրական կ՚ըլլայ: Զոհեր տալով կը նահանջեն եւ ուրիշ վայրէ մը կը յաջողին ռուսերուն կողմը անցնիլ: Իբրեւ Թուրք գերիներ կը բանտարկուին եւ շղթայակապ կ՚ուղարկուին Տրապիզոն, ապա Պաթում: Այստեղ, շնորհիւ զօրավար Անդրանիկի եւ ազգային կուսակցութիւններու միջամտութիւններուն, ազատ կ՚արձակուին եւ Սարիղամիշէն Սարգիս Արամաղեանի ձիաւոր խումբին միանալով կ՚անցնին Էրզրում, դէպի կռուի ճակատ» (4):

Եւ իրօք, ամիս մը անց, Ս. Արմաղանեան կ՚երեւայ Բաբերդի ռազմաճակատին վրայ: Այս մասին կ՚անդրադառնայ ճակատի արեւմտահայ հայդուկապետերէն Սեպուհ (Արշակ Ներսէսեան), որ իր յուշերուն մէջ կը գրէ, թէ իր Բաբերդ գտնուած միջոցին, զինուորական հեռախօսակապով իր հետ կը կապուի Թիֆլիսէն դեռ նոր Էրզրում հասած հնչակեան խմբապետ Ս. Վահագնը (Գրիգոր Նալպանտեան), որ թարմ լուրեր հաղորդելու կողքին նաեւ կ՚ըսէ. «Ոչ մի մարդ. Թիֆլիսում այնչափ խօսեցայ, աղաչեցի, պաղատեցայ, որ Մուրատին (Սեբաստացի - Ե.Ճ.) օգնական ուժեր ուղարկեն, բայց ամէն ինչ անօգուտ եղաւ: Ստիպուեցայ մենակ գալ եւ պիտի մեկնիմ Երզնկա (Մուրատի օգնութեան - Ե.Ճ.): Երբ Սարիղամիշէն կ՚անցնէի, պատահեցայ Սերոբին եւ Վախթանքին, որոնք 50-ի չափ ձիաւորներ պատրաստած էին եւ Սարգիս Արմաղանեանի հետ շուտով կը մեկնին Բաբերդ: Իսկ Անդրանիկն ալ շուտով կը մեկնի Էրզրում» (5):



Ամիս մը ետք, երբ Ս. Վահագն իր խումբով օգնութեան կը հասնի Սեպուհին, նոյն լուրը բերանացի կը կրկնէ անոր, աւելցնելով. «Բոլորը շատ լաւ տղաներ են, զանազան կռիւներու մասնակցած են: Սակայն ի՜նչ խեղճ ժողովուրդ ենք, այսպէս (միայն) քառասունով, յիսունով կու գանք օգնելու մեր ճակատի զինուորներուն, որոնք հայրենիքը պիտի պաշտպանեն վայրագ եւ երդուեալ թշնամիի մը դէմ» (6):

Անդրանիկ Էրզրում կը հասնի 1918 Փետրուար 17-ին: Արեւմտահայ կռուողներէն շատեր կը փութան Էրզրում, միանալու համար Անդրանիկի ղեկավարած Հայաստանի Երկրապահ Զօրամասին:

Ս. Արմաղանեան եւս, 60 ձիաւորներով, Սարիղամիշէն կու գայ Էրզրում եւ Մակեդոնի խումբին հետ կը մեկնի ռազմաճակատ: Մաքրագործելէ ետք Էրզրումի շրջակայ Թրքական գիւղերուն մէջ գտնուող շարք մը վտանգաւոր

Շար.ը էջ 20


Համերգային
ԽՐԱԽՃԱՆՔ
եւ
ՁՈՒԿԿԵՐՈՅԹ

Կազմակերպութեամբ՝
ԿԼԷՆՏԷՅԼԻ ԱՐՍԷՆ ԿԻՏՈՒՐ
ՄԱՍՆԱՃԻՒՂԻ

Շաբաթ, 13 Ապրիլ 2013
երեկոյեան ժամը 8:00-էն սկսեալ
1060 North Allen Avenue
Pasadena, CA 91104

Տոմսերու համար դիմել՝ (818) 913-9311
ՄՈՒՏՔԻ ՆՈՒԷՐ՝ $25.00

## ՀԲԸՄ ՓԱՍԱՏԻՆԱ-ԿԼԷՆՏԷՅԼ ՄԱՍՆԱՃԻՒՂ «ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅ ԳԵՂԱՐՈՒԵՍՏ 2013»



*«Ժամանակակից Հայ Գեղարուեստ 2013» խորագրով ցուցահանդէսը՝ մասնակցութեամբ հայրենիքէն եւ սփիւռքէն անուանի 14 արուեստագէտներու, տեղի ունեցաւ Փետրուար 22-25 2013ին ՀԲԸ Միութեան Փասատինայի Վաչէ եւ Թամար Մանուկեան Կեդրոնի սրահին մէջ, եւ մեծ յաջողութիւն արձանագրեց արուեստասէր հասարակութեան մօտ:*

*Ցուցահանդէսը կազմակերպուած էր ՀԲԸ Միութեան Փասատինա-Կլենտէյլ Մասնաճիւղի վարչութեան կողմէ, մասնակցութեամբ այլազան երկիրներէ ժամանած արուեստագէտներու, Հերմինէ Դեմիրճեան-Տէմիրօ, (Մեքսիքօյէն), Ֆէլիսք Եղիազարեան, Տիգրան Էքիզեան, Փիթըր Կարապետեան (Քալիֆորնիայէն), Մանուէլլա Կիրակոսեան (Լիբանանէն), Սուրէն Խորէնեան, Սարգիս Համալբաշեան, Գագիկ Ղազանճեան, Տիգրան Մատուլեան, Մարատ Մարգարեան, Լիլիթ Սողոմոնեան, Ռուբէն Գրիգորեան, Կառլոս Սայադեան եւ Կայծ Վանիկեան (Հայաստանէն):*

*Բացման օրը՝ Ուրբաթ, 22 Փետրուար, 2013ին երեկոյեան ժամը 7:30ին, երեք հարիւրէ աւելի արուեստասէրներ հիացումով կը դիտէին ցուցադրուած գործերը, իւղաներկ, ջրաներկ, լուսանկար եւ քանդակ, որոնք ճաշակաւոր եւ արդիական ձեւով ներկայացուած էին: Կազմակերպիչ յանձնախումբի անխոնջ ատենապետ՝ Պարոն Հայկ Մսրլեան բարի գալուստ մաղթեց բոլորին եւ ապա հրաւիրեց Հայց. Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմին Նախկին Առաջնորդ Գերշ. Տ. Վաչէ Արքեպս. Յովսէփեանը, որ աղօթքով բացուած յայտարէ ցուցահանդէսը:*

*Վաչէ Սրբազան, մեծ հիացող մը նկարչական արուեստի, դիտել տուաւ որ «Արուեստագէտը իր Աստուածային տաղանդը օգտագործելով, պաստառի վրայ մեզի մատչելի կը դարձնէ իր տեսածն ու մտայղացումը, ու մենք իր աչքերով կը դիտենք ներկայացուած գործը: «Սրբազան հայրը յիշեց, որ ինք շատ կանուխէն հմայուած է նկարչական արուեստով եւ մեծ սէր ու յարգանք կը տածէ արուեստագէտներու նկատմամբ:*

*Յաջորդաբար խօսք առին նաեւ ՀԲԸՄ Փասատինա-Կլենտէյլ Մասնաճիւղի ատենապետուհի՝ փաստաբան Ալին Խանճեանը, արուեստաբան գէորգ Ջաքօյեանը ինչպէս նաեւ ARAME Արուեստի Ցուցաս-*

*Շար.ը էջ 18*

## «ԼԱՐՔ»Ի ԱՍՏՂԻԿՆԵՐՈՒ ՓԱՅԼՔԸ ԵՒ «ՀԱՅԻ ԱՂՕԹՔԸ»՝ ԳՈՂՏՐԻԿ ԵՒ ԿԱԽԱՐԴԻՉ ՀԱՄԵՐԳԸ



***ԱԶՆԻՒ ՍԱՀԱԿԻ ՊՐՈՒՆՍՈՒԶԵԱՆ***

*Խանդավառ մթնոլորտի մը մէջ տեղի ունեցաւ Քրեսենթա Հովիտի Հայց. Առաքելական Եկեղեցւոյ դաստիարակչական յանձնախումբին կազմակերպութեամբ՝ «Լարք» երաժշտանոցի ուսանող-ուսանողուհիներու «Հայի Աղօթքը» բացառիկ ու աննախընթաց հանդիսութիւնը, Կիրակի, Փետրուար 10ին, «Տիգրան եւ Զարուհի Տէր Ղազարեան» սրահին մէջ:*

*Այս յատուկ եւ որակաւոր հանդիսութիւնը սկսաւ «Լարք» երաժշտանոցի նուիրեալ եւ տաղանդաւոր փոխտնօրէնուհի Թագուհի Կրպոյեան-Արզումանեանի ներշնչող բացման խօսքով: Պէտք է նշել, որ ան արժանացած է Հայաստանի Հանրապետութեան «Պատուոյ գիր»ին եւ իր հոգածութիւնը, առինքնող խօսքն ու ասումնքը կ'արտայայտեն իր անխառն հայուհիի ներդաշնակ նկարագիրը: Ապա, մեծ հաճոյքով ականատես եղանք եւ ունկնդրեցինք «Լարք» երաժշտանոցի 13 հրաշք մանուկներու եւ պատանիներու հայրենաշունչ, ոսկեղնիկ հայերէնով՝ Գէորգ Էմինի «Մենք» եւ «Կիսատ Մնացած Աղօթքը» բանաստեղծութիւնները:*

*Հանդիսութեան յաջորդ մասը նուիրուած էր մեր փառաւոր հայ երաժիշտներու եւ արեւմտեան դասական ստեղծագործութիւններու: «Լարք» երաժշտանոցի 14 ուսանող-ուսանողուհիներ դաշնամուրի, ջութակի եւ թաւջութակի հիանալի կատարողութեամբ, իրենց նուիրեալ եւ տաղանդաւոր ուսուցչուհիներուն ընկերակցութեամբ, հաճոյքի պահեր շնորհեցին ներկաներուն, որոնք վայելեցին եւ քաջալերեցին առինքնող յայտագիրը:*

*Յիշատակութեան արժանի էր օտարազգի ուսանող Քենի Զուան, որ հայաշունչ եւ տպաւորիչ կերպով ներկայացուց Առնօ Բաբաջանեանի «Էլճի»ն: Ելոյթներ ունեցան նաեւ Հենրի Սարոյեան, Օշին Մանուկեան, Ռիչըրտ Միրզոյեան, Նայիրի Այթունեանց, Նանոր Տէր Պետրոսեան, Թամար Շատարեւեան, Քրիսթոֆըր Զուա, Սոֆի Թորոսեան, Արթուր Քէշիշեան, Էլըն Տիշիկրիքեան, Ճենի Միրզոյեան, Իրեն Պաղտասարեան ու Քերան Օրուճեան:*

*«Լարք» ուսանող-ուսանողու-*

*Շար.ը էջ 19*

## ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ ՀԵՐՄԻՆԷ ՍԱՀԱԿԵԱՆ, ԶԱՐՄՈՒՀԻ ՄԻՆԱՍԵԱՆ ԵՒ ԳԷՈՐԳ ՅԱԿՈԲԵԱՆ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԱԾ Ս. ՍԱՀԱԿ ԵՒ Ս. ՄԵՍՐՈՊ ՇՔԱՆՇԱՆՆԵՐՈՎ



*Վաստակաշատ ուսուցիչները գնահատելու իւրայատուկ ձեռնարկ մը տեղի ունեցաւ Շաբաթ, 16 Մարտ, 2013 Գօնօկա փարքի Հ.Բ.Ը.Մ.ի Նազարեան սրահին մէջ:*

*Արդարեւ Հ.Բ.Ը.Մ.ի Մանուկեան-Տէմիրճեան վարժարանի եւ Մելքոնեան Սանուց Միութեան նախաձեռնած սոյն միջոցառման նպատակն էր գնահատել եւ արժանին հատուցանել վերոյիշեալ կրթական հաստատութիւններու մէջ հասակ առած եւ ապա տասնեակ տարիներ անխոնջ նուիրումով ծառայած հայ մշակները:*

*Յուզիչ է պահը նաեւ ոգեւորիչ: Հանդիսավար՝ Հրաչ Սեփեթճեանի ողջոյնի ջերմ խօսքերէն ետք բեմ կը բարձրանան օրուան մեծարեալները Տիկիններ Զարմուհի Մինասեան, Հերմինէ Սահակեան եւ Պրն. Գէորգ Յակոբեան: Բեմին վրայ են նաեւ Արեւմտեան Թեմի Բարեջան առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան եւ Հոգշ. Տաճատ Ծ. Վրդ. Եարտըմեան: Ներկայ հասարակութիւնը յոտնկայս կ'ունկնդրէ Ամենայն Հայոց Հայրապետի՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.ի Կաթողիկոսական կոնդակը, զոր կը կարդայ Հոգշ. Տաճատ Ծ. Վրդ. Եարտմեան: Սոյն կոնդակին մէջ*

*Շար.ը էջ 18*


Yoga for Health

**Introduce your Body to your Brain they might like each other**

Please Join us Every Tuesday and Thursday, starting February 5th, from 7:15pm to 8:30pm and learn how to manage your:

| | |
|---|---|
| MigraineFatigue | |
| Back pain | Body Fat |
| Stress/Anxiety | Sex Drive |
| Irregular heartbeat | Wrinkles |
| Constipation | Blood Circulation |
| Depression | Insomnia |

Location: 1060 N Allen, Pasadena CA 91107
For more Information, Please contact
"Tina Vartabetian" at (818) 720-0277

**1st Month Free**

# Massis Weekly

Volume 33, No. 10 — Saturday, MARCH 23, 2013


### Armenian Constitutional Court Rejects Hovannisian's Election Appeals

## President Sarkisian Rules Out Visiting with Raffi Hovannisian in Liberty Square



President Serzh Sarkissian meets the representatives of Armenian media

YEREVAN — Armenia's Constitutional Court on Thursday rejected opposition leader Raffi Hovannisian's and another candidate's demands to invalidate the official results of the February 18 presidential election that gave victory to incumbent President Serzh Sarkisian.

In a 34-page verdict read out by its chairman, Gagik Harutiunian, the court upheld the decision by Armenia's Central Election Commission, which said there were no legal violations during the vote.

It also rejected Hovannisian's separate demand to declare him the rightful winner of the vote, saying that the leader of the opposition Zharangutyun (Heritage) party failed to present any compelling evidence in support of that claim.

The Constitutional Court scrapped the official vote tally in only one of Armenia's 1,988 electoral precincts where two local observers claimed to have witnessed large-scale ballot stuffing by government loyalists. The precinct covers part of Artashat, a town 30 kilometers south of Yerevan notorious for election-related violence and other violations. The number of voters living there is too small to have any impact on the overall election outcome.

According to the Central Election Commission (CEC), Sarkisian won reelection outright with 58.6 percent of the vote, while Hovannisian finished second with around 37 percent.

The panel of nine judges at the same recognized widespread public distrust in official vote results. In a carefully-worded sentence, it blamed this on the "merger of political, economic and administrative resources" in Armenia.

Tigran Mukuchian, the pro-government chairman of the CEC, welcomed the widely anticipated ruling. He said the court highlighted "baseless judgments and evaluations" made by the opposition candidates.

Zaruhi Postanjian, one of Hovannisian's legal representatives, condemned the decision, accusing Armenia's highest court of "sponsoring" Sarkisian. She also said that the Hovannisian campaign plans to organize alternative "court hearings" on the election at Liberty Square, the main venue of the opposition leader's post-election protests.

Hovannisian, who has been on a hunger strike in the Square since Sunday, is set to continue his protest until Inauguration Day, April 9, warning that President Sarkisian will be sworn in only on his, Hovannisian's, "dead body".

**Sarkisian Rejects Dialogue with Hovannisian**

On Monday President Serzh Sarkisian held a meeting with journal-

Continued on page 2

## ACA-PAC Endorsements for Glendale Municipal Elections



Chahe Keuroghelian, Laura Friedman and Ara Najarian

**Glendale City Council**

GLENDALE, CA -- After a careful evaluation of the candidates and personal interviews, the Armenian Council of America - PAC (ACA - PAC) is pleased to announce the endorsement of Chahe Keuroghelian and incumbent Councilmembers Ara Najarian and Laura Friedman for Glendale City Council.

In the past month, ACA - PAC interviewed and carefully studied the agenda of the candidates for City Council and given their records as community leaders and their commitment to issues of great interest to Armenian-Americans. These three individuals are the most qualified candidates, have the greatest of chance of winning, and are best suited to represent the interests of Glendale community as a whole.

Having a fiscally sound and responsible City government has been a priority of Councilmember Laura Friedman. Friedman has also enthusiastically encouraged cultural diversity within the City, championed creative and entertainment businesses, supported safe streets, and energetically promoted the arts.

Councilmember Najarian has been steadfast in keenly representing the interest of not only Armenian American constituency but the entire Glendale community. As a public servant, Mr. Najarian has continuously worked to improve the quality of life for all of Glendale's residents.

As a strong advocate for improving the local economy of the City, Chahe Keuroghelian, is committed to attracting more businesses to Glendale and has proudly spoken for the often overlooked working class and immigrant population of the City. Mr. Keuroghelian will be a great addition to the upcoming Glendale City Council.

**Glendale Unified School Board**

ACA - PAC is also pleased to announce its endorsement of Glendale Unified School Board candidates Dr. Armina Gharpetian and incumbents Greg Krikorian and Joylene Wagner after evaluating the candidates' responses to issues of concern to the Armenian-American community at large. Seven candidates are seeking election to the 3 seats on the Glendale Unified School District Board slated for the April 2nd Municipal election.

ACA - PAC believes that Greg Krikorian, Dr. Armina Gharpetian and Joylene Wagner are the best choices for the GUSD Board and have demonstrated, through their community outreach efforts, their willingness to lead the school district in areas of maintain-

Continued on page 2

## Chess: Armenia's Aronian Leads in Candidates Tournament

LONDON -- Grandmaster Levon Aronian is a sole leader at the World Chess Candidates Tournament after three rounds of play in the competition being held in London, UK.

Armenia's top chess player has 2 ½ points, half a point clear of the next rival, after registering two wins and one draw.

So far, Aronian has beaten Boris Gelfand (Israel) and Vassily Ivanchuk (Ukraine), tying the game with FIDE's current number one Magnus Carlsen (Norway).

The tournament brings together the world's eight strongest players seeking the right to challenge the current titleholder, Viswanathan Anand from India, later this year.

The competition scheduled to run through April 1. On Tuesday Aronian is scheduled to play second-placed Peter Svidler from Russia.

Official website:
london2013.fide.com

## Circle of Friendship with Karabakh Republic Formed in French National Assembly

PARIS -- A group of municipalities, members of the French National Assembly and Senate, who represent France's major political forces, announced the formation of Circle of Friendship with Nagorno Karabakh Republic (NKR).

They made a special statement appreciating the consistent efforts of the NKR people and authorities to build free and democratic society, calling for an end to the NKR's political isolation and expressing support to the NKR people's right of self-determination.

"Assuming as a basis the absolute significance of the liberty and democratic values stated in the General Declaration on Human Rights, supporting the right to self-determination of all the peoples including the people of Nagorno Karabakh – Artsakh, and being confident that the international isolation of the Artsakh people does not contribute to the dialogue of the peoples and steadfast peace, we – political figures, deputies, and senators of the French Republic, declare about the creation of friendship circle with Artsakh." Reads the statement.

The Circle members are Deputy Mayor of Marseille Roland Blum, Mayor of Vienne Jacques Remiller, MPs Valérie Boyer, René Rouquet, Guy Teissier, François Rochebloine, senators Sophie Zhuassen, Philippe Marini, Bernard Fournier as well as former MPs Georges Colombier and Richard Malia.

## Armenians Salute the Election of New Pope Francis

Argentina's Armenian community has welcomed the election of Cardinal Jorge Mario Bergoglio as new Pope. The community members have stated that Archbishop Bergoglio has always been in friendly ties with them and participated in different events dedicated to the Armenian Genocide and served a liturgy in memory of Genocide victims during the visit of His Holiness Karekin II, Supreme Patriarch and Catholicos of All Armenians.

Seven years ago the archbishop publicly demanded that Turkey admit the Ottoman-era Genocide of Armenians.

The Vatican used the term genocide to describe the massacres of Armenians in the Ottoman Empire in an official communiqué in 2000, under Pope John Paul II.

Bergoglio was elected Pope in a surprise choice on Wednesday, taking the name Francis I and becoming the first non-European pontiff in nearly 1,300 years.

President Serzh Sarkisian and Catholicos Karekin II on Thursday congratulated the new Pope Francis I on being elected as the leader of the Roman Catholic Church, expressing hope that its links with Armenia will strengthen during his pontificate.

"We pray that the Lord will grant to Your Holiness a most fruitful pontificate blessed with many ever-lasting accomplishments for the glory of God and the splendor of the Church of Christ," the supreme head of the Armenian Apostolic Church wrote in his letter.

Karekin II "fondly" recalled his meetings and joint prayers with Bergoglio during a 2004 visit to Argentina, saying that he got to know "a courageous, wise, and just Church Leader." " We are happy to avow Your sincere love and affection shown towards the Armenian people," he said.

Karekin II also said he hopes Francis will build on "significant progress" in relations between the Armenian and Catholic Churches. "It is our prayer that our cooperative efforts will continue to grow into the future and that the relations between our two sister Churches will blossom with new achievements for the sake of meeting the challenges facing humanity," he wrote.

In a separate message, Sarkisian expressed confidence that Pope Francis will spread his "merciful influence" all over the world. He said the Armenian government expects that its "fruitful cooperation" with the Vatican "will continue deepening and developing in the same spirit."

## Azerbaijan Repatriates Armenians

YEREVAN -- Two residents of Armenian border villages who crossed into Azerbaijan in unclear circumstances over the weekend were freed and sent back home by Azerbaijani authorities on Wednesday.

The repatriation facilitated by the International Committee of the Red Cross (ICRC) took place at the westernmost section of the heavily militarized Armenian-Azerbaijani border.

Mnatsakan Karian, an 86-year-old resident of Dovegh village in Armenia's northern Tavush province, crossed the frontier on Saturday. Anahit Arakelian, a 48-year-old woman from a nearby village, did the same on Sunday.

The reasons for the crossings remain unclear. Military authorities in Yerevan have not yet commented on those incidents.

Both Karian and Arakelian were detained immediately after entering Azerbaijan. The ICRC said its representatives visited them "in order to assess their treatment and conditions of internment."

"Acting as a neutral intermediary and in accordance with its mandate, the ICRC facilitated this repatriation in conjunction with the Azerbaijani and Armenian authorities," read a statement by the Red Cross. "The internees had previously confirmed to ICRC delegates that both were returning of their own free will."

Throughout the Nagorno-Karabakh conflict, civilian residents of Armenian and Azerbaijani settlements located close to the frontier have occasionally crossed it, usually because of going astray. In one such example, an Azerbaijani villager crossed into Tavush last November and was repatriated two weeks later.

Manvel Saribekian, a 20-year-old Armenian civilian, met a more tragic fate. Saribekian was found hanged in an Azerbaijani prison cell three weeks after being detained by Azerbaijani border troops in September 2010.

The Azerbaijani government said he committed suicide, a claim strongly denied by the Armenian authorities. They said Saribekian was brutally tortured and murdered in Azerbaijani custody.

## President Sarkisian Rules Out Visiting with Raffi Hovannisian

Continued from page 1

ists and criticized Raffi Hovannisian for disputing the legitimacy of his re-election and claiming to represent most Armenians, saying that only a tiny segment of the country's population is participating in demonstrations organized by his main election challenger. Sarkisian also voiced skepticism over possible dialogue with Hovannisian.

"When they say that the people are out in the streets it sounds very strange to me," he told a rare news conference organized for a limited number of broadcast media outlets. "On average, only 3,000 people participate in these rallies taking place in Liberty Square ... Even if the opinion of every person matters to us, 3,000 people account for only 0.1 percent of our citizens."

Sarkisian claimed that Levon Ter-Petrosian, the main opposition candidate in the 2008 presidential election, rallied ten times as many people in the same venue when challenging official vote results, despite getting fewer votes than Hovannisian. The latter has therefore no right to speak on behalf of the nation, he said.

Hovannisian has repeatedly urged the incumbent to recognize "the people's victory" in the ballot and "return power to the people" by leaving office. He went on hunger strike over a week ago to continue pressing those demands. The U.S.-born oppositionist, who remains camped out in Liberty Square, has also demanded that Sarkisian visit and talk to him.

Sarkisian ruled out the possibility of such a visit, however. "I'm asking myself: what should I talk with Raffi Hovannisian about? What should I negotiate on with a man who is bitter at the world and has been hungry for eight days?" he said.

"If I were to go [to the square] I would do that for one purpose: to once again urge and ask Raffi Hovannisian to end the hunger strike and choose other methods of struggle. I'm doing it now," he said.

"But you know, there is aother very important circumstance: I don't know the purpose for which Raffi Hovannisian went on hunger strike," added Sarkisian.

## Foreign Minister Edward Nalbandian: Baku 'Only Responsible' for Lack of Progress in Karabakh Settlement

YEREVAN -- Armenian Foreign Minister Edward Nalbandian has called Azerbaijan the only party responsible for the lack of progress in the Karabakh peace process answering criticism voiced by the neighboring state's leader on Tuesday.

In comments made to News.am, Armenia's top diplomat said authorities in Baku are themselves to blame for the unchanging status quo and the international community is well aware of this.

"If Azerbaijan is, in fact, interested in a status quo change, it should have given consent to the proposals of the [OSCE Minsk Group] Co-Chairs instead of rejecting them over the last few years," said Nalbandian.

In a speech made on the occasion of Nowruz on March 19 Azerbaijani President Ilham Aliyev accused Armenia of assuming a 'non-constructive' position in the settlement of the Karabakh conflict, insisting that Yerevan is interested in the maintenance of the status quo.

He also contended that while Azerbaijan was getting stronger from year to year, Armenia was getting weaker due to its isolation from major regional projects – a policy that he said Azerbaijan will continue to pursue in the future as well.

In this regard, the Armenian foreign minister stressed that the difference between Azerbaijan and Armenia is indeed "huge". He said that while Azerbaijan is strengthening an authoritarian regime, Armenia is strengthening democracy.

"It is clearly seen in the assessments and rankings issued by international agencies," he said.

"In Azerbaijan they think they can buy reputation, friends, and erect monuments, push forward questionable resolutions and present this to the Azerbaijani society as an achievement and as proof of high reputation. It is not the money and caviar that helps build international reputation. We have recently witnessed what happened to no less rich and self-confident authoritarian regimes," concluded Nalbandian.

## ACA-PAC Endorsements



Dr. Armina Gharpetian, Greg Krikorian and Joylene Wagner

Continued from page 1

ing a high level of educational quality for all residents in Glendale.

Some of the goals for ACA – PAC are to not only ensure that GUSD students have equal access to receiving a quality education, but to also gain a higher level of cultural diversity appreciation in order to promote a prosperous multi-cultural coexistence. Maintaining a smaller class size and increasing the number of Armenian language courses in middle schools and high schools are also high priorities.

"I am proud and honored to receive the support of the ACA - PAC," said incumbent Greg Krikorian. "As I run for re-election, I am reminded of the need to advocate for all the diverse students in our district in order to prepare them for the future."

"I am truly honored and humbled to receive the endorsement of ACA - PAC and the overwhelming encouragement of its members," said Dr. Gharpetian.

The Armenian Council of America – PAC is dedicated to educating the Armenian-American community in local political affairs, as well as actively pursuing Armenian-American participation in their respective local governments, to support political candidates who share the values of the Armenian American community.

# Erdogan's Refusal to Learn the Lessons of Crimes Against Humanity

**By Hrayr S. Karagueuzian**

Prime Minister Recep Tayyip Erdogan, speaking at the 5th Global Forum of the United Nations Alliance of Civilizations (UNAOC) in Vienna on February 27, 2013 said: "The world should consider Islamophobia just like Zionism or anti-Semitism or fascism, a crime against humanity." The PM had already expressed in the past his anger with Israeli policies in blunt terms at World Economic Forum at Davos, Switzerland in 2009, when he suddenly stormed off the stage at the mid of a heated discussion of Israel's Gaza offensive and after telling President Shimon Peres: "When it comes to killing, you know well how to kill."

The irony behind these two dark and irresponsible condemnations is that Mr. Erdogan's own government continues to uphold a policy in today's Turkey that is precisely based not only on crimes against humanity but also on the legacy of the art of mass killings. Indeed, "crime against humanity" was first used in history on May 24, 1915 when the British, French and Russian Allies in a joint declaration condemned the Turkish authorities for the planning and the implementation of the wholesale massacres of Armenians in Turkey. The declaration reads in part: "In view of these new crimes of Turkey against humanity and civilization… the Allied governments announce publicly …that they will hold personally responsible all members of the Ottoman government and those of their agents who are implicated in such massacres. The adjective "new" appended to the words "crimes of Turkey" goes beyond the present and establishes a legacy of mass murders in the past. That legacy seems to well and alive in Turkey today. The Turkish PM may well know that the International Criminal Court on March 2009 ordered the arrest of President Omar Hassan al-Bashir of Sudan, a good friend and ally of Erdogan (see attached photo), charging him with war crimes and crimes against humanity for a concerted government campaign against civilians in the Darfur region of Sudan. More than 2.5 million people have been chased from their homes and 300,000 have died in a conflict pitting non-Arab rebel groups against the Arab-dominated Islamic government and militias of President al Bashir. It seems for the PM that when a crime against humanity is committed by a Muslim country it is not a crime, however, it becomes a crime only in the case of the non-Muslims.

As for the art of mass killings, history has consistently shown that the Ittihadist regime (the party that controlled the Turkish Empire during WWI) continued what the Ottoman Sultanate did previously and the Kemalist's "Death Squads" thereafter which became known as "finishing the genocide." Starting 1930s and up to now the Armenophobia, and the systematic massacres of the Kurds continued of which the Dersim tragedy is just now being articulated. The legacy of brutality with which these acts of mass killings were committed during the Kemalist phase captured the attention of the post-WWI British High Commissioner in Constantinople, who included in his London report the following:



"The Turks have an expression, "yavash–yavash," which means to go slowly. That is how clearing Trebizond of its remaining Christian population is being managed.… Now they are going after the little boys. It used to be conscription that was invoked as an excuse to take the men. When they got down to deporting the boys from 15–18, the Turks said it was to give them preliminary training. Now—as I write— they are making a new visitation of the angel of death in Greek homes, and seizing boys from 11 to 14. The poor little kiddies are gathered together like cattle, and driven through the streets to the Government House, where they are put in filthy dungeons half underground. One could not believe this was possible."1

More so, one can not believe the audacity of the Turkish PM to preach civility and condemnation of crimes against humanity at international forums at a time when his own government continues to enforce the infamous Article 301 that bans Turkish citizens' to expose their Armenian ancestry. Violators of Article 301 are charged with "insulting Turkishness" and become liable for prosecution, forced exile, jail terms, and even assassination as in the case of the Turkish-Armenian editor and journalist Hrant Dink in front of his office on January 19, 2007. Turkish and international news media did not dismiss the planning of the assassination by the Turkish security forces, dubbed as the "Deep State." The motivation in the murder of Dink was to prevent him to unravel the names of millions of Turks who have Armenian ancestry but were afraid of publicly acknowledgment. In the words of the Turkish Foreign Minister Daoud Oglo, a close protégé of the PM, "he was talking too much."

It would be thoughtful for the Grand Vizier to give a hard look at his own governments', past and present policies of committing and covering up crimes against humanity before preaching civility at international forums.

**1 Hrayr S. Karagueuzian & Yair Auron; A Perfect Injustice: Genocide & Theft of the Armenian Wealth. Transaction Publishers, Rutgers University, NJ 2009**

# Mark Geragos and Pat Harris: Mistrial

## An Inside Look at How the Ceiminal Justice System Works ... and Sometimes Doesn't

We the people, immersed in "Boston Legal," "Law and Order," and "The Good Wife," believe we know what goes on in a court of law. Media attention to high-profile cases like the Casey Anthony verdict and our unprecedented access to real-life in-court drama, via the televised O.J. Simpson trial, and others, have lulled us into thinking we understand the American judicial system. We are so wrong.




Now, in MISTRIAL: An Inside Look at How the Criminal Justice System Works … and Sometimes Doesn't (Gotham Books; April 2013; $27.00) Mark Geragos, JD, and Pat Harris, JD, upend the scales and reveal why "justice" often literally is blind in this land of stealth jurors manipulating their way onto cases so they can convict a defendant, cops who feel compelled to lie on the witness stand, detectives who sell confidential police information, defense attorneys too scared to go to trial, and clients eager to bribe judges.

Mark Geragos and Pat Harris, two of America's leading criminal defense attorneys, take readers inside some of the most compelling and sensational trials of the past 20 years. They have worked on cases that involved celebrities (Michael Jackson, Chris Brown, Winona Ryder, Mike Tyson) and on cases that have made ordinary people into celebrities (Susan McDougal, Scott Peterson, Gary Conduit).

Going behind the legal scenes, Geragos and Harris assess the dramatic changes that have occurred in our judicial system, making it heavily weighted toward the prosecution. They examine how politics shifted the balance, the strategies that fed misconceptions that courts were soft on crime, why the O.J. Simpson trial spiraled out of control and the powerful impact it had on future jurors countrywide, and

Continued on page 4

# Book and Film Review:

# My Mother's Voice - A Genocide Survival Story






GLENDALE, CA -- My Mother's Voice, an updated book (2013 Edition) and new documentary, tell the moving story of Flora Munushian's teenage years, and are written and produced by her daughter Kay Mouradian. From 1914-1919, Flora traveled from Hadjin, Turkey to Aleppo, Syria then ultimately to the United States, a survivor of the Armenian Genocide.

"I am my mother's voice," Kay Mouradian declares in the new edition of her book and her moving documentary. "She told me in no uncertain terms that I was going to write a book about her." This hadn't been Mouradian's goal or even a thought until her mother's last years. Luckily, she did take up the challenge, presenting the story of her mother's harrowing teenage years from 1915-1919.

Flora Munushian was a 14-year-old Armenian girl attending an American school in Hadjin, Turkey when a deportation order forced her community on a death march to Der Zor. Her father managed to stow his daughters in Aleppo, where she and her sister hid for the duration of WWI. Flora never saw her parents or her brothers again. At the age of 18, she sailed to the U.S. to marry an Armenian man she'd never met.

Mouradian's narrative is well-

Continued on page 4

## "Resistances to the Armenian Genocide" is Theme of April 6 Conference at CSUN

California State University
**Northridge**
**"RESISTANCES TO THE ARMENIAN GENOCIDE"**
A CONFERENCE ORGANIZED BY
THE ARMENIAN STUDIES PROGRAM

NORTHRIDGE, CA -- The Armenian Studies Program (ASP) at the California State University, Northridge (CSUN) has organized a conference on the theme of "Resistances to the Armenian Genocide" that will take place on Saturday, April 6, 2013, at the University's Grand Salon, from 9:30 a.m.-1:15 p.m. The event is co-sponsored by the Department of Modern and Classical Languages and Literatures, the Alumni and Friends of the ASP, and the United Armenian Council for the Commemoration of the Armenian Genocide, Los Angeles.

During the Armenian Genocide, several types of resistance existed. Where did defiance emanate from? What were the motives? Was any success achieved? How such acts have been perceived or treated? These are some of the questions that the following five experts will address:

Dr. Rubina Peroomian: "Armenian Resistance to the Genocide: An Assessment of Circumstances and Outcomes"

Dr. Barbara J. Merguerian: "Peaceful Resistance: American Missionaries in Wartime Turkey, 1914-1917"

Dr. Garabet K. Moumdjian: "Muslim Resistance to the Armenian Genocide in the Southern Theater of War: Jemal Pasha and the 4th Army Corps"

Mr. Aram Arkun: "Post-World War I Violence and Resistance in Cilicia"

Dr. Vahram Shemmassian: "The Musa Dagh Resistance in the Armenian Genocide Denial Campaign."

To get to the Grand Salon at CSUN, conference attendees may park in Parking Structure #3 on Prairie St., off of Zelzah Ave. The parking permit is $6.00, and can be purchased at info Booth 3 or dispensers by elevators in the parking structure. The link to the campus map is: http://www.csun.edu/maps/.

For further inquiries, contact Prof. Shemmassian at (818) 677-3456 or vahram.shemmassian@csun.edu

## Merdinian School Board of Directors to Celebrate Its 31st Anniversary Banquet

SHERMAN OAKS, CA -- March 18, 2013 – The Board of Directors of the Charlotte & Elise Merdinian Armenian Evangelical School will host its 31st Annual Banquet on Sunday, April 7, 2013 at the Kalaydjian Banquet Hall of the St. Leon Armenian Cathedral located at 3325 N. Glenoaks Blvd., Burbank, CA 91504. Major donors, Mr. & Mrs. Albert and Terry Bezjian and Mr. & Mrs. George and Vivian Lousararian will be honored during the banquet. During the same event, Mr. Jack Muncherian and Mrs. Ashkhen Ispendjian will be recognized for their exceptional services to the school. The elegant evening of fine dining and entertainment will also feature a special program presented by Merdinian students and alumni.

The Board of Directors extends an invitation to all friends and supporters as well as alumni to attend the banquet and join the celebration.

Established in 1982, WASC-accredited C & E Merdinian Armenian Evangelical School is dedicated to providing an academically rich and spiritually invigorating education for its entire preschool through 8th grade student body. The school prepares its graduates to be responsible American citizens and future leaders who are firm in their Christian beliefs and proud of their Armenian heritage.

Merdinian School is a non-profit organization and welcomes all tax-deductible donations for the proper use and support of the school.

For tickets to the banquet or additional information about Merdinian School, please contact the School Office at (818) 907-8149 or visit their website at www.merdinianschool.com, respectively.

## Mark Geragos and Pat Harris: Mistrial

**Continued from page 3**

the deep influence of media coverage. Zeroing in on the wide margins of error, Geragos and Harris scrutinize defense attorneys, prosecutors, judges, jurors, clients, cops, and the media, and the roles they play in changing your perception of the truth.

Far from preserving the credo of "innocent until proven guilty," more jurors than ever are entering the court convinced that our system could not get it wrong. The falsely accused are confessing to crimes they did not commit, and only a portion of the wrongly convicted defendants are being proven innocent and released, following re-evaluation of evidence.

MISTRIAL will change forever your outlook as a juror, and make you think twice about your rights as a defendant. You will question why the public is so willing to overlook a D.A. who jails an innocent person.

A manifesto on the ills of the criminal justice system, and outlining steps that can be taken to bring balance back, MISTRIAL is a fascinating and timely read for legal eagles and arm-chair arbiters, alike.

## AMAA Orphan and Child Care Luncheon Fashion Show and Silent Auction Saturday, April 13, 2013

BEVERLY HILLS, CA -- All preparations are almost completed for the AMAA Orphan and Child Care Luncheon and Fashion Show, scheduled for Saturday, April 13, 2013 at the legendary Beverly Hills Hotel! This year's fashion show will once again be produced by Nordstrom and the committee members are hard at work, coordinating our beautiful models for fittings and practices.

The luncheon co-chairs, Joyce Stein and her daughter Tina Segel, are hard at work on the last details of this spectacular luncheon. "Everything is so beautiful… the children are absolutely mesmerizing", said Tina, while her mother was on the telephone, taking in yet another reservation. "No detail will be spared", added Tina, "all with a personal touch..." Jessica Vartoughian will once again be donating wonderful favor bags full of Jessica Cosmetics products for each guest! All of our guests will be very excited with the favor bags this year… which will be full of surprises as well.

"Our young models are so charming and are so excited to be a part of the luncheon," stated Marilyn Bezdikian, who is coordinating the fashion show with Nordstrom personnel. Ani Zakari has been busy coordinating all the models who are excited to participate in this year's show. As in previous years, guests attending the luncheon will be able to sponsor children in Armenia. "It is such a blessing to have such love and care outpouring for the children in Armenia." Tina adds that "it is frightening to think that any one child would go without the basic necessities of life in our homeland."

This year's luncheon will once again have an amazing silent auction. Paulette Geragos and Leslie Kevorkian, the auction co-chairs, say that "there are so many wonderful items this year for our guests to bid on. Year after year, our silent auction is so popular because every individual who attends knows that the proceeds are going towards a needy child." Once again, this year's silent auction will have many authentic gift items from Armenia, handpainted works of art, amazing crystal and porcelain pieces, magnificent jewelry and gift baskets galore, hotel and golf packages, spa packages, not to mention event tickets to virtually sold-out venues!

Yes! This definitely is the luncheon NOT TO MISS… The monies raised will feed many hungry children in Armenia and Karabagh, and support many worthy programs that help these children. Joyce Stein adds that "the funds go directly to benefit the children—I have personally seen with my own eyes the benefits bestowed upon our children in Armenia with funds raised here in the United States. I have witnessed how much a little from us here can do over there."

Sandra Kalemkiarian and Melody Petrossian are taking reservations for the event. Last year we sold out so please make your reservations early. Your presence and support will be appreciated by the AMAA Child and Orphan Care Committee and the children of Armenia. For reservations or further information, please contact Elizabeth Agbabian at (310) 476-5306, or Savey Tufenkian at (818) 956-8455.

## My Mother's Voice - A Genocide Survival Story

**Continued from page 3**

paced and action-packed, with the right amount of carefully researched details. Told from her mother's point of view, the story highlights Flora's drive to get an education, her youthful idealism and her inner strength. The book is a great read for both young readers and adults, with a positive message and story arc.

The film based on the book takes a more historical look at the genocide's impact on Flora and her family. Among its visuals: a copy and translation of the deportation order posted in Hadjin; a photograph of Rev. Hovhanness Eskijian, who rescued Flora, her sister and hundreds of Armenian orphans in Aleppo; and a photograph of Flora's family – most of whom perished during the march or in Der Zor.

A neighbor introduced Mouradian to award-winning filmmaker Mark Friedman, who worked diligently with her to produce the documentary. "He was so far-sighted, and very resourceful," Mouradian said. Together they searched out original film footage and were able to use portions of the 1919 silent film Ravished Armenia that appears on Zareh Tjeknavorian's DVD Credo.

Tjeknavorian wrote to Mouradian, "Congratulations to you and Mark for so beautifully and affectingly bringing the message of your mother's life to the world. Her voice speaks so eloquently through your own. This film, and the vast history it artfully distills into such a poignant and positive personal story is as much a testimony to the resiliency of family and culture across generations as it is to the evil that sought to destroy them. I am sure it will go a long way to honoring the memory of Flora and the millions she speaks for."

Mouradian's South Pasadena community links not only got her introduced to a top-notch film collaborator, they have also supported and recognized her educational and civic endeavors. While serving as LA Community College Professor of Health and Physical Education, she published guidebooks and studies on yoga. She was honored for her professional and literary achievements by Congressman Adam Schiff (D-Calif.), who named her 2012 Woman of the Year for South Pasadena.

The South Pasadena audience at a preview of the documentary last September was strongly affected by the film. "The film is tastefully, artfully done, the music is beautiful, and your narration hit all the right notes," one viewer wrote later. "It's a shock (and a shame) that this subject is not taught in high school history classes. I sure didn't know much about it until I moved to Glendale and started talking with Armenian friends."

My Mother's Voice premiered at Toronto's Pomegranate Film Festival in October 2012, and was also featured at Los Angeles' ARPA Film Festival in December 2012.

# ՈՐՍԿԱՆ ԱԽՊԵՐ
## (ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԱԾՔ)
## ԱՐԱՄ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 110-ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻՒ

*ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ*

*- Նինա՛, Երեւան եմ գնում, հենց այսօր, երեկոյեան, պատրաստիր իրերս...:*

*- Ինչո՞ւ այդպէս յանկարծակի Արամ, ի՞նչ է պատահել:*

*- Հեռագիր է եկել Երեւանից, հասկանո՞ւմ ես: Ինչպէս գիտես, երկու տարի յետոյ, 1939ին, այստեղ, Մոսկուայում, տեղի է ունենալու Հայ Արուեստի եւ Գրականութեան տասնօրեակ: Հայաստանի իշխանութիւններն ուզում են, որ հայկական բալետ գրեմ այդ փառատօնի համար:*

*- Է..., դրա համար ի՞նչ կարիք կայ Երեւան գնալու...:*

*- Ի՞նչպէս թէ սիրելիս..., ազգային բալետ գրելու համար ես պէտք է է՛լ աւելի խորամուխ լինեմ ազգային ժողովրդական երաժշտութեան մէջ: Ճիշդ է՝ Թիֆլիսում ապրածս տարիներին, հայաշատ Հավլաբար թաղամասում ես շատ եմ լսել հայկական երաժշտութիւն, բայց մեր ժողովրդի իսկական ժողովրդական արուեստին աւելի քաջատեղեակ լինելու համար հարկաւոր է լինել այդ արուեստի բնօրրանում՝ Հայաստանում, հասկանո՞ւմ ես հոգեակս:*

*- Երեւի դու իրաւացի ես Արամ Ջան...:*

*- Ի հարկէ, իրաւացի եմ: Ես այնտեղ, տեղում պիտի գրի առնեմ ժողովրդական երգիչների շուրթերից ու նուագողներից դուրս յորդած մաքուր, պարզ ու անաղարտ երգեր ու մեղեդիներ:*

*- Անվերապահօրէն համաձայն եմ սիրելիս, ես վստահ եմ քո ուժերին: Կասկած չկայ, որ քո հայրենակիցները շատ լաւ գիտեն քո կարողութիւնները: Վստահ եմ դու յուսախաբ չես անի նրանց:*

***

*...Երեւանի «Ինտուրիստ» հիւրանոցում մի սենեակ են առանձնացնում Խաչատուրեանի համար, գտնում են նաեւ մի դաշնամուր, եւ կոմպոզիտորն օրնիբուն իր մօտ է հրաւիրում ժողովրդական եւ գուսանական երգի վարպետներին, գրի առնում նրանց կատարած այս կամ այն երգն ու մեղեդին:*

*Երբ արդէն նա աւարտած էր համարում իր գործունէութիւնը Հայաստանում, վերջին օրը, մեկնելուց մի քանի ժամ առաջ, հիւրանոցի իր սենեակի դուռն է թակում մի երիտասարդ:*

*- Ես մի երգ եմ բերել ձեզ համար վարպետ, - ասում է նա, դեռ սենեակի մէջտեղը չհասած:*

*- Տղա՛յ Ջան..., լաւ ես արել, որ եկել ես, բայց... բայց ես արդէն վերջացրել եմ իմ գրառումները եւ հսկայական նիւթ ունեմ ձեռքիս տակ: Ի՛նչ ասեմ..., բայց քանի որ եկել ես, դէ երգի՛ր, երգիր տեսնենք, թէ դա ինչ երգ է, գուցէ լսե՞լ եմ:*

*- Վարպետ Ջան, ես երգիչ չեմ..., ես դուդուկահար եմ, - ասում է դուդուկահարը եւ ծոցագրպանից հանում է դուդուկը:*

*- Ախ այդպէ՛ս..., դու դուդուկահար ես..., ի՞նչ կայ որ, նուագիր բարեկամս, դէ, նուագիր:*

*Սկզբում փոքր-ինչ անտարբեր հայեացքով երիտասարդ երաժշտին նայող կոմպոզիտորը հետզհետէ լարեց ուշադրութիւնը եւ աշխատում էր բաց չթողնել ոչ մի հնչիւն: Երբ աւարտուեց կատարումը, Խաչատուրեանը ցատկեց տեղից ու մօտենալով դուդուկահարին, անզուսպ հրճուանքով հարցրեց.*

*- Ո՞ւմ երգն է երիտասարդ..., ինչ հիանալի մեղեդի է: Ի՞նչ կը լինի բարեկամս, մէկ անգամ էլ նուագիր:*

*Երկրորդ կատարումից յետոյ կոմպոզիտորը է՛լ աւելի յուզուած ու ազդուած, մի քանի վայրկեան լուռ մնալուց յետոյ, հազիւ կարողացաւ հարցնել.*

*- Ո՞վ է այս երգի հեղինակը, բառերն ո՞ւմն են երիտասարդ:*

*- Կը ներէք վարպետ, ես միայն երգի անունը գիտեմ՝ «Որսկան ախպեր», բայց բառերը չգիտեմ, կարծում եմ Չարենցը կ՛իմանայ, ես քիչ առաջ նրան տեսայ ռեստորան մտնելիս: Կարծում եմ, հիմա նա այնտեղ կը լինի:*

*- Գնա՛, գնայ գտիր նրան ու վերեւ կանչիր, ասա՛, թէ ինչի համար է:*

*Քիչ յետոյ, երիտասարդ դուդուկահարի հետ սենեակ է մտնում Չարենցը՝ փոքր-ինչ օրօրուելով:*

*- Էդպէս հա՛..., չա՞տ էք հաւանել «Որսկան ախպերը»..., ինչա՛րկէ հաւանելու երգ է: Ես լաւ գիտեմ այդ երգը..., շուտով ես էլ եմ երգելու այնտե՛ղ..., միայնակ եղած ժամանակ,-ձեռքով անորոշ կողմ ցոյց տալով ասաց բանաստեղծը, - բառերը Իսահակեանինն են:*

*- Ո՞ւր է նա հիմա,- շտապով հարցրեց Խաչատուրեանը:*

*- Ֆրանսայում, Փարիզում է...,- ասաց բանաստեղծը, միաժամանակ յենուելով պատին, որ չընկնի:*

*- Ասա՛, Չարենց, ասա՛ բառերը, խնդրում եմ: Ինչի՞ մասին է, ենթադրում եմ, որ շատ վշտոտ պիտի լինի:*

*- Ճիշդ ես ենթադրում վարպետ, միայն թէ վշտոտը քիչ է, ողբերգութիւն ասա՛, մի ամբողջ ժողովրդի ողբերգութիւնն է սա: Այն, թէեւ մի քանի քառեականոց բանաստեղծութիւն է, բայց պոէմ է, պոէ՛մ: Հայերիս ողջ ողբերգութիւնն ասեմ, ճակատագիրն ասեմ, բախտն ասեմ, ամփոփուած է այս բանաստեղծութեան մէջ..., հապա լսիր.*

Որսկան ախպեր, սարէն կու գաս,
Սարի մարալ կը փնտռես,
-Ասա՛, եարա՞բ դուն չտեսար
իմ մարալս, իմ բալէս:

*- Հրաշալի՜ է, - պոռթկում է Խաչատուրեանը:*

*- Սպասի՛ր, սպասիր Արամ, դու շարունակութիւնը լսիր: Ինչպէս գլխի ընկար, կորած որդու մայրն է որսկանին հարցնողը, ապա լսիր.*

Դարդի ձեռէն սարերն ընկաւ,
Իմ արեւս, իմ բալէս.
Գլուխս առաւ, քարերն ընկաւ
Իմ ծաղիկս, իմ բալէս:

*- Ասում ես Իսահակեանինն է, այո՞..., կարծես ժողովրդական բանահիւսութիւն լինի...:*

*- Լա՛ւ հասկացար Արամ, ապրես, այսքան տարի է ապրում ես օտար միջավայրում, բայց կարողանում ես զանազանել ժողովրդականն ու մասնագիտականը: Բայց արի ու տես, որ ժողովրդական չէ, Իսահակեանինն է:*

*- Ի՞նչպէս չեմ իմացել Չարենց:*

*- Ի՞նչպէս կարող էիր իմանալ, երբ միայն վերջին տաս-տասնհինգ տարիների ընթացքում է շօշափւում Իսահակեանի անունը մեր գրականութեան մէջ: Իսահակեանի մեծութիւնը կայանում է նրանում, որ նա կարողացել է գեղարուեստական բարձր վարպետութեամբ վերարտադրել ժողովրդական խօսքը, ոգին: Շատ քիչ մարդիկ գիտեն, որ «Որսկան ախպեր» բանաստեղծութեան հեղինակը Աւօն է: Այդ է պատճառը, որ հայ գիւղացին իրենն է համարել «Որսկան ախպերը»՝ «ըշտէ մերը» ասելով, ու չի կարողացել հաշտուել այն մտքի հետ, թէ դրա հեղինակը լայնեզր գլխարկ դրած, «ուսումնական եւրոպացի» մի երիտասարդ է: Արամ Ջան, դու դեռ շարունակութիւնը լսիր: Տես, թէ ինչպէս է զարգանում ողբերգութիւնը: Այժմ որսորդն է պատասխանում որդեկորոյս մօրը.*



Տեսայ, բոյրի՜կ, ճխշուն բալէդ
Կարմիր-կանաչ է կապեր.
Սիրած եարի համբոյրի տեղ
Սրտին վարդեր են ծլեր:

*- Հիմա դարձեալ մայրը պիտի հարցնի, նա չըմբռնեց որսորդի ասածը, նրան հետաքրքրողն այլ բան է: Հապա լսիր, Արամ.*

Որսկան ախպե՜ր, ասա, խաբար
Ո՞վ է հարսը իմ բալիս.
Ո՞վ է գրկում չոր գլուխը,
Իմ մարալիս, իմ բալիս:

*- Պարզապէս հոյակապ է, Չարե՛նց: Կարծում եմ՝ մօր հարցումին պատասխան պիտի լինի, - ասում է ոգեւորուած Խաչատուրեանը:*

*- Այն էլ ինչպիսի՜..., ողբերգութիւնը հիմա է սկսւում:*

*- Այդ դէպքում, բարեկամս, խնդրում եմ երգելով ասա շարունակութիւնը, իսկ դու, երիտասարդ, նուագիր Չարենցի հետ, - աւելացնում է Խաչատուրեանը, խօսքն ուղղելով մինչ այդ սենեակի անկիւնում ոգեւորութիւնից քարացած երաժիշտ-դուդուկահարին:*

*- Էդ չեղա՜ւ, Արամ: Ինձնից ի՞նչ երգող, մէկ-մէկ քթիս տակ մռմռում եմ էլի...,- ասում է Չարենցը:*

*- Ոչ, միայն երգելով շարունակիր, ես գիտեմ, որ դու լաւ ես երգում, մանաւանդ, երբ տրամադրութիւնդ բարձր է լինում..., ասենք այնպիսին, ինչպիսին հիմա է...*

*- Չէ՜, բարեկամ, այսօր այդպիսին չէ..., այսօր ես մի տեսակ ուրիշ եմ..., ինչոր մի բանի եմ սպասում, ինքս էլ չգիտեմ, թէ ինչի...: Այնուհանդերձ կարելի է փորձել, եթէ այդքան խնդրում ես: Միայն թէ, երիտասարդ, իջիր ներքեւ, ռեստորան, - դիմելով դուդուկահարին ասաց բանաստեղծը եւ շարունակեց,- ասա մի քիչ խմելու բան տան..., ասա, որ ինձ համար է..., նրանք գիտե՛ն...: Թէ տղաները հարցնեն, ասա, որ համերգի եմ պատրաստւում...:*

*Քիչ անց սկուտեղով լի ուտելիք եւ խմիչք են բերում Խաչատուրեանի սենեակը: Չարենցը մի ումպով խմում է դուդուկահար երիտասարդի լցրած լիքը բաժակը եւ առանց հրաւէրի սպասելու, սկսում է երգել կիսատ թողած երգը: Դուդուկահարը վերցնում է գործիքը, գնում շրթներին ու երգի կէսից միանում «երգիչ» բանաստեղծին.*

Տեսայ, բոյրի՜կ, դարդոտ բալէդ
Քարն է դրեր բարձի տեղ,
Անուշ բնով տաք գնդակն է
Կրծքում գրկեր եարի տեղ:

*Չարենցը չի կարողանում շարունակել երգը, նրա աչքերից հոսում են արցունքները, չի էլ փորձում թաշկինակն հանել գրպանից: Կոմպոզիտորը պապանձուել է, նրա աչքերն էլ են թրջուել, եւ մինչ այդ հանդիստ նստած, նա ձեռքը մեկնում է կողքի փոքրիկ սեղանին դրուած գինու շշին:*

*Մնացել է մի քառեակ՝ վերջին քառեակը: Դուդուկահարը ներքուստ զգում է, որ երգը չի աւարտուել ու շարունակում է նուագել: Այդ նուագը դառնում է մի տեսակ նախանուագ վերջին քառեակից առաջ: Արդէն ոչ առաջուայ նման երկչոտ, վստահօրէն, ձայնը փոքրի-ինչ բարձրացնելով, շարունակում է երգել*

*Շար.ը էջ 19*



**BOWLING NIGHT**

HOTED BY: **GAIDZ YOUTH ORGANIZATION**

**MARCH 29TH 7:00 PM**

**AT 300 BOWLING PASADENA**

(3545 E. Foothill Blvd. Pasadena, CA 91107)

EACH WILL PAY FOR THEMSELVES

FOR MORE INFORMATION CALL: (626) 854-5575

# ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ (ՊԷՅՐՈՒԹ) ՇՐՋԱՆԱՒԱՐՏԻՑ ՄԻՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹԸ




*Հրաչ Մուրատեան, տնօրէնուհի Մարալ Տէյիրմէնճեան եւ Սահակ Շամլեան*

21-րդ դարուն այլեւս կարելի չէ խօսիլ հեռաւորութիւններու մասին, ոչ ալ նորութիւններէն անտեղեակ ըլլալ: Արհեստագիտութեան արագընթաց վերելքը մեզ կը ստիպէ քայլ պահել իրեն հետ: Աշխարհի որեւէ հեռաւոր անկիւնէն սիրելի մը մէկ օրուան ընթացքին կողքիդ կը գտնուի բաժնեկցելու ուրախութիւնդ ե տխրութիւնդ: Իսկ անոնք, որոնք յարգելի պատճառներով կողքիդ ներկայ պիտի չկարենան ըլլալ, կրնան ուղիղ եթերով դիտել ու մասնակից դառնալ ուրախութեանդ ու յաջողութեանդ:

Այդպէս ալ ըրաւ Հայ Աւետարանական Կեդրոնական Բարձրագոյն վարժարանի Ամերիկայի Շրջանաւարտից Միութիւնը: Ի նպաստ վարժարանի արդիականացման կատարուած ճաշկերոյթին հրաւիրեց վեց տարիներու վաստակ ունեցող տնօրէնուհին՝ Տիկ. Մարալ Տէյիրմէնճեանը, որ դպրոցէն ներս տեղի ունեցող դրական փոփոխութիւններու տեսաերիզ մը ցուցադրելով ներկայ գտնուեցաւ, իսկ պէյրութցիներ ըիրենց սիրելիները տեսան սփռուած ուղիղ եթերով:

1 Մարտի երեկոյեան Կլենտէյլի «Ֆինիսիա» ճաշարանին մէջ տեղի ունեցած աւանդական ճաշկերոյթին բացումը կատարեց Շրջանաւարտից Միութեան անդամներէն Րաֆֆի Քենտիրճեան, որ բարիգալուստ մաղթեց Լիբանանէն, Կիպրոսէն, Մոնթրէալէն ու Թորոնթոյէն, Նիւճըրզիէն եւ Քալիֆորնիայէն ժամանած բոլոր ներկաներուն: Ապա ներկաները հրաւիրեց յոտնկայս ունկնդրելու Րաֆֆի Քերպապեանի մեկնաբանութեամբ Միացեալ Նահանգներու եւ Հայաստանի քայլերգները: Ապա վերապատուելի Սարգիս Գարամինասեան աղօթքով մը օրհնեց դպրոցին գործունէութիւնն ու յարատեւ վերելքը, աշակերտները, տնօրէնութիւնը ուսուցչակազմը, դպրոցին նեցուկ կանգնող եկեղեցին, ներկաներնուհրամցուած ընթրիքը:

Պրն. Սահակ Շամլեան, Միացեալ Նահանգներու Շրջանաւարտից Միութեան Ատենապետ, ողջունեց ներկաները, յատկապէս Տնօրէնուհին եւ մեզ ի մի խմբող ԿԲՎը, որ իր հիմնադրութեան օրէն սկսեալեւ իննիսուն մէկ տարիներ շարունակ հայ ընտանիքին կողքին Աստուծոյ հովանաւորութեան յանձնուած աշակերտներուն ջամբած է հայաշունչ դաստիարակութիւն: Ան աւելցուց. «Այժմ մեր բոլորին պարտականութիւնն է պետական քննութիւններուն յաջողութեանց բարձր տոկոսի մակարդակը պահել եւ զայն բարձրացնելով յառաջ մղել դպրոցի գործունէութիւնը: Պէտք է գիտակցինք, որ անհատ նուիրատուներուն պատկառելի գումարներուն կողքին մեր լումաներն ալ դպրոցին գոյատեւման ու բարգաւաճման կը նպաստեն»: Պրն. Շամլեան արագ ակնարկով ներկայացուց վարժարանին անմիջական նիւթական կարիքները: Ան յիշեց Տէր եւ Տիկ. Ժիրայր եւ Փաթրիսիա Թրփանճեանները, որոնք մնայուն եւ գլխաւոր բարերարներն են վերջին տասնամեակին: Ան յիշեց նաեւ Պրն. Յակոբ Լուսարարեանը, որուն ջանքերով The Armenian Evangelical Social Service Center-ը կոկիկ գումար մը տրամադրած է դպրոցին, ինչպէս նաեւ Վերապատուելի Եումուշաքեանի ջանքերով Աւստրալիայէն Աստղիկ Նաթարեան իր եղբօր Յովսէփ Նաթարեանի անունը յաւերժացնելու համար նորոգած է դպրոցի տարրալուծարանը: Նշուեցաւ նաեւ Ճորճ եւ Լիտիա Լուսարարեաններուն կատառելի նուիրատուութիւնը:



*«Տարուան Ուսուցիչը» Անահիտ Նասոյեան-Սուքիասեան եւ Արփի Համբարեան-Ճիէրեան*

Տնօրէնուհին Տիկ. Մարալ Տէյիրմէնճեան պաստառի վրայ նկարներով ներկայացուց այն բարենորոգութիւնները, որոնք կատարուած են Շրջանաւարտից Միութեան ջանքերով գոյացած եւ դպրոցին տրամադրուած գումարներով եւ որոնք կը նպաստեն ու կը վայելեն 316 աշակերտներ, Մանկամսուրի 17 աշակերտները հաշուի առնելով: Տիկ. Մարալ շեշտեց, թէ Պետական քննութիւններու յաջողութեանց առնչութեամբ, յետ յսու դպրոցին ակնկալութիւնը հարիւրտոկոս է, ան է որ սրտիս վէմին վրայ քանդակած է զանոնք»: Պրն. Շամլեանին գնահատագիր-յուշանուէրը յանձնելէ ետք Տիկ. Անահիտ շնորհակալութիւն յայտնեց եւ իր սրտի խօսքը փոխանցեց, ըսելով. «Լիբանանի մէջ դասաւանդութեան առաջին փորձառութիւնս ԿԲՎի մէջ կատարած եմ եւ իսկապէս գոհ մնացած եմ աշակերտներէն, անոնց հետաքրքրութենէն եւ աշխատելու կամեցողութենէն: Դասաւանդման լաւագոյն օրերս անցուցած եմ ԿԲՎէն




*«Տարուանշրջանաւարտ» Խաչիկ Խաչատուրեան եւ Արա Գալֆայեան*

հետեւաբար համապատասխան աշխատաքներ որդեգրուած են: Տնօրէնուհին նշեց, թէ լուրջ ուսումնասիրութենէ մը ետք կը մտածուի իրագործել «Special needs program»-ը, որմէ զերծ են հայկական բոլոր վարժարանները:

Դպրոցէն ներս տարուած աշխատանքներուն, ինչպէս նաեւ կարիքներուն մասին հակիրճ զեկուցումը աւարտելէ ետք, Տիկ. Տէյիրմէնճեան յուշանուէր մը յանձնեց Պրն. Հրաչ Մուրատեանին իբրեւ երախտագիտութիւն դպրոցին համար իր կատարած աշխատանքներուն համար:

Յայտագիրը շարունակուեցաւ Անայիս Ֆրունճեանի եւ Լոռի Ինճէճիկեանի՛ր բազեղնազ պարով: Ապա՝ Արփի Համբարեան-Ճիէրեան ներկայացուց «Տարուան Ուսուցիչը»՝ Տիկ. Անահիտ Նասոյեան-Սուքիասեանը, որ 1979-1987 տարիներու ընթացքին Երկրորդականի աշակերտներուն հայ գրականութիւն դասաւանդած է: Տիկ. Արփին փոխանցեց, թէ հայերէնասիրութիւնը, ազգասիրութիւնը եւ հայ մշակոյթը փոխանցող Տիկ. Անահիտ սիրուած ու գնահատուած է ուսուցիչներուն եւ աշակերտներուն կողմէ: Իր աշակերտներէն մէկուն վկայութեամբ. «Դուրեան, Վարուժան, Սիամանթօ, Զօհրապ սրտիս կը խօսին Տիկ. Անահիտին ընդմէջէն. ներս եւ մինչեւ այսօր չոյուած կը զգամ, երբ աշակերտներու կը հանդիպիմ, որոնք իրենց երախտագիտութիւնը կը յայտնեն:

Րաֆֆի Քերպապեան եւ Սեպուհ Նաճարեան առանձնաբար երգեցին հայրենասիրական երգեր, որոնցմով ներկաները հին յուշերով լիացան:

Պրն. Արա Գալֆայեան ներկայացուց «Տարուան շրջանաւարտ»ը, որ յաջողութիւններ ձեռք բերած է Ամերիկայի մէջ եւ միշտ օգտակար դարձած իր սիրելի վարժարանին: «Տարուան շրջանաւարտ»ը Պրն. Խաչիկ Խաչատուրեան, շնորհակալութիւն յայտնեց Շրջանաւարտից Միութեան անդամներուն եւ ներկաներուն փոխանցեց, թէ դպրոց մը կը գոյատեւէ ու վերելք կ՛արձանագրէ, երբ իր երախտապարտ շրջանաւարտները նեցուկ կը կանգնին անոր: Պրն. Գալֆայեան իրեն փոխանցեց դպրոցին շրջանակուած հարթաքանդակը: Այս առիթով Պրն. Խաչատուրեան յիսուն հազար Ամ. Տոլարի խոստում մը կատարեց:

Եւրոպական, արաբական եւ հայկական երգերով երեկոն ճոխացուց Գօգօ Հայրեթեան: Հաւաքոյթէն լիացած եւ տուն վերադարձողներուն յանձնուեցաւ Տէր եւ Տիկ. Արա Ասիլեաններու կողմէ տրամադրուած ԿԲՎ անունը կրող գաւաթներ:

**ԿԲՎի Շրջանաւարտից Միութիւն**



# ԳԱՐՆԱՆ ՀԷՔԻԱԹ

Երկրի վրայ դրախտ մը սէր կարծես թափած է Աստուած
Վահան Թէքէեան

*ՊՕՂՈՍ ԼԱԳԻՍԵԱՆ*

*Գարունը հէքիաթ է: Արեւի շողերը գրկած, մեղմանուշ զեփիւռի թեւերին բազմած փերիների, պարիկների եթերային պարերի հէքիաթ է գարունը: Բա՛ց արա հոգուդ աչքերը, տե՛ս, աստղալոյս փերիները երկինքից իջել են գարուն բերելու մեզ, մեր սրտերը թրթռացնելու տիեզերքի արարչական սիրով:*

*Գարունը հէքիաթային սէր է, սիրոյ բողբոջում, սրտերում վառուող լոյս: Պարմանուհիների աչքերից գարնան հրավառութիւն է ցայտում, որտեղից ժայթքող լոյսը հեշտագին սիրոյ հէքիաթային կրակ շանթեր են բոցավառում: Գարնանը, Արարիչ Աստուածը դրախտի սիրոյ կաթոգին լոյսերով է ցօղում մեր մոլորակը, կարծես, ինքն է որպէս սէր իջել՝ մարդկանց հոգիներին աղօթքի գարնանային շունչ յորդելու:*

*Հէքիաթ, մանուկների երազային ըղձանք, որ ահա գազանիկները դաշտերում վազում են թիթեռներ բռնելու, լճակի վրայ իրար գրկած՝ պար են բռնում, փերիներն են արեւի շողերը որպէս սիրոյ ու խաղաղութեան անդորրի կանթեղ փռում նրանց վրայ: Մանչերն են նրանց հետ գրկախառն գիրք թերթում, զրուցում նրանց հետ: Կարմիր գլխարկն է արջուկի մէջքի կողովին, ձայնում է նրան չուտել կարկանդակները: Հէքիաթներ, ինչպէ՜ս են իրենց բարութեան լոյսի շողերը ծորում մանկանց սրտերին, չարն են սպաննում, որ սիրոյ անուրջների աստղեր վառուեն: Բարի, բարի են հոսում հէքիաթները, ինչպէս որ գարունն է իր հոգեպարար ջերմութիւնը բաշխում մոլորակին:*

*Կեանքը գարնանային հէքիաթ է: Աստղերի լոյսը քու աչքերում այցի ես եկել երկիր: Կեանքը գարնանային լոյսի թրթիռ է, տիեզերքից հոսած զօրութիւն, կենսուժ, աստուածային արարչութեան հրավառութեան փառատօն: Կեանքը գարնանային շողերն է, միայն մի անգամեայ պարգեւ: Հէքիաթային վայելք է կեանքը, արբեցի՛ր նրանով, հրճուի՛ր, ժպտա՛ ծիածանափայլ մոլորակով, գինովցի՛ր լոյսով, վարարի՛ր գարնան հոգեպարար շունչով:*

*Գարունը բնութեան հէքիաթն է: Գնա՛ բնութեան գիրկը՝ այն մայրն է մոլորակի արարչութեան, գարունը իր հէքիաթային շունչի հեւքն է ցօղում նրա սրտին: Պայթում են ծառերի բողբոջները, արեւը նրանց վրայ ծիածանի լոյս է փռում, պայթում են կեանքի յաւերժութեան նռնենիները, որոնց կարմիր կանթեղներում արեւներ են վառւում: Գարունն է յորդում նարնջենիների լուսնասպիտակ ծաղիկներում, որոնք անմեղ ժպիտով շողում են հարսանեկան նարօտներով միացած նորապսակների լանջերին: Գարնանային արեւն իր կրակից ժայթքած գոյների ծիածան քօղ է փռում այգիների ծիրանենիների, դեղձենի, խնձորենի ծառերին:*

*Գարնանային հէքիաթ չէ՞ լեռների լանջերի բացատներում երկնքի կապոյտով պճնուած ծաղիկների թագուհի մանուշակը, դիտե՞լ ես այն, շոյե՞լ ես հէքիաթային լոյսով վարարած նրա աչուկներից կաթած գարնանային ցօղ արցունքը: Գարնան շունչից հայոց Սրբազան Լեռնաշխարհի լեռների լանջերի ձիւնն է հալւում, հողից պայթում են գարնան շաղոտ ժպիտով՝ կապոյտ, սպիտակ, կարմիր ձնծաղիկները: Կանգնի՛ր մի պահ ծաղիկի դիմաց, նրանց գարնանային հէքիաթային սքանչանքից պիտի արբենաս, պիտի գարուն դառնաս, քու սիրտն էլ ալեավառ կարմիր պիտի ծաղկի: Գարունը բուրմունք է յորդում նրանց ծաղկաբոյլերում, ծաղկաթերթիկներում, որ արբեցնի մարդկանց միտքը, երանութիւն պարգեւի հոգիներին, բանաստեղծութիւն արարուի:*

*Գարունը իր քնքուշ զեփիւռի շունչն է փչում հանդերին, որի թովչանքից թռչունների երամներն են գալիս՝ գարուն երգելու: Քու աշխարհի հէքիաթ գարնանը ծիծառներն էին վերադառնում իրենց նոր բոյները հիւսելու, յիշու՞մ ես նրանց լոյսային թռիչքը քու ոստանի երկնքում, ծիծաղի ձայնը նրանց: Գարունը կռունկների երամների հէքիաթը չի՞ բերում արդեօք, որոնց պանդուխտները աղաչում էին խապրիկ մը բերել իրենց աշխարհից: Հապա հէքիաթ չէ՞ արդեօք խօսել կռունկների հետ, կարօտած սրտի կանչերը ճամբել:*

*Գարնանը բոցավառուող վարդերը, իրապէս գարնանային հէքիաթ են: Վարդ, դու գարնանային արեւից բռնկած ծաղիկ չե՞ս արդեօք: Այդ որտեղի՞ց, ինչպե՞ս ես կարմիր հագել: Ճի՞շդ է արդեօք, որ աստղերի կրակալոյս դէմքով, սիրոյ հուրը աչքերին, գեղեցկութեան դիցուհին՝ Աստղիկը, Արածանիի ափերի սպիտակ վարդաստանների վրայ ճախրելիս, ծակել է ամպոտ, ձիւնոտ ոտքը ու իր սիրոյ կարմիր հուրով ծածկել վարդերի թերթիկները, իր սիրոյ բուրմունքն է ցանել նրանց վրայ եւ այն գարնանային սիրոյ հէքիաթ-ծաղիկ դարձել: Սոխակները բազմած նրանց թերթերին, սիրոյ մեղեդիների համանուագ են հնչեցնում: Իւրաքանչիւր գարնան, բանաստեղծներ կարմիր վարդեր են դնում սիրոյ երգիչ՝ Սայաթ Նովայի դամբանում հանգչող սիրող սրտին:*

*Գարնան հէքիաթ է անձրեւը, հեշտագին ցօղում է դէմքը մոլորակի: Անձրեւը Աստուծոյ օրհնութիւնն է, մոլորակի կեանքի շունչը: Դուրս արի պատշգամբ, նայիր իջնող անձրեւի կաթիլներին, շաղուած լոյս կայ նրանց մէջ, նրանք տիեզերքի հեռուների երգն են բերում մոլորակ, ճակատող ամպերի շանթերի կրակալոյսը գրկած նրանք ժպտում են քեզ: Դու էլ ժպտայ անձրեւին, քու սիրտը թող խայտայ նրա թովչանքից:*

*Գարունը հէքիաթ էր վառւում Մուսա Լերան լանջերին, կանաչկանաչ պատմուճան փռում այգիներին, հանդերին, պարտէզներին: Նրա ցորեանի գարնանային կանաչ դաշտերի ծփանքով է արբեցել իմ մանուկ հոգին, վազվզել՝ նրանց մեղմիկ ալիքների վրայով, վազվզել՝ քաղելու այնտեղ ծաղկած ճըպլանի կարմիր ծաղիկները: Արեւն էր արծաթ վարսերով շոյում մանուշակի կապոյտով բոցավառուած լերան լանջերը: Կարծես լուսինն էր իջել՝ իր դէմքի սպիտակշողերով ցօղելու դափնի ծառերը, իր սպիտակ համբոյրով այն գգուելու: Արի՛ գնանք նրա գարնանային հէքիաթի հրավառութիւնը ունկնդրելու: Նարնջենիները իրենց սպիտակ աչուկներն էին բացում, ժպտում, իրենց ոսկի առէջների հրացոլքով: Արեւն էր իջել նորաշխարհենիների ծառերին, խարոյկ էր վառում այնտեղ, քաղիր կրակը*

*Շար.ը էջ 19*

AGBU
ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION
Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն
Promoting the Armenian Heritage Around the World

**AGBU Western District Committee**

Cordially invites you to a
**Presentation**
by


His Excellency Arman Kirakosyan

**His Excellency Arman Kirakosyan**
Ambassador Extraordinary and Plenipotentiary of the Republic of Armenia in Austria

On the topic of

**"Regional and Security Policy of Armenia"**

Under the patronage of
**Berge Setrakian**
AGBU President

Introductory remarks by
**Prof. Peter Cowe**
UCLA Naregatsi Chair of Armenian Studies

Master of Ceremonies
**Prof. Hrair Dekmejian**
Director of USC Institute of Armenian Studies

Co-Sponsored by
**Armenian Society of Los Angeles**
**Armenian Bar Association**
**Organization of Istanbul Armenians**

***Tuesday, April 2, 2013 at 7:00 p.m.***
***Armenian Society Center***
***117 South Louise Ave., Glendale***

Open to the Public
Reception to Follow

# ԲԱՐԻ՛ ԼՈՅՍ ԵՐՈՒՍԱՂԷՄ

**ՆԱՀԱՊԵՏ ՄԵԼՔՈՆԵԱՆ**

*Կը սպասէինք:*

*Կը սպասէինք հոգեկան անհուն ուրախութեամբ ողջունելու նոր առաւօտը Սիոնի բարձունքին:*

*Կը սպասէինք, որ Աստուած ժպտէր մեզի, Միջին Արեւելքի այս բախտորոշ ու արհաւիրքի օրերուն, ուր մարդը գազանացած ու հեռացած Արարիչէն, իր նմանը կը սպաննէ, կը յօշոտէ, «արաբական գարուն» կոչուած քաղաքական ճատրակի աղուէսներու խաղին մէջ:*

*Կը սպասէինք, որ Տէրը պատասխանէր, ամէն արշալոյսին Սիոնի բարձունքէն դէպի երկինք առաքուող հայուն աղօթքներուն, աղերսներուն ու Երուսաղէմի Սուրբ Աթոռին Իր ընտրեալը կոչէր:*

*Ընտրեալ մը, որ հաւատարիմ մնայ Սուրբ Աթոռին, պահպանէ ու պաշտպանէ հայ ժողովուրդի դարաւոր իրաւունքներն ու իրաւասութիւնները Քրիստոսակոխ Սուրբ քաղաքին մէջ: Ամէն. Տ. Նուրհան Արք. Մանուկեան Ընտրեալ մը, որ հաւատարիմ մնայ Երուսաղէմի Առաքելաշաւիղ Սուրբ Աթոռին եւ Լուսաւորչահաստատ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, ըմբռնելով Քրիստոնէական առաջին Սուրբ Աթոռին կարեւորութեան իմաստը, ըլլայ այդ անձնական, ազգային եւ նաեւ համաշխարհային ու միջազգային գետնի վրայ:*

*Ընտրեալ մը, որ հաւատարիմ մնայ Հայաստանեայց Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցւոյ դաւանութեան ու սկզբունքներուն, մանաւանդ այս օրերուն, երբ մերթ ընդ մերթ միջ-եկեղեցական «էքումէնիք» կոչուած աւազանին մէջ կը խեղդուի՝ չըսելու համար՝ կը լուծուի մեր Սուրբ Հայրապետներէն մեզի հասած առաքելական դաւանութիւնը ուղղափառ:*

*Ընտրեալ մը, որ իր վարք ու բարքով սրբէ արցունքը մեր Սուրբ Եկեղեցւոյ պատերէն, քանզէ արուեստական երկփեղկուածութեան պատերը եկեղեցւոյ, որովհետեւ տակաւին կ՛ուզենք հաւատալ Երջ. Գուշակեան Պատրիարքին խորիմաստ խօսքերուն... թէ «Չէ խլուած դեռ անոր կայմը իր կայքէն ամրակուռ... Չէ պատռտուած առագաստին դեռ թռչարանը մաքուր... Չեն յօշոտուած կապարանները հաստապինդ գիստերուն...*

*Չի դեռ ղեկին ղամպարն - հաւատքը- կը հեւայ մէջն անքուն...*

*Բայց կը գոռայ մրրիկն իր չուրջ, մռայլն է պատեր իր չորս դին... Խաղաղութա՜ն Տէր, չո՛ւնչդ լոկ կրնայ սատարել անդունդին»:*

* * *

*Բարի՛ Լոյս Երուսաղէմ:*

*Քանգի զանգակներդ Սրբոց Յակոբեանց Մայրավանքին, կրկին կը ղօղանջեն, թէ վերցուած է սուգը՝ դարաւոր Սուրբ Աթոռէն:*

*Բարի՛ Լոյս Երուսաղէմ:*

*Քանգի զանգակներուդ ղօղանջը կ՛աւետէ, որ Աստուած Իր ընտրեալը կոչեց Սուրբ Աթոռին:*

*Ու կամօքն Աստուծոյ նոր շրջան մը կեանքի կը կոչուի, ընտրութեամբը ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. ՆՈՒՐՀԱՆ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ, Պատրիարքին Առաքելական Սուրբ Աթոռոյն Երուսաղէմի:*

*Ընտրութիւն մը, որ իր հետ նոր յոյս կը բերէ, ծագող արշալոյսին հետ:*

*Երուսաղէմի Սրբոց Թարգմանչաց Վարժարանի, ԱՄՆի Սանուց Միութեան «Հայ Երուսաղէմ» պաշտօնաթերթի խմբագրականները, այդ յոյսին արձագանգողը եղաւ վերջին տարիներուն:*

*Դժուարի՜ն օրեր էին պատրիարքութեան վերջին հնգամեակը: Գրեցի՛նք ու արձագանգեցի՛նք բոլորին մասին:*

*Ըսինք մեր խօսքը, թէ... «Տեսանելիէն անդի՜ն կայ... (իմանալին) ա՛յդ մեր հաւա՛տքն է, մեր յո՛յսն է, մեր սէ՛րն է, որ աշխարհի ո՞ր անկիւնն ալ գտնուինք, մեզ կապած է «Հայ Երուսաղէմին, Ս. Աթոռին, Ս. Գլխադրին»: (Հ. Ե. Յուլիս 2011): Աւելին, չեշտեցինք թէ տեսանելիէն անդին կան Ս. Յակոբները, Ս. Գլխադրի զօրութիւնը, երկու հզօր սուրբերը, եւ մանաւանդ մեր Տէ՛րը՝ Յիսուս Քրիստոս, որոնք տէրն են մեր դարաւոր հաստատութեան... անցեալը վկայ: Ինչ փոյթ, եթէ մարդիկ Երուսաղէմէն մինչեւ Ամերիկա խուլ ականջ դարձուցին վերոյիշեալ ճշմարտութեան, Ս. Գլխադրի զօրութեան, եւ պայքա՜ր մղեցին լոյսին դէմ:*

*Սուրբ Յակոբայ Մայր Տաճարը այսօ՛ր, սիրելի ընթերցողներ, այդ անկոտրուն հաւատքն է, այդ գեղեցիկ յոյսն է, Ս. Աթոռին, Ս. Գլխադրին հանդէպ մեր բոլորին ունեցած սէրն է, մեր բոլորին աղօթքներուն պատասխանն է, որ Աստուած կը ժպտի մեզի ա՛յս օրերուն, երբ Միջին Արեւելքի մէջ մարդը, աշխարհը կը վերածէ դժոխքի:*

*Զհեռանանք այդ հաւատքէն:*

*Երուսաղէմահայուն կամքը երբեք տկարութիւն չէ ճանչցած: Պէտք չէ ճանչնայ այսօ՛ր ալ: Պէտք չէ յուսահատիլ: Մարդու ձեռքով քանդուածը, կարելի է վերականգնել հաւատքով եւ նուիրումով:*

*Կրկին կը յիշեցնենք... Ս. Գրիգոր Նարեկացին իր աղօթքներուն ընդմէջէն կը պատգամէ մեզի. «Սիրել լոյսը, փնտռել զայն, փտահիլ անոր, խաւարը հալածել է»:*

*Այդ լո՛յսը, ամէն օր կը ճառագայթէ Սիոնի բարձունքէն, Ս. Յակոբայ մայր տաճարէն, հայուն հանապազօրեայ աղօթքներով: Մենք հարկ չունինք փնտռելու զայն, այլ բա՛ւ է որ հաւատանք եւ վստահինք այդ լոյսին, որ վանէ խաւարը մեր կեանքէն, եւ մշուշը՝ մեր հոգիներուն վրայ նստած:*

*Այսօր, այդ լոյսը՝ կը հրաւիրէ մեզ բոլորս, հոգեւորական եւ աշխարհական, որ բոլորուինք մեր նորընտիր Պատրիարք, ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. ՆՈՒՐՀԱՆ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆԻն շուրջ, գիրար հանդուրժենք, միասնաբար աշխատինք, գիրար յարգենք, գիրար հասկանանք, իրարու հետ ծրագիրներ մշակենք, լուծումներ որոնենք մեր ցաւերուն եւ իրարու հետ գործենք յանուն մեր դարաւոր Պատրիարքութեան:*

*Ամենապատիւ Պատրիարք Հայրը, որ տասնեւհինգ տարիներէ ի վեր Լուսարարապետը եղաւ Սուրբ Աթոռին, աւելի քան քառասնամեակ մը նուիրումի, զոհողութեան, ծառայութեան, հովուութեան ու Սուրբ Աթոռին բարգաւաճման, եկեղեցանուէր վաստակ ունի:*

*Մենք լաւատես ենք Հայ Երուսաղէմի ապագայով:*

*Լաւատես ենք, մանաւանդ, երբ Հայաստանի Մեծարգոյ Նախագահը, ո՛չ միայն շնորհաւորեց նորընտիր Պատրիարքին ընտրութիւնը, այլ պետական աջակցութիւն եւ հովանաւորութիւն առաջարկեց Հայ Երուսաղէմին եւ դարաւոր Պատրիարքութեան:*

*Երուսաղէմի Պատրիարքութիւնը Նուիրապետական Աթոռներէն մին է Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ, որովհետեւ ի վերջոյ գոյութիւն ունի Առաքելական Ընդհանրական Սուրբ Եկեղեցւոյ ամբողջական հասկացողութիւնը: Ունի իր իւրայատուկ կանոնադրութիւնը, տարբե՜ր միւս բոլոր Նուիրապետական Աթոռներէն: Թէպէտ վարչականօրէն անկախ, սակայն սերտ կապեր ունի Լուսաւորչահաստատ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ: Որքա՜ն ուրախանալի է, երբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետը եւ Հայաստանի Պետականութիւնը կը շնորհաւորեն եւ զօրակցութիւն կը յայտնեն Երուսաղէմի Պատրիարքութեան: Պատգամը յստակ է բոլորին:*

*Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց միաբանութիւնը գինուորեալ, մինակ չէ պաշտպանելու Հայոց դարաւոր իրաւունքներն ու իրաւասութիւնները Քրիստոսակոխ Սուրբ Երկրէն ներս: Հայ Երուսաղէմը տէ՛ր ունի: Այդ առաջին հերթին, Երուսաղէմի դարաւոր Պատրիարքութիւնն է, մեր զինուորեալ միաբանութիւնն է, ու իր կողքին՝ Հայ ժողովուրդն է,*

*Հայոց Պետականութիւնն է, Մայր Աթոռ Ս. Էջմիածինն է, որոնք զօրավիգ եւ աջակից են Հայոց Պատրիարքութեան:*

*Բաւ է, որ բոլորս նուիրում եւ զոհողութեան կամք ունենանք: Ու երբ համերաշխ գործակցութեամբ բոլորուինք մեր նորընտիր Պատրիարքին շուրջ, փշրենք մեր «Եսերն ու քինախնդրութիւնը, ու մեր աշխատանքով կոթողենք ՄԵՆՔը..., այն ատեն հաւատա՛ ժողովուրդ հայոց, մենք միասնաբար հրաշքներ կրնանք գործել: ՄԻԱՍԻՆ:*

*Բարի՛ Լոյս Երուսաղէմ:*


## VA Print Media

Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան եւ
Հին Գիրքերու Նորոգութեան Համար
Հեռաձայնել՝ ՎԱՀԷ ԱՃԱՊԱՀԵԱՆԻՆ



Vahe Atchabahian
1870 E. Layton St. • Pasadena, CA 91104
626-354-5924 • vamedia@yahoo.com



## FLORA'S VOICE:

THE VOICE OF ALL VICTIMS AND SURVIVORS OF THE ARMENIAN GENOCIDE

FREE ADMISSION



Sunday, April 7, 2013 - 6 p.m.

AGBU Vatche & Tamar Manoukian Center
2495 E. Mountain Street; Pasadena, CA 91104

for more information, please call AGBU at 626 794 7942 or visit http://www.facebook.com/AGBUPasadenaChapter

AGBU Pasadena/Glendale Chapter



Special Screening of the Short Film: "My Mother's Voice" a poignant story of Flora Munushian, a fourteen-year-old from Hadjin who lost her family in the Armenian genocide and how she found her way to America to marry a man she knew only from a photograph.



Presentation on the "Experience of Women in the Armenian Genocide" by Prof. Donald Miller and Lorna Touryan Miller

Q & A session moderated by Krikor Satamian featuring

- KAY MOURADIAN, EdD, A professor emerita from the Los Angeles Community Colleges who wrote, narrated and co-produced the documentary, My Mother's Voice
- The film's director, Mark Friedman, a sound designer for Moriah Films
- Professor Donald Miller of the University of Southern California, and Lorna Touryan Miller, the authors of Survivors: An Oral History of the Armenian Genocide (1993) and Armenia: Portraits of Survival and Hope (2003). They have conducted extensive interviews with women survivors of the 1994 Rwanda Genocide, and will draw on their research in interpreting the trauma of Armenian women survivors.



# ՏՂԱՄԱՐԴՈՒՆ ԼԵԶՈՒՆ ԵՒ ԱՆՈՐ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՔԱՐՏԷԶԸ ԲՈԼՈՐ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ

Որովհետեւ անոր հետ հաղորդակցիլը շատ անգամներ սայթաքումներու ենթարկուած է, որովհետեւ անոր հետ յարաբերութիւնը զերծ չէ վերիվայրումներէ, եւ որովհետեւ երբեմն կը զգաս, որ տղամարդը ուրիշ մոլորակէ է եւ դուն իր լեզուն չես հասկնար, այս բոլոր պատճառներուն համար քեզի կը ներկայացնենք ծինային քարտէզը՝ անոր բոլոր զգացական անհրաժեշտութիւններուն եւ հիմնական պահանջներուն: Քեզի կը ծանօթացնենք այս պէտքերուն՝ ի՛ր իսկ լեզուով, բաղդատութիւն կատարելով քու եւ իր միջեւ գոյութիւն ունեցող էական տարբերութիւններուն: Թերեւս այսպիսով կարենաս հասկնալ զինք, ապրիլ ու հաղորդակցիլ իր հետ ներդաշնակօրէն, մէկ մոլորակի վրայ:

Հարցերուն նայելու մէջ առաջնահերթութիւնները. Սիրելի տիկին, քու եւ սիրած անձիդ միջեւ առաջին անհամաձայնութեան պատճառը կեանքի հարցերուն մեծամասնութեան նկատմամբ տարբեր նայուածքի հարցն է: Կարծէք ըլլաք երկու զուգահեռ գիծեր, որոնք նոյն ուղղութեամբ կ՛ընթանան, բայց առանց իրար հանդիպելու: Այն ինչ որ դուն կարեւոր կը համարես, անպայման նոյն կարեւորութիւնը չունենար տղամարդուն համար: Կեանքի հարցերը դիմագրաւելու, ուրիշներուն հետ հաղորդակցելու եւ նոր բարեկամութիւններ ստեղծելու ձեւը կը տարբերի իր ձեւէն: Կրնաք աւելի մեծ չափի հասկացողութեան հասնիլ, երբ ձեզմէ իւրաքանչիւրը գիտնայ երկրորդին իսկական հետաքրքրութիւնները եւ անոր աչքին կարեւոր եղող կէտերը:

Տղամարդուն համար իսկական հետաքրքրութիւն կը կազմեն եւ կարեւոր են.

1) Արդիւնքներու հասնիլ:

2) Իր իրագործած յաջողութիւնները վայելել:

3) Լուծումներ գտնել:

Իսկ կնկան համար.

1) Ուրիշներուն հետ հաղորդակցելու կերպը գիտնալ:

2) Շրջապատին հետ համերաշխօրէն ապրիլ, օգնութիւն տալ եւ ստանալ:

3) Զգացումները արտայայտել եւ ուրիշներուն մօտիկ ըլլալ:

Զգացական անհրաժեշտութիւնները. Ինչպէս նկատեցինք, առաջնահերթութիւնները նոյնը չեն երկու սեռերուն մօտ, նոյնն է նաեւ պարագան զգացական անհրաժեշտութիւններուն նկատմամբ: Իրականութեան մէջ, կիները կու տան այն ինչ որ կը փափաքին ստանալ, ինչպէս հոգատարութիւն, հասկացողութիւն եւ մօտիկ ըլլալ, մինչ տղամարդիկ կը նախընտրեն վստահութիւն, քաջալերանք եւ հաւանութիւն ստանալ: Եւ հակառակ անոր, որ տղամարդը այս նշուածները կը փնտռէ, սակայն ան հազուադէպ կը խոստովանի այդ մէկը քեզի կամ նոյնիսկ ինքնիրեն: Հետեւաբար, եթէ կը փափաքիս, որ ձեր յարաբերութիւնը զարգանայ եւ յառաջդիմէ, պէտք է յայտնաբերես իր հիմնական անհրաժեշտութիւնները, թէկուզ ինք չարտայայտէ զանոնք:

Իրեն համար.

* Իր որոշումները ընդունիլը եւ քաջալերելը՝ ինքնիրեն համար դրած նպատակներուն հասնելու համար, ոսկիի արժէքով են:

* Քեզի ուրախ պահելու կարող ըլլալը զինք կը մղէ իր ջանքերը կրկնապատկելու՝ այդպէս շարունակելու համար քեզի համար:

* Երկու ամէնէն կարեւոր կէտերն են յարգանքը եւ հասկացողութիւնը, որոնք երբ գոյանան, միւս բոլոր հարցերը երկրորդական կը դառնան:

* Քեզի հանդէպ վստահութիւնը եւ իր խնդիրները քեզի պատմելը: Պէտք է ցոյց տաս իրեն եւ իր կատարած բարի գործերուն հանդէպ ունեցած վստահութիւնդ: Այս վստահութիւնը իրեն կը զգացնէ, որ ինք կարողութիւնը ունի ճիշդ որոշումներ առնելու, եւ հետեւաբար, ինք արժեւորուած եւ սիրուած է: Եթէ օրինակ իրեն հասկցնես, որ իր ընտրած ճաշարանը հոյակապ է, կամ որոշ հարցի մը հետ իր վերաբերմունքը լաւագոյնն էր, ապա ան գոհունակ եւ աւելի մօտ պիտի զգայ քեզի:

Մի մոռնար շատ կարեւոր գործօն մը. տղամարդը պէտք ունի զգալու, որ կարողութիւնը ունի քեզի գոհացնելու, հետեւաբար, մի՛ տատամսիր իրեն շնորհակալութիւն յայտնելու, զինք քաջալերելու եւ հաւանութիւնդ արտայայտելու իր կատարած բոլոր աշխատանքներուն հանդէպ, որոնցմով ան կը ձգտի քեզ ուրախացնել: Երբ ան քու գոհունակութիւնդ զգայ, ձեր միջեւ հաղորդակցութիւնը աւելի լաւ կ՛ըլլայ եւ արտայայտուիլը շատ աւելի դիւրին: Եւ երբ ան զգայ, որ իր զգացական անհրաժեշտութիւնները գոհացուած են, ան աւելի պատրաստակամ կ՛ըլլայ քու հիմնական անհրաժեշտութիւններդ գոհացնելու:

Հաղորդակցելու ձեր լեզուն. Շատ անգամներ տղամարդուն ըսած մէկ խօսքը ան հակառակը կը հասկնայ, եւ երբեմն այնպէս կը թուի, որ ան մօտիկ չ՛ըլլար ըսածներդ: Ասոր պատճառը պարզ է. ան ոչ թէ չի փափաքիր քեզի մօտիկ ըլլալ, այլ՝ որովհետեւ հարցերուն նոյն տեսանկիւնէն չի նայիր եւ անոնց մասին նոյն ձեւով չ՛արտայայտուիր: Պէտք է գիտնաս, որ այր մարդը կը հասկնայ ըսուած բառերը, սակայն կ՛անգիտանայ անոնց թաքնուած իմաստներուն: Ան կը կորսուի բարդ հարցերուն եւ անոնց մանրամասնութիւններուն մէջ:

1) Ձեր հաղորդակցութիւնը բարելաւելու համար.

* Վստահցիր, որ ան լաւ կը հասկնայ քեզի, որովհետեւ սխալ հասկացողութիւնը կը բարդացնէ ձեր միջեւ հարցերը:

* Նախադասութիւններդ ձեւաւորէ դրական ձեւով, որովհետեւ նախադասութեանդ մէջ որեւէ բացասական իմաստաւորում կը համարէ ուղղակիօրէն իրեն ուղղուած:

* Պատմութիւնդ վերջաւորութենէն սկսիր պատմել, եւ երբ վստահանաս, որ ան հասկցաւ իսկական իմաստը, կրնաս պատմութեան սկիզբը վերադառնալ:

* Իրմէ ուղղակի կերպով խնդրէ իր կատարելիքը. ոչ խօսք դարկ, ոչ քննադատութիւն կատարէ, ոչ ալ հարցերը իրար խառնէ, այլ՝ յստակօրէն եւ ուղղակի կերպով խօսիր:

2) Լռութեան լեզուն.

Լաւ գիտցիր, որ այր մարդը կը նախընտրէ գործել քան խօսիլ, թէ՛ իր հարցերուն եւ թէ՛ իր զգացումներուն առնչութեամբ: Մի վախնար եթէ ան չխօսի եւ մի ստիպեր զինք որ խօսի, այլ՝ իրեն ժամանակ տուր գտնելու արտայայտման միջոցը:

Տղամարդիկ կիներուն չափ խօսելու պէտքը չեն զգար:

3) Իր կամքէն անկախ մի՛ ընդմիջեր իր լռութիւնը.

* Եթէ զինք լռակեաց եւ մտահոգուած գտնես, որոշ հարցով մը զբաղած, մի սպասեր իրմէ, որ նախաքայլը առնէ եւ արտայայտուի անոր մասին: Ան կը նախընտրէ անոր մասին մտածել առանձին եւ անձամբ լուծել զայն, որովհետեւ մանկութենէն այդպէս վարժուած է:

* Իր մօտ լռութեան պահերը կրնան ապացոյց ըլլալ, որ ինք մօտիկ կ՛ընէ քեզի եւ կը մտածէ ըսածներուդ մասին ու կը փորձէ լաւագոյն լուծումը գտնել:

* Ան կրնայ ըլլալ առաջին քայլը չառնէ «կը սիրեմ քեզի» ըսելու, սակայն իր կողմէ կատարուած որոշ վարուելակերպեր կ՛ապացուցեն այդ մէկը: Հետեւաբար, մի պնդեր խօսքին վրայ, այլ՝ գիտցիր միայն իսկապէս եւ լաւապէս արժեւորել իր սիրահարական վերաբերմունքը, այդպիսով իր իրաւունքը տուած ըլլալով:

* Եթէ շատ մեծ փափաք ունիս խօսելու մինչ ինք լուռ է, մի փորձեր տեւաբար զինք մղել խօսելու, այլ՝ այս փափաքդ ուրիշ ուղղութեամբ դարձուր, այսինքն՝ ընկերուհիիդ հետ խօսելու ուղղութեամբ, եւ ինք շատ շնորհակալ պիտի ըլլայ:

# ՄԵՐ ԶԱՒԱԿՆԵՐՈՒՆ ՎԻՃԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ ՈՒՆԻՆ

Պզտիկները տեւաբար կը վիճաբանին ու կը կռուին, ինչ որ կը յոգնեցնէ եւ ջղային վիճակ կը ստեղծէ ծնողներուն մօտ: Ի՞նչ են այս վիճակին գործնական լուծումները:

Վիճաբանութիւնը բաւական չափով կը պակսի, երբ ընտանիքը վայելէ առողջ համագործակցութեան մթնոլորտ մը: Արդարեւ, առաջին պայմանը համերաշխութեան եւ յարգանքի մթնոլորտ ստեղծելն է, կեդրոնանալով հետեւեալներուն վրայ.

* Ընդունիր եւ ապա արժեւորէ իւրաքանչիւր երեխայի տարբերութիւններն ու առանձնայատկութիւնները:

* Պզտիկներուն միջեւ մասնակցութիւնը քաջալերէ՝ պատահող հարցերուն եւ վիճաբանութիւններուն շինիչ լուծումներ գտնելու:

* Պնդէ, որ բոլորը գերյարգանքով վարուին իրար հետ, ինչպէս նաեւ խուսափիր հայհոյելէ կամ բարձր ձայնով խօսելէ:

* Հետեւեալ գործնական միջոցներով կարելի է երեխաներուն սորվեցնել համագործակցութիւնը եւ իրենք իրենց հարցերը լուծելը.

- Կռուողները նստեցուր նստարանի մը վրայ եւ իրենց ըսէ, որ անոր վրայ «բանտարկուած» պիտի մնան, մինչեւ որ իւրաքանչիւրը արտօնէ միւսին իջնելու նստարանին վրայէն՝ խաղը շարունակելու համար:

- Կարելի է զանոնք սենեակ ղրկել, ուր առանձնացած կը մնան մինչեւ իրենց միջեւ պատահող խնդիրին լուծում գտնեն:

- Եթէ անհամաձայնութիւնը պուպրիկի մը կամ այլ խաղալիքի համար է, զայն հեռացուր մէջտեղէն, մինչեւ որ արտօնութիւն տաս խաղալու եւ ոչ թէ կռուելու համար զայն ետ առնեն:

* Ի վերջոյ, պզտիկներդ կրնան վարժուիլ իրենց հարցերը անձամբ լուծելու, եւ այդպիսով ընտանիքդ աւելի միասնական եւ հանդարտ կ'ըլլայ: Կարեւոր պայմանը անոնց միջեւ խտրութիւն չդնելն է եւ առանց նախապայմանի զիրենք սիրելը, ինչպէս նաեւ ընդունիլ անոնց միջեւ գոյութիւն ունեցող տարբերութիւնները, որոնք ինքնին աղբիւր են անոնց առանձնայատկութեան:

HayastanInfo.net

## ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

PALM SPRINGS ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՑՈՂ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Փալմ Սփրինկսի գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրւում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թենիսի խաղադաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Վարձման գներն են՝

| | |
|---|---|
| Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝ | $ 400 |
| Long Weekend-ների համար՝ | $ 500 |
| Մէկ շաբաթուայ համար՝ | $ 675 |
| Մէկ ամսուայ համար՝ | $ 1450 |

*Մանրամասների համար հեռաձայնել՝*

(818) 246-0125

## ՀՌՈՄԻ 266-րդ ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՊԸ ԵՒ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

*Շարունակուած էջ 1-էն*

խնդրած է իր արժանթինցի հաւատացեալներէն ծախսեր չընել Հռոմ գալով, այլ՝ այդ գումարները գործածեն մարդասիրական ազնուաբարոյ նպատակներու:

Նորընտիր Պապը եղած է ժուժկալ: Ան չէ ունեցած անձնական ինքնաշարժ, եւ ոչ՝ անձնական վարորդ: Իր անձնական եւ պաշտօնական տեղափոխութիւններուն համար, ան օգտագործած է հասարակական փոխադրամիջոցներ: Իր կերակուրները ինք եփած-պատրաստած է իրեն համար: Ան, իր անձնական ծախսերը, , նոյնպէս հոգացած է իր քսակէն: Ունեցած է մարզական նախընտրութիւններ: Ան երկրպագուն եղած է արժանթինեան «Սան Լորէնցօ» ֆութպոլային խումբին:

Ֆրանսիսքօ Ա պապը անխոնջ պաշտպանը համարուած է բարոյական արժէքներու պահպանման: Ան բուռն ճաղկողը նկատուած է այդ արժէքներու սնանկութիւնը: Ան յանդուգն ու քաջարի ջատագովը հանդիսացած է աշխարհի խաղաղութեան, ժողովուրդներու միջեւ երկխօսութեան, արդար դատողութեան, ժողովրդավարական համակարգի եւ անխտրական ոգիի, որոնց համար աղօթած է միշտ:

Նորընտիր պապը, դեռեւս կարտինալ՝ արդարացի, բուռն ու խիզախ կերպով պայքարած է միասեռական ամուսնութիւններու, անգամ՝ բռնի յղութիւններու պարագային արուեստական վիժումներու արտօնութիւններու դէմ, դիտել տալով, որ այդ պետական արտօնութիւնները «Քաղաքական պայքարի հարցեր չեն, այլ՝ ոչ-շինիչ փորձեր՝ Աստուծոյ ծրագրին դէմ», յայտարարած է ան, 2012-ի Սեպտեմբերին:

Գաղտնիք չէ ոչ ոքի, որ կաթողիկէ եկեղեցին, այսօրուան կացութեամբ, կը դիմագրաւէ դժուարին, գահավէժ վերիվայրումներ, մանաւորաբար բարոյական, վարչական եւ դիւանային խորհրդապահական վիատեցուցիչ տեսակէտէն: Անոնք, որոնք մօտէն հետեւեցան Բենեդիկոս 16-րդ Քահանայապետի հրաժարման դրդապատճառներուն, կրնան հետեւցնել, թէ որքան ծանր բեռան տակ մտած է նորընտիր 77 ամեայ Ֆրանսիսքօ Ա Պապը, որուն ստացած Պապական նոր անուանակոչումը կը յուշէ թուականէս աւելի քան ութը հարիւր տարիներ առաջ, ֆրանսիսկան միաբանութեան հիմնադիր ՝ բարեսիրտ, գթառատ, համեստ եւ քրիստոնէական հաւատքի մարմնացում՝ Հռոմի Եպիսկոպոս Սրբ. Ֆրանսիսքոն, որուն սրբակեաց ներդրումը մեծ է եղած կաթողիկէ եկեղեցւոյ միաբանական կեանքէն եւ աշխարհի խաղաղութեան մարզերէ ներս:

Մերօրեայ նորընտիր Ֆրանսիսքօ Ա Պապը, նոյնպէս, յանձնառութիւն կը վերցնէ հետեւելու իր հազարամեայ հոգեւոր հովիւ Ֆրանսիսքօ Ասիսի օրինակին, կարենալ դարմանելու համար Կաթողիկէ միաբանութեան դիմագրաւած մերօրեայ գահավէժ տագնապները:

Անկախաբար այդ մարդասիրական տիպար վարքագիծերէն՝ նորընտիր Քահանայապետը, քաջարի, արդարադատ դատապարտողներէն հանդիսացած է Օսմանեան Թուրքիոյ կողմէ հայ ժողովուրդի դէմ իրագործուած Ցեղասպանութիւնը: Ան, դեռեւս 2006 թուականին, Արժանթինի մէջ տեղի ունեցած 1915-ի Ցեղասպանութեան դէմ ոգեկոչական արարողութեան մը ընթացքին, երբ տակաւին իր երկրի Արքեպիսկոպոսն, մարդկութեան դէմ գործուած ծանր յանցագործութիւն որակած էր զայն եւ պահանջած, որ Թուրքիա ճանչնայ հայոց դէմ գործուած Ցեղասպանութիւնը:

Մեր մաղթանքն է, որ բարի՛ն ըլլայ նորընտիր Ֆրանսիսքօ Ա Պապին ընտրութիւնը: Ունենայ ան, քաջառո՛ղջ, երկա՛ր եւ արդիւնաշա՛տ կեանք՝ ի փառս իր եկեղեցւոյ եւ տագնապալի միաբանութեան վերականգնումին, համայն աշխարհի խաղաղութեան, անիրաւուած ժողովուրդներու ազգային ձգտումներու ձեռքբերման, ժողովուրդներու միջեւ համերաշխ գոյակցութեան եւ այդ բոլորի շարքին, հայ ժողովուրդի դէմ կատարուած Ցեղասպանութեան՝ արիւնռուշտ օսմանեան Կայսրութեան ժառանգորդ, արդի Թուրքիոյ կողմէ ճանաչումին եւ դատապարտումին:

## «Է ՀԷ՜Յ, ԾԱԽՈՒՄ ԵՆՔ, ԾԱԽՒՈՒՄ ԵՆՔ...»

*Շարունակուած էջ 6-էն*

*չէնքը այդպէս էլ կիսատ մնաց, անկախութեան հողմերը ազատ կեանքի դրօշի թափահարումով խեղաթիւրեցին հոգեւոր արժէքները: Հիմա էլ «ապահով Հայաստան» կառուցելու պատրանքներով են մեզ կերակրում, արդիւնքում էլի երեւս՝ «խաբուած ժողովուրդ»: Մենք՝ հայրենախօս հայի նորօրեայ ժառանգորդ մտաւորականներս (ինչո՞ւ միայն) հիմա էլ լռե՞նք, ջայլամի պէս գլուխներս աւազի մէջ խրենք ու ցոյց տանք, թէ իբրեւ ոչինչ չե՞նք տեսնում, ոչինչ չե՞նք հասկանում ու շարունակենք «հաւատա՞լ», որ «ապրենք», այս անգամ արդէն «ապահո՞վ Հայաստանում»:*

*Չէ՛, այլեւս լռել չեմ ուզում: Մտնեմ ինտերնետ, էդ արաբական չէյխի ականջը մտած ծախու հայ արարածի, տո՛, հենց մեր ներսի ծախուների ականջին գոռամ. «Չհամարձակուէ՛ք Հայկ Նահապետի, Մեսրոպ Մաշտոցի, Խորենացու, Նարեկացու, Աբովեանի, Թումանեանի, Չարենցի երկիրը առուծախի առարկայ դարձնել: Էս սրբազան հողի ազատութեան ու անկախութեան համար իրենց արիւնը տուած մեր նախնիների, ազգի հերոսների անունով ենք երդւում, Արցախում զոհուածների անունով, հենց էս մի բուռ երկրի հաւատաւորներիս անունով ենք երդւում...»:*

*ԵՐԴՒՈՒՄ ԵՆՔ:*

## ԱՌԱՆՑ ՀԱՒԱՍԱՐՈՒԹԵԱՆ ՆՇԱՆԻ

*Շարունակուած էջ 6-էն*

*նեցող ժողովուրդների միջեւ: Թեւրեւս դրանով պիտի պայմանաւորել ԵԱՀԿ Մինսկի խմբի անյաջողութիւնները, որին այսքան տարի չի յաջողւում առաջընթաց արձանագրել... Սպասել, թէ մի օր էլ Ատրպէյճանը կը խոստովանի, որ Ղարաբաղը այլեւս Ատրպէյճանինը չէ՝ ցնորք է:*

*Ատրպէյճանը Սերբիա չէ, այդ երկիրը 21-րդ դարում էլ առաջնորդւում է բնազդներով, իսկ բնազդներն առանց մտրակի ուղղորդելը միշտ էլ վտանգաւոր է...*

## ՀԵՐՄԻՆԷ ՍԱՀԱԿԵԱՆ, ԶԱՐՄՈՒՀԻ ՄԻՆԱՍԵԱՆ ԵՒ ԳԷՈՐԳ ՅԱԿՈԲԵԱՆ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԱԾ

*Շարունակուած էջ 8-էն*

*Հայրապետը բարձր կը գնահատէր Զարմուհի Մինասեանի, Հերմինէ Սահակեանի եւ Գէորգ Յակոբեանի տասնեակ տարիներու մանկավարժական վաստակն ու նուիրումը հայ նորահաս սերունդներու դաստիարակութեան վսեմ եւ ազնիւ գործին մէջ: Այնուհետեւ առաջնորդ Յովնան Սրբազան Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմէ շնորհուած Ս. Սահակ Ս. Մեսրոպ շքանշաններով պարգեւատրեց վերոյիշեալ երեք բազմավաստակ ուսուցիչները, որոնք արժանացան հարիւրաւոր ներկայ հասարակութեան բուռն ծափողջոյններուն: Հ.Բ.Ը.Մ.ի Մանուկեան-Տէմիրճեան վարժարանի հոգաբարձութեան ատենապետ՝ պրն. Սինան Սինանեան, նոյն հաստատութեան տնօրէն Պրն. Յակոբ Յակոբեան, ընկերային գիտութիւններու բաժանմունքի վարիչ Տիկ. Ռոքսէն Պետրոսեան եւ փոխտնօրէնուհի տիկին Անահիտ Նալպանտեան-Բժշկեան՝ իրենց ելոյթներուն մէջ մեծարեալներու վաստակը գնահատելով հանդերձ, նշեցին իւրաքանչիւրին բարեմասնութիւնները, անոնց բարի տրամադրութիւններն ու անսակարկ ոգին, հմուտ մանկավարժի ներդրումներն ու հետեւողական եւ արդիւնաւէտ աշխատանքը:*

*Գերշ. Յովնան Սրբազան իր ելոյթին մէջ ընդգծեց՝ «Այսօր հպարտութեան օր է, դպրոցը մեր երեխաներուն եկեղեցին է»: Ապա շնորհաւորեց մեծարեալները, մաղթելով բազում երկար տարիներ, շարունակելու իրենց երախտաշատ գործունէութիւնը:*

*Մեծարեալներու հարազատներու կողմէ եղան սրտաբուխ խօսքեր (Նայիրի Տէրմէնճեան, Լորի Մանճիկեան եւ Տօքթ. Վաչէ Յակոբեան):*

*Մեծ պաստառի վրայ մեծարեալներու կեանքէն առնուած լուսանկարներու ներկայացումէն ետք շնորհակալական խօսքերով հանդէս եկան օրուան շքանշանակիրները՝ Տիկ. Զարմուհի Մինասեան, Տիկ. Հերմինէ Սահակեան եւ Պրն. Գէորգ Յակոբեան:*

*Հանրածանօթ «Սիրելի Ուսուցիչ» երգը մեկնաբանեց 12րդ դասարանի աշակերտուհի Անիսա Եուսէֆի, դաշնամուրի ընկերակցութեամբ օր. Արուս Անդրէասեանի:*

*Հ.Բ.Ը.Մ.ի Մելքոնեան Կրթական հաստատութեան Սանուց Միութեան անունով ատենապետ Տիար Փօլ Գուշարեան իր կազմակերպութեան անունով շնորհաւորելէ ետք օրուան մեծարեալները՝ զանոնք պարգեւատրեց յատուկ յուշատախտակներով:*

*Արժ. Տ. Յարութիւն Քհնյ. Թաշճեանի բարեմաղթութիւններով եւ «Պահպանիչ» աղօթքով վերջ գտաւ սոյն յիշարժան եւ իր տեսակին մէջ եզակի հանդիսութիւնը: Այնուհետեւ Վարժարանի ճաշասրահին մէջ տեղի ունեցած պատշաճ ընդունելութեան ընթացքին ներկաները առիթն ունեցան անձամբ շնորհաւորելու վաստակաշատ դասատուները, մաղթելով քաջառողջութիւն, երջանիկ եւ բարօր կեանք:*

*Պատիւս արժանաւորաց:*

## «ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅ ԳԵՂԱՐՈՒԵՍՏ 2013»

*Շարունակուած էջ 8-էն*

*րահին ներկայացուցիչ՝ Յովիկ Աբրահամեանը:*

*Ցուցահանդէսը մեծապէս գնահատուեցաւ ներկաներուն կողմէ, նկարչական իր բարձր մակարդակին համար: Հոս տեղին է յիշել, որ ցուցադրութեան դրուած էին աւելի քան 165 պաստառներ: Ցուցահանդէսի հասոյթը պիտի տրամադրուի Մասնաճիւղի երիտասարդական շարժումներուն:*

*Հպարտութեամբ հոս պէտք է նշել որ այս ցուցահանդէսի կապակցութեամբ հրատարակուեցաւ համապարփակ, որակաւոր եւ բարձրաճաշակ գրքոյկ մը, ուր ներկայացուած են արուեստագէտները ու անոնց գործերէն նմոյշներ: Գրքոյկին տպագրութիւնը հովանաւորուած էր խումբ մը արուեստասէր նուիրատուներու կողմէ՝ իսկ խմբագրութիւնը եւ ձեւաւորումը կատարած է Հայկ Մսրլեան:*

*Կը շնորհաւորենք կազմակերպիչ յանձնախումբի անդամները, որոնք մեծ վայելքի մը առիթը պարգեւեցին ցուցահանդէսը այցելած աւելի քան հազար արուեստասէրներու:*

*Շնորհակալութիւն այս մեծ վայելքին համար:*

*Թղթակից*

Հայ news.am

## ԳՐԱՒՈՒԱԾ ՕՐ

**Մայիս 10, 2013**

**Բենիամին Ժամկոչեանի գիրքի ներկայացում**
**Սահակեան Սանուց Միութեան կազմակերպութեամբ**
**Մանրամասնութիւնները յաջորդիւ:**

# «ԼԱՐՔ»Ի ԱՍՏՂԻԿՆԵՐՈՒ ՓԱՅԼՔԸ

*Շարունակուած էջ 8-էն*

*հիները պանծացուցին իրենց վստահուած գեղեցիկ յայտագիրը, փոխտնօրէնուհի Թագուհի Արզումանեանի հոգածութեամբ: Իր փակման պատգամին մէջ փոխտնօրէնուհին ըսաւ. «Զօրացի՛ր իմ հայ մանուկ, երակներդ լցրո՛ւ հայ մշակոյթի կենսահիւթով. հայերէն խօսի՛ր, երգի՛ր, շնչի՛ր: Քանի հայ լեզուն կայ, հայը կ՛ապրի եւ կ՛ապացուցի աշխարհին, թէ մենք գիտենք սրի տեղ գրչով պայքարել դժուարութիւնների դէմ՝ յամառութեամբ, ինչպէս Պարոյր Սեւակի բանաստեղծութիւնը՝ «Մայրենի լեզու»ն.*

«Քե՛զ, մեր հայկական եւ արամական,
Չկարողացան բեզ մեզնից խլել,
Ո՛չ խարդաւանքով արամէական
Ո՛չ բիւզանդական սիրով անազնիւ
Ո՛չ Աhրիմանի ահեղ նետերով,
Ո՛չ Մուհամեդի նմլիչ ոտերով,
Ո՛չ նշմարտութեամբ,
Ո՛չ էլ ստերով...»:



*Լոս Անճելըսի հզօր հայ համայնքին մէջ:*

*«Լարք» երաժշտանոցը արդէն իսկ յաջողած է իր սրբազան առաքելութեան մէջ: Քրեսենթա Հովիտի Հայց. Առաքելական Եկեղեցւոյ դաստիարակչական յանձնախումբը ջերմապէս կը շնորհաւորէ եւ շնորհակալութիւն կը յայտնէ տնօրէն Վաչէ Պարսումեանին, փոխտնօրէնուհի Թագուհի Արզումանեանին եւ բոլոր մասնակցողներուն, որոնք վառ կը պահեն մեր դասական երաժշտական ժառանգութիւնը, որպէս սուրբ մասունք՝ դէպի լուսաւոր ապագայ, անսասան, հաւատաւոր գնացքով:*



*Ղեւոնդ քհնյ. Քարագեանի բարեմաղթութիւններով, օրհնութիւններով եւ «Պահպանիչ»ով հանդիսութիւնը հասաւ իր աւարտին:*

*«Լարք» երաժշտական ընկերակցութիւնը հիմնուած է 1989ին, իսկ երաժշտանոցը՝ 1996ին: Անոնք նուիրուած են հայկական եւ արեւմտեան դասական երաժշտութեան, գլխաւորութեամբ բազմատաղանդ խմբավար ու երաժիշտ Վաչէ Պարսումեանի, որ հիմնադիր տնօրէնն է եւ իր աշխոյժ երաժշտական գործունէութեամբ կը կերտէ արհեստավարժ ու մասնագէտ երաժիշտներու նոր սերունդ մը,*

*Ձեռնարկը հովանաւորեց տոքթ. Զարմինէ Նազգաշեան, որուն համար շնորհակալութիւն կը յայտնենք:*

*Քրեսենթա Հովիտի Հայց. Առաքելական Եկեղեցւոյ դաստիարակչական յանձնախումբը կը հրաւիրէ շրջանի հայութիւնը ներկայ գտնուելու իր շինիչ եւ հետաքրքրական դասախօսութիւններուն եւ հանդիսութիւններուն:*

# ՈՐՍԿԱՆ ԱԽՊԵՐ

*Շարունակուած էջ 13-էն*

*բանաստեղծը.*

Սարի մարմանդ հովն է շոյում
Ճակտի փունջը մարալիդ,
Ծաղիկներն են վրան սգում,
Ազիզ բալիդ, խեղճ բալիդ:

*Աւարտւում է երգը: Ո՛չ մի ձայն, ո՛չ մի ծպտուն: Դադարել են նոյնիսկ ներքեւի յարկից եկող թեթեւ երաժշտութեան հնչիւնները: Լռութիւն է ամէնուր, լռութիւն՝ ողջ «Ինտուրիստ» հիւրանոցում: Զարենցը առանց որեւէ բան ասելու, առանց հրաժեշտի, մօտենում է դրանը եւ մեղաւոր ժպիտով շրխկացնելով դուռը դուրս է գալիս սենեակից:*

*- Երիտասարդ, ես այդպէս էլ չիմացայ անունդ, -բաւական լռութիւնից յետոյ ասաց կոմպոզիտորը:*

*- Լեւո՞ն..., լաւ, գեղեցիկ անուն է, ընդհանրապէս մե՜ծ անուն..., Լեւոն Շա՞նթ, Լեւոն Ջոհրաբեա՞ն..., հիմա ինձ լսիր: Դու մե՜ծ, շա՜տ մծ բան արիր այսօր: Ես լսեցի քո նուագը: Վստահ եմ, որ լաւ երաժիշտ ես դառնալու: Դու նուրբ հոգի ունես, գործիքի հրաշալի տեմբեր, եւ որ ամենակարեւորն է, դու այսօր ինձ ներկայացրիր ժողովրդական երաժշտութեան իսկական մի մարգարիտ: Բայց ցաւում եմ, որ այդ մեղեդին չեմ կարողանալու օգտագործել իմ «Երջանկութիւն» բալետում: Դա մի ուրախ երաժշտութեան բալետ է լինելու: Իսկ քո այդ մեղեդին՝ «Որսկան ախպերը» համապարփակ ողբերգութիւն է, ժողովրդական ողբերգութիւն: Բայց ես երբեւէ կ՚օտագործեմ այդ մեղեդին, ինչպէս տեսնում ես՝ նոյնիսկ չնոտագրեցի այն: Ես երբեք, երբեք չեմ մոռանայ այդ երգը:*

***

*- Արա՛մ, դու զբաղուած էիր, ես չուզեցի քեզ անհանգստացնել: Հիմա կարող եմ ասել: Քիչ առաջ, վերջին լուրերում յայտնեցին, որ հայկական Թամանեան զօրադունդը ճեղքել է պաշտպանութիւնը եւ մօտենում է Պեռլինի մատոյցներին:*

*- Իսկապէ՞ս, Նինա, սիրելի՜ս..., ես այդպէս էլ գիտէի, ուրիշ կերպ չէր կարող լինել, ես միշտ հաւատացել եմ մերոնց ուժին ու կարողութեանը: Արդէն կասկած չի յարուցում պատերազմի ելքը, եւ ես պիտի անմահացնեմ իմ ժողովրդին, եւ, ընդհանրապէս շատ բան կորցրած իմ հայրենակիցներին: Յիշո՞ւմ ես, սիրելիս, գրեթէ տասը տարի առաջ ես քեզ պատմել եմ Երեւանում պատահած դէպքի՝ «Որսկան ախպերի«» մասին:*

*- Ի հա՛րկէ յիշում եմ, երկար աշխատեցիր այդ երգի վրայ, բայց, ինչպէս սպասւում էր, չկարողացար օգտագործել բալետում:*

*- Այժմ եկել է առիթը, Նինա, սիրելի՜ս: Ես պիտի նոր կեանք տամ այդ երգին...: Ճիշդ է, Զարենցը չկայ, այդ հանճարեղ բանաստեղծը, բայց կայ Զարենք ծնող ժողովուրդը, կայ այն դուդուկահար երիտասարդը, որը, ինչպէս իմացայ, Հայկական ռատիոյի ամենասիրուած երաժիտշներից է: Ես նրան էլ եմ խոստացել նոր կեանքի կոչել «Որսկան ախպերը»:*

*...Պատերազմի աւարտից հագիւ մի քանի ամիս յետոյ աշխարհը հիացաւ Արամ Խաչատուրեանի նոր գործով՝ երկրորդ սիմֆոնիայով, որի երրորդ մասում կեանքի էր կոչուել Լեւոնի եւ Զարենցի սիրած «Որսկան ախպերը»՝ դէպի յաւերժութիւն գնացող հայկական ժողովրդական այդ պարզ ու անպաճոյճ երգը:*

**ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ**
**ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)**
**ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ**
**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**
**ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝**
**ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680**

# ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկաք զանոնք նուիրել «Կայծ» Երիտասարդական Միութեան գրադարանին՝ հաճեցէք կապ պահել մեզի հետ:
G.Y.O. 1060 N.ALLEN AVE. PASADENA, CA 91104

**Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին**
**T: (626) 797-7680**
**F: (626) 797-6863**
**Massis2@earthlink.net**

# GԱՐՆԱՆ ՋԷՔԻԱԹ

*Շարունակուած էջ 15-էն*

*Նրան, գարուն կը հոսի քու սրտին: Գարուն էր իջնում շինականների սրտերին, արեւային ժպիտ պոռթկում իրենց դէմքերից, գարնանային խաղաղութեան անդորր էր շէներում, յաղթանակի կարմիր լոյս վառւում լերան լանջերին:*

*Հապա՜ գարնանային գիշերը հեշտագին, մտի՛կ արա բանաստեղծ Վահան Թէքէեանին՝ ինչպէ՜ս է նա շշնչում գարնան երգը՝*

Օ՜ այս գիշերը գարնան՝
Ինչ անուշ է, ինչպէս լաւ . . .
Ինչ հեշտանքով կը սարսռան
Սիրտերն անոր պատճառաւ . .

Կարծես աստղի փշրանքներ
Կան օդին մէջը հալած,
Երկրի վրայ դրախտ մը սէր
Կարծես թափած է Աստուած...
Գարնան շունչեր կը տեսնեմ
Ձեզ թռչտող ամէն տեղ՝
Հոգիներու պէս անմեղ...
Եւ կը տեսնեմ՝ լուսանեմ,
Քեզ ալ, տղու իմ հոգիս,
Որ համբուրել կուզաս զիս...

**massispost.com**
**daily news updates**

**INVITATION FOR BIDS (IFB) AND REQUEST FOR PROPOSALS (RFP)**

The Housing Authority of the City of Los Angeles invites proposals from qualified firms interested in the following opportunities:

**IFB 7798 Microsoft Licenses**
(Issue 03/04/2013; Due 3/26/2013)
To provide Microsoft licenses/software products

**RFP 7578 WAN (Wide Area Network)**
(Issue 03/04/2013; Due 3/29/2013)
To provide WAN connectivity

Copies of the IFB and RFP may be obtained via http://www.hacla.org/ncg/ or www.hacla.org/ps respectively or call (213) 252-5405.

**3/14, 3/21/13**
**CNS-2452036#**
**MASSIS WEEKLY**

# ՍԱՐԳԻՍ ԱՐՄԱՂԱՆԵԱՆ

*Շարունակուած էջ 7-էն*

*կէտեր, կ'անցնի Ումուտում, եւ Թոսիկ Թրքական գիւղին մօտ կը միանայ Սեպուհի եւ Ս. Մուրատի ուժերուն: Թոսիկի կռիւը կը տեւէ 3 օր. Թշնամին կը պարտուի եւ կը նահանջէ (7):*

*Որպէս կամաւոր Էրզրումի ճակատը գտնուող ծանօթ կրթական մշակ Բենիամին Ժամկոչեան, Ս. Արմաղանեանի մասին կը վկայէ. «Բայց Անդրանիկ Կարին հասաւ, եւ իր ետեւէն եկան Սարգիս Արմաղանեան եւ ութսուն ձիաւորներ: Ասոնք գիշեր մը հանգիստ ըրին, բայց յաջորդ առտու Անդրանիկ առաւ իր ձիաւորները ետեւը ու փոթորիկի պէս շրջեցաւ Կարնոյ փողոցները:*

*Ութսուն ձիաւոր ոչինչ են թուղթի վրայ. սակայն ութսուն ձիաւոր ամէն ինչ են, երբ մէկ մէկու ետեւէն՝ փողոցներու մէջէն կը սուրան» (8): Բ. Ժամկոչեան կը շարունակէ. «Անդրանիկ յոյս չունէր Դաշնակցութենէն եւ ռուսահայերէն: Ուստի, աջը ղրկեց իր ձիաւորները՝ Սարգիս Արմաղանեանի հրամանատարութեամբ: Իսկ կեդրոնը՝ ինք անձամբ գնաց» (9): Բ. Ժամկոչեան անդրադառնալով Ըլգըճայի յայտնի կռիւին, կը գրէ. «Այդ օրուան կռիւներէն հետեւեալները իմացած եմ: Պ. Սարգիս Արմաղանեան, որ բանակին աջ կողմը՝ Առջեկ գիւղը կը գտնուէր, Թրքական բանակին կուրծք տալու առեն նշաւակ կը դառնայ Ըլգըճայէն արձակուած գնդակներու, եւ ճգնաժամային վայրկեաններ կ'անցընէ: Կարին գտնուողները կը պատմէին, թէ Անդրանիկ կը հրահանգէ Մուրատին՝ օգնութիւն հասցնել Արմաղանեանին, բայց Մուրատ զանազան պատրուակներով չի փութար:*

*Անդրանիկ կ'ըսէ. «Արմաղանեանը կը ճանչնամ: Ան պիտի գայ, բայց դուն վատ գործ մը ըրիր» (10): Ըլգըճայի կռիւին անդրադարձող մէկ այլ պատմագրող կը գրէ. «Արմաղանեան, որ Ըլգըճայի ճակատը կը պաշտպանէր, իր դիմացի ուժը տկար գտնելով յառաջացաւ եւ 4 Թուրք գիւղեր եւս գրաւեց, որոնք նահանջած էին իր գրոհին առաջ, հակառակ ոտքէն վիրաւորուած ըլլալուն, իր զինուորներուն եռանդը չփճացնելու համար մնաց ճակատի վրայ եւ խրախուսեց զանոնք: Երրորդ օրն էր, հակառակ իր յաջողութեանց, Կարնոյ Թնդանօթները փոխանակ թշնամւոյն վրայ արձակուելու, քանի մը հատ ռումբ արձակեցին իր զինուորներուն վրայ եւ զարնուեցան 3-4 հոգի: Արմաղանեան առանց յուսահատելու քանի մը ձիաւոր ղրկեց Կարին, որոնք Թնդանօթի դիրքը բարձրացան եւ ստուգեցին, որ ոչ ոք կայ: Թնդանօթի բանալին իսկ կորսնցուցած եւ փախած են դաւադիրները» (11):*

*Էրզրումը պաշտպանելու եւ Թրքական յառաջխաղացքը հոն կասեցնելու զօր. Անդրանիկի բոլոր ճիգերը կ'անցնին ապարդիւն: Էրզրում կ'իյնայ՝ յառաջ բերելով կռուող ուժերու եւ ժողովուրդի քաոսային, անկազմակերպ նահանջ մը: Այդ պահուն, Ս. Արմաղանեան կը գտնուէր շրջակայ գիւղերէն մէկը, ժողովուրդին գաղթը կազմակերպելու համար: »Գտնուեցան գիւղեր, որոնք դիւցազնաբար ճեղքեցին Թուրք շղթան ու հասան կայարան:*

*Այս վերջիններէն էր Սարգիս Արմաղանեան, որ առանց Կարինէն լուր ունենալու, կրցած էր իր քաջերուն հետ հասնիլ հեռացողներուն, ուրախացնելով Անդրանիկը: Զանոնք տեսնելով, Անդրանիկ հրճուանքով ու հանգիստ սրտով կը հեռանայ» (12):*

*Ս. Արմաղանեան իր կռուողներով կը միանայ զօր. Անդրանիկին եւ միասին կը բարձրանան Լոռիի բարձրունքները: Այս միացումը պատահական չէր, ոչ ալ իրավիճակին պարտադրանքը: Դեռ շատ առաջ, երբ Անդրանիկ Էրզրումի պաշտպանութեան համար Հայաստանի Երկրապահ Զօրամասը կը կազմէր եւ այդ ճամբուն վրայ բազմապիսի արհեստական խոչընդոտներ կը դիմագրաւէր, Կարս գտնուող Ս. Արմաղանեան նամակով մը իր հաւատարմութիւնը կը յայտնէ Զօրավարին, գրելով. «Նորին Մեծութիւն, ներկայ դրութեամբ յայտնում եմ Ձերդ գերազանցութեան, որ այստեղ՝ Ղարսում Ձեր տիվիզիի անուան շուրջ հաւաքուած պատրաստ զինուորներ երկու հարիւր յիսուն (250) ձիաւոր եւ չորս հարիւր (400) հետեւակ կան:*

*Բացի սրանից կան պատրաստի Մշեցի Մուրատի չորս հարիւր (400) հետեւակ զինուորները, որ պատկանում է Տելի Ղազարին, նոյնպէս տրամադիր են մեզ միանալու, թէեւ նրանց մի քանի անգամ սպառնացել են զինաթափ անել, բայց նրանք հետեւեալ պատասխանը տուած են. «Մենք գեներալ Անդրանիկից բացի ոչ ոքի չենք ուզում ճանաչել»: Կան նաեւ բաւական թուով տաճկահայ զինուորներ, որոնք նոյնպէս պիտի ընդունուին Ձեր տիվիզիի մէջ, համաձայն Ձեր ինձ արած կարգադրութեան, որով լիայոյս եմ, թէ շուտով հնարաւոր պիտի լինի լրացնել պէտք եղած թիւը» (13):*

*Անդրանիկին միանալէն ետք, Ս. Արմաղանեան կը դառնայ անոր վստահելի զօրականներէն մէկը: Անդրանիկի սեբաստացի կամաւորներէն Յարութիւն Ծօպուլեան կը գրէ. «Անդրանիկ, սեբաստացի կամաւորներուս հանդէպ մեծ համարում ունէր, որպէս հաւատարիմ եւ նուիրուած հայրենակիցների: Ինձ հետ էին մօտաւորապէս հարիւր սեբաստացի կամաւորներ, որոնք այժմ յիշում եմ Փեհլիւանեան Յարութիւնը (Յարութջան կոչուած), Կէտիկեան Միրիճանը, Կրտոտեան Գէորգը, Պաճագեան Երուանդը, Պէմէզեան Յակոբը, Օտապաշեան Տիգրանը, Բզվզենց Մեսրոպը, Արմաղանեան Սարգիսը (Մուըզ), որ Անդրանիկի օգնականն էր: Անոր ղեկավարութեամբ սեբաստացի շուրջ հարիւր կամաւորներ Անդրանիկի վստահելի թիկնապահներն էին: Կռուի ամենավտանգաւոր կացութիւնների ժամանակ Անդրանիկ շրջապատուած էր իր այդ վստահելի հարիւրակով: Այսպէս, օրինակ, 1918 թ. Ջալալօղլիի ճակատամարտի ժամանակ, Թրքական զօրագնդի մը դէմ, որ Ալեքսանդրապոլը գրաւելուց յետոյ, մեզ կը հետապնդէր, եւ որը վերջ գտաւ մեր ջախջախիչ յաղթանակով (14):*

*Անդրանիկ կը յղանայ Նախիջեւանի վրայով Պարսկաստան երթալու եւ անգլիական բանակին միանալու ծրագիրը: Ս. Արմաղանեան տարակարծիք կ'ըլլայ եւ կը նախընտրէ Պաքու՝ Ստեփան Շահումեանին օգնութեան հասնելու գաղափարը: Իրարմէ կը բաժնուին: Անդրանիկ Պարսկաստան չի հասնիր եւ Նախիջեւանէն ետք կ'ուղղուի դէպի Զանգեզուր-Ղարաբաղ: Իսկ Պաքուն՝ պաշտպանական ուժերու անբաւարարութեան պատճառով կը գրաւուի Թրքական բանակին կողմէ: 1919-ին Ս. Արմաղանեան կը մեկնի Կիլիկիա ու կը հաստատուի Ատանա:*

*1919 Հոկտեմբերէն սկսեալ, Ֆրանսայի հոգատար իշխանութեան ենթակայ հայաշատ քաղաքներուն եւ գիւղերուն վիճակը երթալով կը վատթարանայ չէթէեական կամ միլլի շարժման (Մուսթաֆա Քեմալի կողմնակիցներ) յարձակումներուն պատճառով:*

*1920 Փետրուարէն, Հաճըն կը պաշարուի եւ կը դիմէ հերոսական ինքնապաշտպանութեան: Հաճնոյ օգնութեան հասնելու համար Ատանայի մէջ տեղի կ'ունենայ կամաւորագրութիւն:*

*«Հաճընէն ընկ. Սարգիս Ճէպէճեան նամակով ու հեռագրով խնդրած ու պահանջած էր, որ անպայման օգնական ուժերու հրամանատար կարգեն ընկ. Ս. Արմաղանեանը» (15): Հաճնոյ ինքնապաշտպանութեան ընդհանուր հրամանատարին այս պնդումը անտեղի չէր: Ս. Ճէպէճեան անձնապէս կը ճանչնար Ս. Արմաղանեանը եւ ծանօթ էր անոր զինուորական կարողութիւններուն, տակաւին կովկասեան ռազմաճակատէն, երբ անոնք միասնաբար կը կռուէին Անդրանիկի բանակին մէջ: Նոյն փափաքը կը յայտնէ նաեւ Հաճնոյ քաղաքապետ Կարապետ Ջալեան, որ Ս. Արմաղանեանին անձնապէս կը հեռագրէ. «Անմիջապէս մեծ ուժով մեկնեցէք: Պ. Պրեմոնին (Կիլիկիոյ մէջ Ֆրանսայի զինուորական կառավարիչ - Ե.Ճ.) հեռագրեցի մեծ քանակութեամբ ռազմանիւթ պիտի տայ: Միասին բերէք: Ուշանալը դաւաճանութիւն է: Սիսէն լուր տուէք, ձեր ճամբան մենք կ'ապահովենք« (16):*

*Մարտ 16-ին, Ազգ. Առաջնորդարանի մէջ տեղի ունեցած համագումային ժողովի մը ընթացքին, որուն կը մասնակցին Առաջնորդ Ասլանեան վրդ., Ազգ. Պատուիրակութեան լիազօր Միհրան Տամատեան, Ազգ. Միութեան ու Քաղաքական ժողովի դիւանները, միջկուսակցական մարմինը եւ ներկայացուցիչներ ՍԴՀԿ, ՀՅԴ եւ ՌԱԿ կուսակցութիւններէն կը քննարկուի արշաւախումբի հրամանատարի նշանակման հարցը: «Թեր ու դէմ կարծիքներէ յետոյ միաձայնութեամբ կ'ընտրուի ընկ. Սարգիս Արմաղանեանը եւ պատուիրակութիւն մը կը ղրկուի հրամանատարը համագումարին հրաւիրելու: ... Արմաղանեանին հրամանատար ընտրուելու լուրը աւետիսի մը նման տարածուած էր ամէն կողմ եւ շատեր Հաճընի փրկութիւնը ապահովուած կը նկատէին: Միայն ընդհանուր հրամանատարն էր, որ կասկածով կը նայէր գործին« (17):*

*(Շարունակելի)*

********

**ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ**

1) Տիգրան Գազանճեանի նամակը ՍԴՀԿ Պաքուի վարչութեան, Կարս, 1915 Փետր. 5: Հ.Ա.Ա., կրկնօրինակը հնչ. արխիւ:

2) Հայկ Բժշկեանի նամակը Մելքոնին, Կարս: Հ.Ա.Ա., կրկնօրինակը հնչ. արխիւ:

3) «Քառասնամեակ Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան», Փարիզ, 1930, էջ 152:

4) Մ. Թորլաքեան, «Օրերուս Հետ», Թեհրան, 1982, էջ 314:

5) Սեպուհ, «Էջեր Իմ Յուշերէն», Ա. հտ., Պոսթըն, 1925, էջ 444-445:

6) Նոյն, էջ 498:

7) Սեպուհ, «Էջեր Իմ Յուշերէն», Բ. հտ., Պոսթըն, 1929, էջ 58-59:

8) Արի Թոփուզխանեան, «Յուշարձան Ուսուցչապետ Բենիամին Ժամկոչեանի», Երեւան, 2010, էջ 238:

9) Նոյն, էջ 239:

10) Նոյն, էջ 242:

11) Մ. Աւետիսեան, «Հայ Ազատագրական Ազգային Յիսնամեայ 1870-1920 Յուշամատեան եւ Զօր. Անդրանիկ», Փարիզ, 1954, էջ 183:

12) Ա. Թոփուզխանեան, ... էջ 249-250:

13) Հրաչիկ Սիմոնեան, «Անդրանիկի ժամանակը», Բ. հտ., Երեւան, 1996, էջ 90:

14) Առաքել Պատրիկ, «Պատմագիրք Յուշամատեան Սեբաստիոյ եւ աւառի Հայութեան», Ա. հտ., Պէյրութ, 1974, էջ 784-786:

15) Անդրանիկ Կէնճեան, «Սոց. Դեմ. Հնչակեան Կուսակցութիւնը եւ Կիլիկեան Ինքնավարութեան Ակթը», Պէյրութ, 1958, թերթօն «Արարատ»ի, էջ 67:

16) Նոյն, էջ 49:

17) Նոյն, էջ 68-69:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ**

---

**Yes, I wish to subscribe to Massis Weekly**

**Enclosed a check for (one year)**

*** $50,00 * $100,00 (first class) for USA**

**$ 100,00 (Air Mail) for Canada.**

**$ 250,00 (Air Mail) Overseas.**

**Name:** ----------------------------------------

**Address:** ----------------------------------------

**City:** --------- **State:**--------- **Zip Code:**------

**Country:** -------------

**Tel :**----------------------- **Fax :** -------------------------